

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐԵՆ ՀՈՎԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԻՄՆԱԽԱԴԻՐՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

**ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային
հարաբերոլթյ ու ններ» մասնագիտոլթյ ամբ քաղաքական
գիտոլթյ ու նների թեկնածուի գիտական աատիճանի հայ ցման համար**

**Գիտական ղեկավար՝
քաղ. գիտ դոկտոր
Տիգրան Տոնիկի Քոչարյան**

ԵՐԵՎԱՆ 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ

ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆ ԸՆԴԳՐԿՈՂ ՈԼՈՐՏՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

- 1.1. Հայ աստանի Հանրապետության պաշտպանական բարեփոխումների
ինստիտուցիոնալ սցեման գործընթացը -----
-----16
- 1.2. Պաշտպանության ոլորտի բարեփոխումների նախաձեռնումը,
անցկացման փուլ էրը և արդյ ոլ նախատեսվող ան հիմնախնդիրը -----
-----31
- 1.3. Ձինված ուժերի բարեփոխումները՝ որպես Հայ աստանի
Հանրապետության անվտանգության երաշխիք -----
-----43

ԳԼՈՒԽ2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

- 2.1. Պաշտպանության ոլորտի կառավարման առանձնահատկությունները-
-----54
- 2.2. Պաշտպանության համակարգի կազմակերպումը խորհրդարանական
հանրապետության մոդել ում (համեմատական վերլ ու ծոություն ու ն)-----
-----75
- 2.3. Հայ աստանի Հանրապետության պաշտպանության ոլորտի իրավական
կարգավորումը և օրենսդրական բարեփոխումները-----
-----87

ԳԼՈՒԽ3. ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՅԵՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԻ

ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԽԱԴԻՐԸ

- 3.1. Միջազգային ու տարածաշրջանային արդի ռազմաքաղաքական
զարգացումները և Հայ աստանի Հանրապետության անվտանգային
միջավայրը-----104
- 3.2. Պաշտպանության ռազմավարական վերանայումը որպես
պաշտպանական բարեփոխումների հայեցակարգային բաղադրիչ -----
-----120
- ԵԶՐԱԿԱՏՈՒԹՅՈՒՆ -----141
- ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ-----149

ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ

Ասե՛նախոսու թյան թեմայի արդիականությունը:

20-րդ դարի վերջին՝ Խորհրդային Միության փլուզումից հետո, իր անկախությունը վերականգնած Հայաստանի Հանրապետության մերձատարածքում երևան եկան անվտանգության համար ներտարածաշրջանային և արտատարածաշրջանային մարտահրավերներ: Ներտարածաշրջանային մարտահրավերներն առավել ապաստան մանավորված են տարածաշրջանում առկա ազգամիջյան հակամարտություններով, իսկ արտատարածաշրջանային մարտահրավերները այն արտաքին ուժերի գործունեության հետևանք են, որոնք փորձում են տարբեր ձևերով ու միջոցներով վերահսկել կամ իրենց շահերին համապատասխանեցնել տարածաշրջանում առկա ռազմաքաղաքական իրավիճակը: Բացի այդ, տարածաշրջանի որոշ երկրների գործելակերպում նկատելի է հարցերը ուժի կիրառման կամ դրակիրառման սպառնալիքի միջոցով լուծման անթաքույց ձգտում:

Տարածաշրջանային սպառնալիքները և դրանց չեզոքացումը կազմում են Հարավային Կովկասի անվտանգության հիմնական չափորոշիչները: Որպես այդպիսի սպառնալիքներ կարելի է դիտել ինչպես տարածաշրջանային պետությունների միջև առկա հակասությունները, անվտանգության բնագավառում նրանց որդեգրած քաղաքականության որոշակի տարբերությունները, այնպես էլ այստեղ առկամի շարք հակամարտությունները:

Հայաստանի համար մտահոգության հիմնական աղբյուրը Թուրքիա-Ադրբեջան ռազմավարական դաշինքն է, որով անհանդուրժող և ոչ կառուցողական քաղաքականություն է իրականացվում Հայաստանի ազգային անվտանգության շահերի նկատմամբ: Ադրբեջանի կողմից առկա է Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նկատմամբ անմիջական ռազմական սպառնալիք, որի վկայություններինց են այդ երկրի գերռազմականացումը, վարվող հայատյաց քաղաքականությունը, ինչպես նաև հակամարտության բանակցային գործընթացում որդեգրված մերժողական

դիրքորոշումը: Դրա վառ ապացույցը հանդիսացավ 2016 թվականին Ադրբեջանի կողմից սանձազերծված «քառօրյա պատերազմը», որի նպատակը, ըստ ադրբեջանական ծրագրերի, գինված ճանապարհով Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծումն էր¹:

Նշված իրողությունը ևս փաստում է, որ չնայած միջազգային հանրության և, հատկապես ԵԱՀԿ Մինսկի խմբի շարունակական ջանքերին և Հայաստանի կառուցողական դիրքորոշմանը, Ադրբեջանը հակված է ընտրել հակամարտության ուժային լուծման տարբերակը: Ավելին, պատերազմ սկսելու Ադրբեջանի վճռականությունը տեսանելի է ոչ միայն քաղաքական հայտարարությունների, այլև ռազմական ուժորոշման գործնական քայլերի լույսի ներքո: Այդ պետությունը ձեռք է բերում մեծ քանակությամբ հարձակողական, հատկապես՝ հեռահար սպառազինություն, հարձակողական բնույթի են նրանց գինված ուժերի պատրաստության և կիրառման պլանները: Հիմնական շեշտը դրվում է հրթիռահրետանային միջոցների, հարվածային ուղղաթիռների, զրահատանկային տեխնիկայի, ինչպես նաև Կասպից ծովում ծովեզրյա պաշտպանության միջոցների ձեռքբերման և արդիականացման վրա: Ուժերի շփման գծում դիպուկահար կրակոցները և դիվերսիոն-հետախուզական խմբերի գործողությունները կրում են դիտավորյալ ու պլանավորված բնույթ: Ադրբեջանի վարած տեղեկատվական պատերազմի շրջանակներում պետական մակարդակով և բոլոր հարթակներում առաջ է մղվում հակահայկական քարոզչությունը՝ փաստերի խեղաթյուրմամբ հայկական կողմին ներկայացնելով որպես ագրեսիվ կողմ և տարածաշրջանային կայունության, համագործակցության ու զարգացման խոչընդոտ: Ադրբեջանի համար ամենաեական զսպող գործոնն է շարունակում մնալ հայկական գինված ուժերի մարտունակությունը, որը թույլ է տալիս շփման գծում ադրբեջանական կողմի բոլոր սարանքներն արժանացնել համարժեք պատասխանի:

¹ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյան. Քառօրյա պատերազմից հետո տրամաբանական չէ խոսել բանակցությունների մասին, ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հարցազրույցը Bloomberg գործակալությանը, 25.01.2016թ., <http://www.panorama.am/am/news/2016/04/25/Սերժ-Սարգսյան-Bloomberg/1568915>

ՀՀ գինված ուժերի հիմնական խնդիրը պատերազմի վտանգի չեզոքացումն է, որը իրականացվում է միջազգային անվտանգության կազմակերպության ունենրի ներգրավվածությամբ, ուժերի հավասարակշռության պահպանման և դրանով իսկ՝ խաղաղության պարտադրման միջոցով: Խաղաղության պարտադրման գործում կարելի է փաստել, որ մինչ օրս հիմնարար հաջողություններ են ձեռք բերվել, սակայն պետք է նաև նշել, որ Հարավկովկասյան տարածաշրջանային աշխարհաքաղաքական իրավիճակը և հարևան երկրի հետ ստեղծված հավասարակշռության պահպանումը, առավել ևս՝ հզորության նժարը դեպի հայկական կողմ թեքելը մեծ աշխատանք է պահանջում: ՀՀ անվտանգության երաշխավորման ռազմաքաղաքական հենքի ու պաշտպանության ապահովումը կարող է իրականացվել բացառապես գինված ուժերի շարունակական զարգացման և վերջինիս կարողությունների ընդլայնման միջոցով: ՀՀ գինված ուժերի զարգացմանը նոր թափ ու հստակություն հաղորդեց վերջին տարիների ընթացքում իրականացված բազմաթիվ և բազմապիսի ծրագրեր և համալիր միջոցառումներ, մասնավորապես, «Պաշտպանության ռազմավարական վերանայումը», որի արդյունքում մշակվեց և արդյունքներն էլ հավաստում են, որ հաջողությամբ իրագործվում է ՀՀ գինված ուժերի զարգացման պլանը (մասնագետների կողմից գիտագործնական հիմնավորմամբ կանխատեսվում է նաև ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության ճշգրտման գործընթաց²): Պաշտպանության ոլորտի ընթացիկ և հեռանկարային զարգացման ծրագրերն ուղղված են բանակի մարտական կարողությունների զգալի ավելացմանը՝ միտված լինելով հավանական հակառակորդին ցանկացած պահի արժանի հակահարված տալ ու պատրաստակամությունը:

Պաշտպանական բարեփոխումների գործընթացում ծառացող հիմնախնդիրները չունեն պատրաստի լուծումներ. դրանք գտնել ու համար անհրաժեշտ է համակարգել կառավարման բոլոր օղակների աշխատանքը, ցուցաբերել ռազմական արվեստ և արհեստավարժություն:

² Զոթանջյան Յ.Ս., ՀՀ ռազմավարական պաշտպանական-անվտանգային գնահատումների և փաստաթղթերի մշակումը որպես Պաշտպանության ռազմավարական վերանայման տեսամեթոդաբանական և գիտափորձաքննական հիմք // ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվան ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2015, հմ. 3 (85), էջ 15

ՀՀ զինված ուժերի զարգացումը նպատակաուղղված է պաշտպանության համակարգի կազմն ու կառուցվածքը կատարելագործելուն, զորքերը մարտական պատրաստականության վիճակում պահելուն, մարտական կարողություններն ավելացնելուն, կառավարման համակարգը, կադրային ու սոցիալական քաղաքականությունը, ինչպես նաև անձնակազմի ուսուցման ու վերապատրաստման առավել նպատակային ձևերը և մեթոդները կատարելագործելուն: ՀՀ ռազմաքաղաքական հիմնախնդիրների համատեքստում պաշտպանական բարեփոխումների ամբողջական և գիտական վերլուծության անհրաժեշտությունը պայմանավորում է թեկնածուական ատենախոսության թեմայի ընտրությունն ու արդիականությունը:

Ատենախոսության թեմայի մշակվածության աստիճանը:

Հայաստանի Հանրապետության շուրջ ձևավորված աշխարհաքաղաքական իրողությունները և անվտանգության համակարգի երաշխավորման արդի հրամայականը պահանջում է պաշտպանության բնագավառի հիմնախնդիրների ամբողջական ու հետևողական վերլուծություն: Պետության գործունեության մեջ իր հատուկ կարևորություն ամբողջ առանձնանում է պաշտպանության ուղղությունը, ինչն էլ իր հերթին արդիական է դարձնում այդ ոլորտի հետազոտական և գիտավերլուծական աշխատանքների իրականացումը:

Պետք է փաստել, որ անցած տարիների ընթացքում բազմաթիվ ու տարբեր մակարդակներով ուսումնասիրություններ են իրականացվել ՀՀ պաշտպանության կազմակերպման ու զինված ուժերի գործառնության հիմնահարցերի վերաբերյալ: Միանշանակ, ընդգծվում են ոլորտի համար հիմքային նշանակություն ունեցող գիտահետազոտական հաստատությունների և առանձին մասնագետների աշխատությունները, որոնք կազմավորել են երկրի ռազմական անվտանգության համակարգի գիտատեսական հիմքը՝ դրանով իսկ հիմնարար հարթակ ստեղծելով ոլորտի գործնական զարգացման և դիտարկվող բացթողումների ու անճշտությունների վերացման համար: Մասնավորապես, առանձնանում է ՀՀ պաշտպանության նախարարության Դրաստամատ Կանայանի անվան Ազգային ռազմավարական

հետազոտող թյուր նկերի ինստիտուտի (որը ներկայումս կերպարվում է Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի) և այդ հաստատության ստեղծման նախաձեռնող ու հետագա զարգացումների պատասխանատու, վաստակաշատ պրոֆեսոր, գեներալ-լեյտենանտ Յայկ Քոթանջյանի կողմից ստեղծված գիտահետազոտական բազան³, որի առկայությունը պայմաններում առավել դյուրին է դառնում պաշտպանության համակարգի քաղաքական-իրավական գործունեության շրջանակներում առանձին ուղղությունների խորացված ուսումնասիրությունը և հիմնախնդիրների գիտատեսական հենքով վերհանումը:

Ատենախոսության համար առանձնացված վերլուծական հիմք են հանդիսացել ՀՀ պաշտպանության նախարարության ԱՌՀԻ-ում հրատարակվող «Յայկական բանակ» ռազմագիտական հանդեսի՝ տարբեր տարիների համարներում տեղ գտած հրատարակումները: Մասնավորապես, «Յայկական բանակ» ռազմագիտական հանդեսի առանձին համարներ վերաբերում են ՀՀ ռազմական անվտանգության երաշխավորման ու պաշտպանության բնագավառի առանձնացված հիմնահարցերի ուսումնասիրությանը, որի միջոցով ապահովել ենք ատենախոսության համար առավել հիմնարար վերլուծության հիմք՝ հասնելու դրված նպատակին ու խնդիրներին (օրինակ, «Յայկաստանի Հանրապետության պաշտպանական բարեփոխումներ», 2007, հմ. 1, «Յայկաստանի Հանրապետության պաշտպանական բարեփոխումներ. իրավական առումներ», 2008թ., հմ. 2-3 (56-57), «Յայկաստանի Հանրապետության պաշտպանական բարեփոխումներ. մարտական ոգի և վարպետություն», 2009, հմ. 1-2 (59-60), «Պաշտպանական բարեփոխումներ. կրթական ոլորտի կատարելագործում», 2010, հմ. 1 (63), «Կադրային քաղաքականության և ռազմական կրթության կատարելագործում», 2012, հմ. 3 (73), «Պաշտպանության ռազմավարական վերանայում», 2015թ., հմ. 3 (85), «Պաշտպանական համակարգը խորհրդարանական կառավարման

³ ՀՀ պաշտպանական-անվտանգային համակարգի բարեփոխման ուղենիշները, Եր., ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվան ԱՌՀԻ, 2013, Մաս 1, Մաս 2, Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Յայկաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները, Եր., ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ, 2010, Քոթանջյան Հ.Ս., Անվտանգության քաղաքագիտական պրոբլեմներ, ԽՍՀՄ վերականգնում-Պարաբաղ, Յայկաստան, Անդրկովկաս-Աֆղանստան, Երևան, 2009 էջ և այլն:

պայ ման ներում», 2016թ., հմ. 2 (88)⁴ և այլն), ինչպես նաև որպես ապագա ՊԱՀՀ-ի նորամուծական հետազոտական գործիք 2007թ. հիմնված «Աշխատանքային տեղեր» գիտակիր առական հավելվածը («ՀՀ ազգային անվտանգության նախնականության մշակման մեթոդաբանության վերաբերյալ», 2007, հմ. 1 (1), «ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի կազմակերպվածքը և գործունեության հիմքերը», Materials of the international strategic policy forum “Regional Security Dynamics In The South Caucasus”, 2013, հատուկ թողարկում, 2015, հմ. 3 (35)⁵:

Ուսումնասիրվել են նաև անվտանգության, նախնական անվտանգության, երկրի պաշտպանության և նախնական քաղաքականության հիմնահարցերի վերաբերյալ նախնական դեկլարացիան պաշտոնական գնահատականներն ու

⁴ Բոթանջյան Յ.Ս., Մարտիրոսով Լ.Ա., Մարտիրոսյան Տ.Ռ., Չիլի ինգարյան Դ.Ս., ՀՀ պաշտպանական դոկտրինի մշակման որոշ հարցեր // ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» (այսուհետ՝ նաև «Հայկական բանակ») նախնական հանդես, 2007, հմ. 1 (51), Նախարարյան Ա.Ս., Հայաստանի Հանրապետության պաշտպանական ուժերի օրենսդրական բարեփոխումների հիմնական ուղղությունները բանակայինության արդի փուլում // «Հայկական բանակ» նախնական հանդես, 2008, հմ. 2-3 (56-57), Բոթանջյան Յ.Ս., Հայաստանի Հանրապետությունում գինեկորական ծառայության կազմակերպչական ապահովումը // «Հայկական բանակ» նախնական հանդես, 2008, հմ. 2-3 (56-57), Բոթանջյան Յ.Ս., Չիլի ինգարյան Դ.Ս., Ավետիսյան Վ.Պ., Մինասյան Ա.Ա., Պաշտպանական քաղաքականությունն հասկացություններ՝ որպես Հայաստանում պաշտպանական բարեփոխումների իրականացման տեսական-մեթոդաբանական գործիք // «Հայկական բանակ» նախնական հանդես, 2009, հմ. 1-2 (59-60), Բոթանջյան Յ.Ս., Հայաստանի պաշտպանության գիտակրթական համակարգի բարձրագույն բաղադրատարրը. Ազգային նախնական հետազոտություններն ինստիտուտի փուլային կերպափոխումը Պաշտպանական ազգային համալսարանի // «Հայկական բանակ» նախնական հանդես, 2010, հմ. 1 (63), Օհանյան Ս.Ս., Ռազմական կրթության համակարգի զարգացումը՝ որպես ՀՀ պաշտպանական համակարգի արդյունավետության մեծացման գործոն // «Հայկական բանակ» նախնական հանդես, 2012, հմ. 3 (73), Բոթանջյան Յ.Ս., ՀՀ նախնական պաշտպանական-անվտանգային գնահատումների և փաստաթղթերի մշակումը որպես Պաշտպանության նախնական վերանայման տեսամեթոդաբանական և գիտափորձաքննական հիմք // «Հայկական բանակ» նախնական հանդես, 2015, հմ. 3 (85), Տոնոյան Դ.Է., ՀՀ պաշտպանության նախնական վերանայման սզկբունքներն ու մեթոդները // «Հայկական բանակ» նախնական հանդես, 2015, հմ. 3 (85), Բոթանջյան Յ.Ս., Խորհրդարանական հանրապետության անվտանգային-պաշտպանական համակարգը. Իսրայելի և Վրաստանի դասերի նախնական քաղաքագիտական իմաստավորում // ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» նախնական հանդեսի աշխատանքային տեղեր, 2016, հմ. 2 (88) և այլն:

⁵ Բոթանջյան Յ.Ս., ՀՀ ազգային անվտանգության նախնական միջգերատեսչական մշակման մեթոդաբանության մասին // «Հայկական բանակ» նախնական հանդեսի աշխատանքային տեղեր, 2007, հմ. 1 (1), Մարգարյան Վ.Հ., Աթանեսյան Ա.Վ., Ռազմական պաշտպանական-անվտանգային կրթության ազգային ինստիտուտը՝ որպես ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի գիտակրթական բաղադրիչ // «Հայկական բանակ» նախնական հանդեսի աշխատանքային տեղեր, 2015, հմ. 3 (35), Neil Macfarlane, Georgia in the Caucasus, Materials of the international strategic policy forum “Regional Security Dynamics In The South Caucasus”, 29-30 November, 2012, Yerevan // «Հայկական բանակ» նախնական հանդեսի աշխատանքային տեղեր, 2013, հատ. թող.:

դիրքորոշումները⁶, ինչպես նաև հայ և արտասահմանյան մասնագետների աշխատությանը ունենեք, փորձագետների ու վերլուծաբանների տեսակետներ⁷:

Հետազոտությանը հիմնվել է քննարկվող հիմնախնդիրների կարգավորման քաղաքական-իրավական փաստաթղթային ու օրենսդրական բազայի, ինչպես նաև միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների ու նորմերի, այլ փաստաթղթերի՝ հռչակագրերի, կոնվենցիաների, պայմանագրերի, համաձայնարների վերլուծության վրա⁸: Ուսումնասիրվել են նաև ՀՀ պաշտպանության նախարարության

⁶ ՀՀ նախագահ Ս. Սարգսյան, Կայուն կառավարումն առաջնային է, և այդ կառավարումը պետք է լինի ուղղաձիգ, 03.12.2015թ., <http://armedia.am/arm/news/27178/kayunkaravarum-n-arajnayin-e-ev-ayd-karavarumy-petq-e-lini-uxxadzig-serzh-sargsyan.html>, ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարին կից կոլեգիայի և հայկական բանակի 23-րդ տարեդարձին նվիրված նիստին, <http://www.president.am/hy/press-release/item/2015/01/26/President-Serzh-Sargsyan-meeting-in-the-Ministry-of-Defence/>, ՀՀ նախագահ Ս. Սարգսյան. Քառօրյա պատերազմից հետո տրամաբանական չէ խոսել բանակցությանը ունենեքի մասին, ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի հարցազրույցը Bloomberg գործակալությանը, 25.01.2016թ., <http://www.panorama.am/am/news/2016/04/25/Սերժ-Սարգսյան-Bloomberg/1568915>, ՀՀ պաշտպանության նախարար Ս.Օհանյանի ուղերձը ՀՀ պաշտպանության ռազմավարական վերանայման վերաբերյալ, <http://www.mil.am/media/2015/07/830.pdf>, Օհանյան Ս., ՀՀ ՇՈՒ զարգացման 2011-2015թթ. միջնաժամկետ պլանը երաշխավորում է ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության հիման վրա պաշտպանության կառավարումը, <http://armenpress.am/arm/news/659760/s-ohanyan-hh-zu-zargacman-2011-2015tt-mijnazhamket-plany.html> և այլն:

⁷ Միևնաչյան Սերգեյ, «Վրաստանը կամուրջ է դարձել նաև Հայաստանի և ԵՏՄ-ի համար», 20.06.2015թ., www.aravot.am/2015/06/20/583952/, Ղևոնդյան Ա., Հարավային Կովկասը անվտանգության փորձաքարերի նոր շրջան է մտնում, 08.01.2016թ., <http://www.ankakh.com/article/30937/hv-kvovkase-anvtanguthyan-pvordzaqaryeri-nvor-shrdjan-e-mtnum>, Актуальные задачи развития Вооруженных Сил РФ, 08.11.2014, http://shtab.su/konspekt/ogp/aktualnue_zadachi_razvitiya_vooruzhennuh_sil_rossiyskoy_federacii.html; Арбатов А.Г., «Военная реформа», <http://www.nypl.org/research/chss/subguides>; Военная реформа: на пути к новому облику Российской Армии, Аналитический доклад международного дискуссионного клуба «Валдай», 19 Июль, 2012, М., http://vid-1.rian.ru/ig/valdai/Military_reform_rus.pdf; Глухов Е.А., Коллегиальные органы управления в военных организациях: некоторые проблемы их статуса // Право в Вооруженных Силах, военно-правовое обозрение, Вып. 4, 2013; Кирилов И.В., Военная политика, военно-политические процессы и проблемные аспекты в системе обеспечения военной безопасности в современной России, Дисс. канд.пол.наук, Н.Новгород, 2015; Останков В.И., Военная безопасность России в начале 21-ого столетия, М., 2007; Структура, вооружение и военная техника ВС РФ: Под ред. В.И. Александрова, А.М. Кабаченко, В.В. Куликова и др.; М.: 2015; Фатеев К.В., Правовое регулирование обеспечения военной безопасности РФ. Дисс.докт. юрид.наук. М., 2005; Samuel P.Huntington, The Soldier and the State: The Theory and Politics of Civil-Military Relations /Cambridge: Harvard University Press, 1957/ և այլն:

⁸ Անձի և քաղաքացու իրավունքների հռչակագիրը (ընդունվել է 1789թ. օգոստոսի 26-ին), Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (ընդունվել և հռչակվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 10.12.1948թ. թիվ 217-Ա բանաձևի համաձայն), Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիա, ընդունված 1950թ., ՀՀ ՊՏ 17/2002, 05.06.2002, ՀՀ Սահմանադրություն և (փոփոխություններով), ՀՀ ՊՏ 2005 (հատ. թող.), 05.12.2005, 2015թ. ՀՀ Սահմանադրության փոփոխություններ, ՀՀ ՊՏ հատուկ թողարկում/2015, 21.12.2015թ., «Հիմնադրություն մասին» ՀՀ օրենքը, ՀՀ ՊՏ 1998/26, 16.10.1998, «Հիմնվորական ծառայություն և անցնելու մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2002/26, 19.07.2002, «ՀՀ զինված ուժերի կարգապահական

հայ եղակարգային փաստաթղթերը, արտասահմանյան երկրների պաշտպանության ոլորտը և ռազմական քաղաքականությանը կանոնակարգող նորմատիվ իրավական ակտերը⁹:

Նշված աշխատությանը ներկայումս այլ աղբյուրագիտական հիմքում ներկայացվում են ատենախոսության թեմային վերաբերող ընդհանուր ուսումնասիրությանը ներ, տրվում են առանձին վերլուծականներ ու նկարագրությանը ներ, որոնք հիմնարար նշանակությանը են ունեցել պաշտպանության ոլորտի բարեփոխումների հիմնախնդիրներին վերաբերող համապարփակ հետազոտության իրականացնելու համար: Նման ծավալ ուն սկզբնաղբյուրների ու մասնագիտական գրականության ամբողջական վերլուծության արդյունքում հնարավոր դարձավ գիտականորեն հիմնավորված եզրահանգումներ կատարել ու նաև որոշ առաջարկությանը ներկայացնել:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակն է հետազոտել ՀՀ պաշտպանության ոլորտի բարեփոխումների էությանը, նպատակներն ու նշանակությանը ռազմաքաղաքական հիմնախնդիրների կարգավորման գործընթացում, գիտավերլուծական դիտանկյունից գնահատել բարեփոխումների արդյունավետությանը և ազդեցությանը ոլորտի կատարելագործման հնարավորությանը ներկայի վրա, ինչպես նաև հիմնավորել պաշտպանական բարեփոխումների անցկացման հետազոտողությանը ՀՀ ռազմաքաղաքական միջավայրի կանխատեսվող հեռանկարում:

կանոնադիրք» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2012.04.18/20 (894), 21.03.2012, «Պաշտպանության մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2008/73, 24.12.2008, ՀՀ նախագահի հրամանագիրը «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությանը հաստատելու մասին», ՀՀ ՊՏ 2007.02.15/11, 07.02.2007, ՀՀ նախագահի հրամանագիրը «ՀՀ ռազմական դոկտրինը հաստատելու մասին», ՀՀ ՊՏ 2008/1, 25.12.2007, <http://www.arlis.am>, ՀՀ կառավարության 24.12.2015թ. «Պաշտպանական ազգային հետազոտական համալսարան» պետական հիմնարկ ստեղծելու մասին» թիվ 1536-Ն որոշումը, ՀՀ ՊՏ 2016/3, 18.01.2016 և այլն:

⁹ Պաշտպանական բարեփոխումներ, ՀՀ ՊՆ պաշտոնական կայք, <http://www.mil.am/hy/68/230/265>, ՀՀ Պաշտպանության ռազմավարական վերանայում, <http://www.mil.am/hy/68/230/266>, ՀՀ պաշտպանության ռազմավարական վերանայում 2011-2015թթ., հանրային օգտագործման համար // <http://www.mil.am/media/2015/07/832.pdf>, Конституция РФ, от 12 декабря 1993г., http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_28399/, Основной закон ФРГ, от 23 мая 1949г., http://www.rfhwb.de/Pravo/Pravo_ru/pravo_ru1.htm, U.S. Laws and status. Code of federal regulation. Title 32 “National Defence”. Wasch., 1979, <http://www.law.cornell.edu/cfr/text/32>, United States Code. Title 10 “Armed force” Wasch. Edition, 1988, <https://www.law.cornell.edu/uscode/text/10>, Резолюция о военных полномочиях, Совместная резолюция по вопросу о военных полномочиях конгресса и президента США, Принята 1973 г. Сенатом и Палатой представителей США на совместной сессии конгресса, <http://www.grinchevskiy.ru/1945-1990/rezoluciya-o-voennih-polnomochiyah.php> և այլն:

Նշված նպատակներին հասնելու համար առաջադրվել են հետևյալ **խնդիրները՝**

- ուսումնասիրել պաշտպանական բարեփոխումների նստիտուցիոնալացման գործընթացի հիմքերը,

- վերլուծել Հայաստանի Հանրապետության պաշտպանության բնագավառում անցկացվող բարեփոխումների ընթացքն ու գնահատել հիմնական ձեռքբերումները,

- բացահայտել բարեփոխումների ազդեցությունը Հայաստանի անվտանգության երաշխավորման գործում, գնահատել պաշտպանության հայեցակարգային ուղենիշները,

- ներկայացնել բարեփոխումների շարունակման հնարավոր տեսլականը հանրապետությունում խորհրդարանական կառավարման մոդելի կայացման համատեքստում,

- վերհանել Հայաստանի համար նշանակություն ունեցող միջազգային ու տարածաշրջանային արդի ռազմաքաղաքական զարգացումները,

- գիտահետազոտական հիմքով գնահատել պաշտպանական բարեփոխումների հայեցակարգային ձեռքբերումները և առանձնացնել դրանց զարգացման հնարավորությունները:

Հետազոտության օբյեկտը պաշտպանական բարեփոխումների հիմնախնդրի բացահայտումն է և Հայաստանի Հանրապետությունում ընթացող արդի ռազմաքաղաքական գործընթացներում բարեփոխումների դրսևորման վերլուծումը:

Հետազոտության առարկան պաշտպանական բարեփոխումների ուսումնասիրումն է որպես Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական գործունեության կարևոր բաղադրիչ:

Ատենախոսության աղբյուրները և մեթոդաբանական հիմքը: Աշխատանքի տեսական աղբյուրները վերաբերում են պաշտպանության ոլորտի բարեփոխումներին առնչվող հիմնահարցերի և ռազմաքաղաքական գործընթացներում դրանց առանձնացման վերլուծության ունենքին: Ատենախոսության տեսական հիմքը կառուցված է Հայաստանի պաշտպանական-անվտանգային հիմնահարցերին վերաբերող գիտահետազոտական աշխատություններին

և ռազմաքաղաքական ղեկավարության կողմից արտահայտված պաշտոնական դիրքորոշումների ու գնահատականների վերլուծության վրա:

Քանի որ ատենախոսությանը որոշակիորեն ունի նաև միջառարկայական բնույթ, ապա այս տեսանկյունից ատենախոսության համար հիմք են ծառայել նաև երկրի պաշտպանության, ռազմաքաղաքական միջավայրի, ոլորտում իրականացվող քաղաքական-իրավական գործընթացների և միջարքայլ հարցերի վերաբերյալ քաղաքագետների, իրավագետների, սոցիոլոգների, փիլիսոփաների և այլ գիտահետազոտական ուղղության ունեցող տարբեր հրատարակումներ: Ատենախոսության շրջանակներում կարևոր ենք համարում առանձնացնել պաշտպանական-անվտանգային ոլորտի ղեկավարների և փորձագետների պաշտոնական դիրքորոշումներն ու մեկնաբանությունները:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են ինչպես գիտահետազոտական շրջանակներում հիմնավորված ու գործնականում լայն կիրառում ունեցող ընդհանուր բնույթի՝ դիալեկտիկական և համակարգային գիտահետազոտական մեթոդները, այնպես էլ մասնավոր, կոնկրետացվող նշանակության՝ իրավաքաղաքական վերլուծության, համեմատական, համակարգական առուցվածքային, պատմաիրավական, վիճակագրական գնահատման և միջարքայլ մեթոդներ: Գիտական աշխատանքում համադրվել են մասնագիտական գրականության մեջ առկա տեսակետները, պաշտոնական գնահատականներն ու դիրքորոշումները, ուսումնասիրվել են նորմատիվ իրավական բազայի հիմնական կարգավորումները, համեմատվել են արտասահմանյան առաջավոր փորձ ունեցող երկրներում պաշտպանության ոլորտի և ռազմական քաղաքականության զարգացման առանձնահատկությունները, նախանշվել են բարեփոխումների հետագա գործընթացում այդ փորձի ներբեռնման հնարավորությունները:

Ատենախոսության գիտական նորույթը.

- Իրականացվել է Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության և ռազմաքաղաքական հիմնախնդիրների համատեքստում պաշտպանական բարեփոխումների՝ որպես

իրավաբաղաբական գործընթացի համապարփակ ու ամբողջական վերլուծությանը:

- Հիմնավորվել է, որ անցած տարիների ընթացքում ՀՀ պաշտպանական համակարգը և հենց գինված ուժերը անցել են զարգացման հիմնարար փուլեր, որոնց փոխկապակցված հետազոտումը թույլ է տալիս գիտական հենքով գնահատել դրանց ընթացքը և, իհարկե, նախանշել ու հիմնավորել հետագա պաշտպանական բարեփոխումների հիմնական ուղենիշները:

- Հայաստանի Հանրապետության ռազմական քաղաքականության կատարելագործման տեսլականի համատեքստում գիտատեսական մոտեցմամբ հետազոտվել և գնահատվել են պաշտպանության կարողակարգերի վերափոխումները:

- Խորհրդարանական կառավարման և պետափշխանական կառուցակարգերի նոր ձևաչափին համապատասխան գիտավերլուծական հենքով գնահատվել են պաշտպանության և ռազմական քաղաքականության առջև ծառացող նոր պահանջների ու դրանց իրականացման հնարավորությունները՝ դրանք ներառելով պաշտպանական բարեփոխումների հետագա ուղենիշում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները.

1. Պաշտպանության ապահովման համակարգը ռեֆլեկտոր կերպով արձագանքում է սպառնալիքներին և մարտահրավերներին, անհրաժեշտ է, որ այն ունենանա դրանց կանխատեսման հնարավորություն, այդ սպառնալիքները կանխելու ու կասեցնելու համար ժամանակին միջոցառումներ ձեռնարկելու կարողություն: Տվյալ ուղղությունը կազմում է պաշտպանության համակարգի, դրա կառավարման և կառուցվածքային տարրերի կանխատեսական-վերլուծական գործառնությունի հիմքը: ՀՀ-ում անցկացվող պաշտպանական բարեփոխումների շրջանակներում այն որոշակիորեն զարգացման կարիք ունի, ինչը ռազմաքաղաքական միջավայրի ու հնարավոր զարգացումների գնահատմամբ հնարավորություններ կստեղծի թույլատրելի ռիսկերի որոշման համար:

2. Առաջարկում ենք կիրառության մեջ դնել (նաև օրենսդրական համապատասխան փոփոխություն կատարելով) պաշտպանության առավել

ընդգրկուն և էությունը լիարժեքորեն արտահայտող սահմանում. ՀՀ տարածքը, բնակչությունը, ինքնիշխանությունը գինված հարձակումից պաշտպանելու, պաշտպանությանը նախապատրաստելու ուղղված քաղաքական, տնտեսական, ռազմական, սոցիալական, իրավական, տեղեկատվական բնույթի ներքին երաշխիքների, ինչպես նաև միջազգային պարտավորությունների շրջանակներում խաղաղության և անվտանգության ապահովման միջոցառումների (արտաքին ուղղության) համակարգ, որը ֆինանսավորվում է պետական բյուջեի և օրենքով նախատեսված այլ միջոցների հաշվին:

3. Պաշտպանական բարեփոխումների իրավաքաղաքական հիմքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ պատշաճ կերպով ամրագրված չեն ոլորտի որոշ գործառնություններ ու սկզբունքներ: Մասնավորապես, պաշտպանության ոլորտի վերահսկողական գործառնություններում է միայն պաշտպանական ծախսերի օգտագործման մասում՝ կապված կառավարության գործունեության ծրագրերին համապատասխան պաշտպանության մասով պետական բյուջեի կատարողականի հետ: Առաջարկում ենք վերահսկողական գործառնություն կիրառել ավելի լայն իրավասություններ՝ ընդգրկելով պաշտպանական համակարգի գործունեության բոլոր ուղղությունները (համապատասխան լիազորությունների ամրագրմամբ և իրականացման կառուցակարգերի սահմանմամբ): Առաջարկում ենք նաև օրենսդրական բարեփոխումների ժամանակ ամրագրել գինված ուժերի կազմակերպման համար կարևոր նշանակություն ունեցող գինվորական հրամանատարության կենտրոնացվածության և միանձնյա կառավարման սկզբունքը:

4. ՀՀ պաշտպանական բարեփոխումները և դրանց հիմքում ընկած հայեցակարգային փաստաթղթերը (օրինակ, պաշտպանության ռազմավարական վերանայումը) սահմանում են ընդհանուր մոտեցումներ ոլորտի զարգացման համար: Նման ընդհանուր պահանջների հիման վրա հարկավոր է ըստառանձնացված ուղղությունների նախանշել վերափոխումների փոխադրման ավարտված ծրագրերը, որոնց իրականացումը կդրվի միասնական նպատակային հենքում և կբխի երկրում իրականացվող ազգային անվտանգության երաշխավորման քաղաքականությունից: Տեղին է նշել, որ ներկայումս

առանձին որոշ ծրագրեր իրագործվում են, սակայն գործնականի վերլուծությանը ցույց է տալիս դրանց միմյանցից կտրված լինելը և ոչ ամբողջական արդյունավետությանը:

5. Պետք է փաստել, որ ՀՀ զինված ուժերի համար դիտարկվում է անհապատասխանության նստանձնած առաքելության և տրամադրության տակ գտնվող կարողության ներքին միջև: Այս իմաստով հիմնական խնդիրն ռազմաքաղաքական ռիսկի նվազեցումն է, որի համար կարելի է նախանշել երկու փոխլրացնող ճանապարհ. առաջինը, ակտիվացնել ներգրավումը դաշնակցային և գործընկերային երկկողմ ու բազմակողմ համագործակցային ծրագրերին՝ որոշակիորեն «փոխանցելով» կամ «վերալստահելով» Հայաստանի պաշտպանության խնդիրը: Երկրորդը ռազմական-մարտավարական կարողության ներքին ավելացումն է (նման կարողության ներքին պետք է դիտարկել ավելի ընդարձակ սպեկտրում՝ ռազմական գործողության ներքին տեսության, կազմակերպչական կառուցվածք, կրթություն և ուսում, սպառազինություն, ռազմական տեխնիկա ու նյութական միջոցներ և պաշտպանական այլ ենթակառուցվածքներ):

6. Առաջարկվում ենք ՀՀ պաշտպանության ոլորտում իրականացվող բարեփոխումների համատեքստում իրականացնել զինվորականության իրավաքաղաքական գիտակցության մակարդակի բարձրացման միջոցառումների լայն համախումբ, ինչը հատկապես երաշխիք կլինի զինված ուժերում կարգապահության և մարտունակության ավելացման համար, ինչպես նաև անհրաժեշտ նախադրյալ կհանդիսանա խորհրդարանական կառավարման մոդելում զինծառայողների ճիշտ ու նպատակային դերը առանձնացնելու համար: Քաղաքական զսպվածության պահանջը պետք է հիմնված լինի դրասուբյեկտի իրավաքաղաքական գիտակցության համարժեք մակարդակի վրա:

Առենախոսության տեսական և գործնական նշանակությունը:

Հետազոտության շրջանակները բավականին լայն են, քանի որ ընդգրկում են ՀՀ անվտանգության համակարգում հիմնարար դեր ու նշանակություն ունեցող պաշտպանության բնագավառի և ռազմական քաղաքականության հիմնահարցերը, որոնց համեմատական վերլուծության հիման վրա առաջ են քաշվում պաշտպանական

բարեփոխումներին և դիտարկվող հիմնախնդիրներին ուսումնասիրության համապարփակ մոտեցումներ: Ատենախոսության տեսական նշանակությունն է նաև պաշտպանության համակարգի բարեփոխումներին արդյունավետության գիտատեսական գնահատումը, ինչպես նաև ռազմաքաղաքական հիմնախնդիրների համատեքստից ելնելով ոլորտի զարգացման, բարեփոխումների հաջորդականության և դրա առանձին ուղղության ներքին կանխատեսումն ու վերլուծումը:

Առաջարկվող գիտատեսական ամփոփումները և եզրահանգումները կարող են նաև մեթոդաբանական հիմք ծառայել պաշտպանության բնագավառում քաղաքական-իրավական հիմնահարցերին վերաբերող նոր գիտական հետազոտության ներքին համար: Բացի այդ, գործնական նշանակության տեսանկյունից ատենախոսությունը կարող է նաև օգտակար լինել ՀՀ ռազմական քաղաքականության կատարելագործման ու հայեցակարգային հիմքերի, ռազմավարական փաստաթղթերի լրամաշկման համար:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Աշխատանքը քննարկվել և հրապարակային պաշտպանության էերաշխավորվել ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի կողմից: Ատենախոսության հիմնադրույթները հրապարակվել են թվով 7 գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ ութ ենթագլուխներով, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության մեջ օգտագործված գրականությունը կազմում է 152 աղբյուր, իսկ ատենախոսության ընդհանուր ծավալը 160 էջ է:

ԳԼՈՒԽ 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ

ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆ ԸՆԴԳՐԿՈՂ ՈԼՈՐՏՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԸՆԹՅՈՒՆ

1.1. Հայաստանի Հանրապետության պաշտպանական բարեփոխումների ինստիտուցիոնալ աջման գործընթացը

Պատերազմները հանդիսանում են մարդկության պատմության ամենաավերիչ սոցիալական չարիքներից մեկը: Հանրագումարային

վերցրած՝ մարդկությանը իր գոյության ընթացքում խաղաղ, առանց պատերազմների ապրել է ընդամենը մոտ երեք հարյուր տարի¹⁰: 21-րդ դարի սկիզբը նույնպես աչքի է ընդկնում գինված հակամարտությանների քանակային աճով, ինչը բացատրվում է այն հանգամանքով, որ քաղաքականության դերակատարները առավել ապես սկսել են արժևորել ու կիրառել ռազմական ներգործության միջոցները¹¹:

Հայաստանի Հանրապետությանը գտնվում է մի տարածաշրջանում, որտեղ ցանկացած ժամանակ դիվանագիտությանը կարող է փոխարինել ռազմական ուժի օգտագործումը: Հայաստանի և հայ հասարակության անվտանգությանն ապահովելու համար պետք է համաքայլ ընթանալ աշխարհաքաղաքական բոլոր զարգացումներին: Ներկայումս փոփոխվում են նաև Հայաստանի շուրջը ձևավորվող արտաքին իրողությունները, և Հանրապետությանը, իր կայացմանը զուգընթաց, ավելի է ներգրավվում ռազմաքաղաքական գործընթացներում, անդամակցում տարածաշրջանային և միջազգային գանազան կազմակերպությաններին՝ ստանձնելով բազմաթիվ պարտավորություններ: Ավելին, անվտանգության երաշխավորման գործում որպես առանձնացված խնդիր ունենալով Ղարաբաղյան հակամարտությանը՝ Հայաստանի Հանրապետությանը առավել ուշադրություն է դարձնում ռազմական անվտանգության հիմնահարցերին: Ինչպես նշում է ՀՀ Նախագահ Ս.Սարգսյանը՝ Ադրբեյջանի իշխանությանը չի թաքցնում, որ քաղաքական ու ռազմական միջոցների համադրմամբ ձգտում է մշտական և արվածությունն ստեղծել, ինչը պարզ շանտաժի քաղաքականության է¹²: Հետևաբար, գինված ուժերի՝ որպես ազգային անվտանգության հիմնական երաշխավորի կարողությունների շարունակական զարգացումն ապահովելու համար չկա այլ տարբերակ, քան

¹⁰ Капто А.С., Энциклопедия мира: 2-е изд., уточн. и доп. – М.: Книга и бизнес, 2005, стр. 163

¹¹ Актуальные задачи развития Вооруженных Сил Российской Федерации, 08.11.2014, http://shtab.su/konspekt/ogp/aktualnue_zadachi_razvitiya_vooruzhennuh_sil_rossiyskoy_federacii.html

¹² ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարին կից կոլեգիայի և հայկական բանակի 23-րդ տարեդարձին նվիրված նիստին, <http://www.president.am/hy/press-release/item/2015/01/26/President-Serzh-Sargsyan-meeting-in-the-Ministry-of-Defence/>

պաշտպանական բարեփոխումների լիարժեք, շարունակական և հետևողական իրագործումը:

Այստեղ հարկ է մեջբերել Քաղաքական գիտության Հայաստանի ասոցիացիայի և ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ում գործող ԲՈՅ-ի «Քաղաքական գիտություններ և միջազգային հարաբերություններ» Մասնագիտական խորհրդի գիտական-փորձագիտական մշակման մեջ (REGNUM, 09.06.2016թ.¹³ Քաղաքական գիտության Հայաստանի ասոցիացիայի նախագահ, Քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գեներալ - լեյտենանտ Հայկ Քոթանջյանի հրապարակմամբ) արտացոլված այն կարևոր եզրահանգումը, որ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը իրավաքաղաքական տեսանկյունից անթերի և այդ ժամանակ գործող ԽՍՀՄ օրենսդրության ու միջազգային իրավունքի նորմերին համապատասխան իրացրել է ինքնորոշման իր իրավունքը՝ խորհրդային Միության լուծարման պահին նախկին Ադրբեջանի խորհրդային Հանրապետության տարածքում ձևավորելով երկու անկախ և իրավահավասար միջազգային իրավունքի սուբյեկտներ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը և Ադրբեջանի Հանրապետությունը»¹³:

Միջազգային զարգացումներն էլ իրենց հերթին ավելի են ուժգնացրել Հարավային Կովկասի ռազմական անվտանգության ապահովման հետ կապված համալիր հիմնախնդիրները: Տարածաշրջանում ռազմաքաղաքական գործընթացները շարունակում են բնորոշվել անվտանգության միջավայրի փոփոխման միտումներով և չլուծված գինված հակամարտությունների առկայությամբ: Վերջիններիս կարգավորումը բարդացնում է համաշխարհային ուժային կենտրոնների մոտ տարածաշրջանային հակամարտությունների լուծման ուղիների, մեթոդների և մոտեցումների միասնական տեսլականի բացակայությունը: Իրավիճակը խնդրահարույց է գնահատվում նաև կապված Ուկրաինական ճգնաժամի հետ, որը լրացուցիչ լարվածություն է բերել Հարավային Կովկաս, քանի որ որոշակիորեն փորձություն է ենթարկում ուժային կենտրոններին ու դաշինքներին այսպես ասած «հավատարիմ մնալը»:

¹³ О законосообразности референдума по самоопределению Нагорного Карабаха, Научно-экспертная справка Ассоциации политической науки Армении (АПНА), REGNUM, 09.06.2016, <https://regnum.ru/news/polit/2143046.html>

Արդեն նշվեց, որ տարածաշրջանային համատեքստում Հայաստանի համար մտահոգության հիմնական աղբյուրը Թարքիա-Ադրբեջան ռազմավարական դաշինքն է: Թուրքիայի կողմից Սիրիայում ռուսական ինքնաթիռի խոցումից հետո ակնհայտորեն պարզ դարձավ, որ Թուրքիան մտադրված է առավել լայն շրջանակներում հակազդել Ռուսաստանի ազդեցությանը և շահերին տարածաշրջանում: Բացի այդ, որպես նպատակային գործողության փաստարկ պետք է նշել, որ թուրքական բնակչության շրջանում անցկացված հարցման տվյալներով՝ թուրքական իշխանությունների նման քայլը որոշակիորեն իր սատարումն է գտել նաև հասարակական շրջանակներում¹⁴: Ռազմավարական տեսանկյունից նշված զարգացումները կարելի էր համարել բեկումնային, քանզի ռուս-թուրքական հարաբերությունների շարունակական բնույթ կրող լարվածությունը կարող էր հանգեցնել Հարավկովկասյան տարածաշրջանում իրավիճակի առավել ապակայունացմանը և ռուսական ազդեցության հնարավորությունների ամրապնդմանը: Սակայն, հետագա զարգացումները ցույց տվեցին, որ ռուս-թուրքական կապերը պարբերական սրացումներով հանդերձ, չունեն վճռական սրման հավանականություն՝ պայմանավորված բազմաթիվ ու բազմափսի թե տնտեսական, թե աշխարհաքաղաքական գործոններով¹⁵:

2016 թվականը և դրան նախորդող տարիները աչքի ընկան Ղարաբաղյան հակամարտության շփման գծում և հայ-ադրբեջանական սահմանին լարվածության՝ Ադրբեջանի կողմից աննախադեպ էսկալացիայով: Հակառակորդը մարտական գործողությունների ժամանակ օգտագործում է հաուբիցներ՝ հրետակոծության ենթարկելով խաղաղ բնակավայրերը՝ ներգրավելով նաև հրասայլեր: ՀՀ ռազմաքաղաքական ղեկավարությունը ստեղծված իրավիճակը արդեն բնորոշում է ոչ թե որպես հրադադար, այլ որպես հակամարտող կողմերի միջև ռազմական դիմակայություն, երբ հայկական կողմը,

¹⁴ Տես, օրինակ, Թուրքիայի բնակչության կեսը ճիշտ քայլ է համարել ռուսական ինքնաթիռի խոցումը թուրքական գիւնուծի կողմից, 20.05.2016թ., <http://www.tert.am/am/news/2016/05/20/jet/2026315>

¹⁵ Ավելի մանրամասն տես Հովսեփյան Լ., Ռուս-թուրքական հարաբերությունների բարելավման գործընթացը կոմպրոմիսային տարբերակ էր, 01.07.2016թ., <http://vesti.am/archives/45130?lang=am>

անդրադարձնելով ավտոյանի բոլոր նախահարձակ գործողությունները, պարբերաբար ստիպված էր պատժիչ և կանխարգելիչ գործողությունների միջոցով նրան պատճառել անհամաչափ կորուստներ՝ համեմատական խաղաղությունը պարտադրելու և լայնածավալ ռազմական գործողությունների բռնկումը թույլ չտալու համար, ինչը սակայն տեղի ունեցավ 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմի ձևաչափով (մի շարք լրատվամիջոցներ, պաշտոնյաներ և վերլուծաբաններ այն որակում են որպես «ապրիլյան պատերազմ» կամ «քառօրյա պատերազմ»¹⁶):

Ադրբեջանական կողմից հաճախ հնչող առանձին կռվան են հայկական ուժերի կողմից ադրբեջանական տարածքներն «օկուպացնելու» մասին հայտարարությունները, որոնք ապրիլյան պատերազմի ընթացքում նույնպես ադրբեջանական կողմից շահարկվում էին միջազգային մամուլում, թեև նման ձևակերպումը որոշ դեպքերում նշվում էր չակերտների կիրառմամբ¹⁷: Մինչդեռ հայկական կողմը բազմիցս նշել է Լեռնային Ղարաբաղը շրջապատող տարածքների բուժերային նշանակությունը մասին:

Ադրբեջանի համար ամենաեական զսպող գործոնը շարունակում է մնալ հայկական զինված ուժերի մարտունակությունը: ՀՀ զինված ուժերի ընթացիկ և հեռանկարային զարգացման պլաններն ուղղված են բանակի մարտական կարողությունների զգալի ավելացմանը՝ միտված ինտելիգենտ հավանական հակառակորդին ցանկացած պահի արժանի հակահարված տալու պատրաստականությանը:

Ապրիլյան պատերազմի ընթացքում հաճախ կարելի էր հանդիպել նաև Հայաստանը Ռուսաստանի հովանավորության տակ գտնվող պետությունն որակելու ձևակերպումներին, ինչը, կարծում ենք, բացասաբար է անդրադառնում Հայաստանի միջազգային իմիջի վրա: Մասնավորապես, միջազգային մամուլը լայնորեն գրեց Ռուսաստանի

¹⁶ Օրինակ, Հովհաննիսյան Արծրուն, Ապրիլյան քառօրյա պատերազմի վերլուծություն, 14.04.2016թ., News.am, <http://news.am/arm/news/322349.html> կամ Secrets of Four-Day Karabakh War, The National Interest, 13.04.2016, <http://nationalinterest.org/blog/secrets-the-four-day-karabakh-war-15772>

¹⁷ Azerbaijan tells Armenia to «free occupied territories,» sends letters to UN, NATO, EU, 04.04.2016, RT, <http://www.rt.com/news/338408-azerbaijan-karabakh-ceasefire-conditions/>

կողմից Յայաստանին տրվող ռազմական միջոցների մասին²⁰, ինչը ադրբեջանական կողմից հաճախ չափարկվում էր¹⁸:

Չինված ուժերը այսօր և տեսանելի հեռանկարում Յայաստանի անվտանգության հիմնական երաշխավորն են, վերջինիս հիմքը: ԶՅ զինված ուժերը ազգային ոգու, գաղափարախոսության կրողն ու համազգային շահերի հիմնական արտահայտիչն են, պետության առանձնահատուկ հպարտությանը, ազգի կենսունակության խորհրդանիշը, ազգային արժեքների հիմնական պահապանը:

Յայաստանի զինված ուժերի զարգացման այս պատասխանատու փուլում անժխտելի է, որ ներկա և ապագա սպառնալիքների դիմակայմանը պատրաստ լինելու համար չկա որևէ այլ ուղի, քան իրական, միևնույն ժամանակ իրատեսական բարեփոխումների իրականացումը: Մինչ օրս նշված ուղղությամբ կատարվել են զգալի աշխատանքներ, սակայն այդ ընթացքում ի հայտ են եկել այնպիսի խնդիրներ ու բացթողումներ, որոնք որոշ ենթաուղորտներում փորձի բացակայության և ֆինանսական մեծ ներդրումների պահանջարկի պատճառով անցյալում եղել են կամ աննկատ, կամ դրանց լուծումը հետաձգվել է անորոշ ժամանակով:

Ռազմաքաղաքական բարեփոխումների արդյունավետությանը կախված է մի շարք խնդիրների հաջող լուծումից, որոնցում առաջին հերթին կարելի է ընդգծել զինված ուժերի կառուցվածքակադրային համակարգի կատարելագործումը՝ նպատակ ունենալով ապահովել երկրի ռազմական անվտանգությանը երաշխավորող բանակ¹⁹: Ռազմաքաղաքական բարեփոխումների ընթացքի, առկա խնդիրների ու դրանց լուծման ուղիների վերաբերյալ համընդգրկուն ուսումնասիրությունը պահանջում է հետևյալ սկզբնական հարցերի առանձնացում, մասնավորապես՝

- ինչ են բարեփոխումները,
- ինչ է անհրաժեշտ դրա իրականացման համար,

¹⁸ Putin just sent Armenia MiG-29 fighters and military aid. Here are three key reasons why, The Washington Post, 14.04.2016, <http://www.washingtonpost.com/news/monkey-cage/wp/2016/04/14/putin-just-sent-armenia-mig-29-fighters-and-military-aid-here-are-the-3-key-reasons-why/>

¹⁹ Զոթանջյան Յ.Ս., Պաշտպանական բարեփոխումների ռազմավարություն // Յակամարտության էթնոքաղաքագիտություն: Յայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները, Եր., ԶՅ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ, 2010, էջ 719-722

- բարեփոխվում, վերափոխվում, թե՛ արդիականացվում են գինված ու ժերը,

- ինչն է նախատեսվում բարեփոխել,

- երբ կարող է արձանագրվել բարեփոխումների հաջող ավարտը:

Այս հարցերի պարզաբանումը արդիական էր ինչպես երեկ, այնպես էլ այսօր և ապագայում, քանի որ ցանկացած գործընթացի հաջողությունը մշտապես սպառնում է առօրեականությունը, սովորույթի ու ժը, այլ կերպասած՝ հիմնական նպատակի կամ գերխնդրի գիտակցման նվազումը:

«Բարեփոխումները» ամենաընդհանուր ձևակերպմամբ կարելի է բնորոշել որպես ամենօրյա ու երկարաժամկետ բնույթ կրող գործողությունների ամբողջություն՝ ուղղված գերխնդրի և դրան առնչվող հիմնական նպատակների իրականացմանը՝ աստիճանական, կազմակերպված ու փոխկապակցված գործողությունների միջոցով: Իր երկարաժամկետ բնույթի պատճառով բարեփոխումներին մշտապես սպառնում է առօրեականությունը, ընդհանուր նպատակի ձգտման և գերխնդրի գիտակցման թուլացումը: Մինչդեռ բարեփոխումների համար անհրաժեշտ են առկա խնդիրների լուծման նոր մեթոդների համակարգ և այդ մեթոդների իրագործմանն աջակցող միջոցների հատկացում ու նպատակային կիրառում:

«Բազմական (պաշտպանական) բարեփոխում» կատեգորիայի բովանդակությունը մեկնաբանվել է նաև ռուսական և մյուս արտասահմանային վերլուծաբանների աշխատություններում: Մասնավորապես, Օ.Վիկտորչիկը և Վ.Ռոմանչուկը պաշտպանության բնագավառի բարեփոխումը բացառապես է որպես պետության ռազմական քաղաքականության, բանակաշինության, պաշտպանության համակարգի մեջ արմատական փոփոխությունների ամբողջություն, որը նպատակ ունի պատերազմական իրավիճակներում գինված ու ժերը բերել պատրաստվածության պառչած մակարդակի՝ համապատասխանեցնելով երկրում առկա ներուժին ու ազգային-պետական միջոցներին, որոնք կարող են իրականացվել իշխանության մարմինների որոշմամբ՝

պետաիրավական և կազմակերպական միջոցների հաշվին²⁰: Իսկ Ի.Կիրիլովը՝ ռազմական քաղաքականության հիմնատարների վերլուծության համառոտ քննարկում որպես զինված ուժերի արդիականացման ուղղության ներառանձնացնում է ռազմական ուժերի կառավարման ու պլանավորման կատարելագործումը, զորքերի կառուցվածքի և տեղակայման օպտիմալացումը, պաշտպանության հարցերում տեղեկատվության անվտանգության երաշխավորումը՝ ներբեռնելով նորագույն տեղեկատվական տեխնոլոգիական ձեռքբերումները, զորատեսակների նյութատեխնիկական ու կադրային վերազինումը, ինչպես նաև նախագորակոչային տարիքի քաղաքացիների պատրաստումը զինվորական ծառայությանը²¹:

Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական բարեփոխումները ձևակերպվեցին որպես զինված ուժերի գործունեության ընթացակարգերի, կառուցվածքի և խնդիրների վերափոխմանն ուղղված միջոցառումների համախումբ: Որպես հիմնական նպատակ դիտարկվում է քաղաքացիական վերահսկողության և պաշտպանական պլանավորման ու կառավարման ժողովրդավարական հիմնարար սկզբունքների վրա հիմնված, արդիական ռազմաքաղաքական պահանջներին համապատասխանող, առավել ճկուն և ժամանակակից պաշտպանության համակարգի, ներառյալ՝ զինված ուժերի ստեղծումը, որն ի գործ կլինի արդյունավետորեն ապահովել երկրի ռազմական անվտանգությունը, պաշտպանել ու ազգային անվտանգության հիմնարար արժեքները, օպերատիվ արձագանքել բոլոր ճգնաժամային իրավիճակներին և ապահովել Հայաստանի միջազգային պարտավորությունների կատարումը²²:

ՀՀ կողմից որդեգրված ռազմաքաղաքական բարեփոխումների հաջող իրականացման համար անհրաժեշտ ենք համարում հետևյալ հիմնական մոտեցումների կիրառման հնարավորությունների վերլուծությանը՝

²⁰ Викторчик О.Я., Романчук В.П., Актуальные проблемы военной политики, Котово, НВВИКУ, 1996, стр. 28

²¹ Кирилов И.В., Военная политика, военно-политические процессы и проблемные аспекты в системе обеспечения военной безопасности в современной России, Дисс. на соискание ученой степени канд.пол.наук, Н.Новгород, 2015, стр. 14

²² Պաշտպանական բարեփոխումներ, ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական կայք // <http://www.mil.am/hy/68/230/265>

- նպատակի և հիմնական խնդիրների պարզաբանում,
- փոփոխությունների իրատեսականություն և աստիճանականություն,
- գործողությունների փոխապակցվածություն,
- գործընթացն առաջ տանելու ունակ անձնակազմի զարգացում,
- որոշումների կայացման ճկունություն և արդյունքների անընդհատվելու ծրագրում,
- հասարակության իրազեկում, պետության և հասարակության աջակցություն բարեփոխումների իրականացմանը:

Այս առումով բանակի «վերափոխումը» թվում է առավել հեշտ իրականանալի, քանի որ քաղաքական որոշման դեպքում այն ենթադրում է կտրուկ և համարձակ փոփոխություններ՝ կարճ ժամկետներում, հնի վերացում և նորի ստեղծում, թեև պահանջում է նաև հսկայական միջոցներ ու ներդրումներ: Վերափոխումը, միաժամանակ, մեծ ռիսկեր է պարունակում, քանի որ հնարավոր սխալների հետևանքները կարող են թանկ լինել պետության համար, ինչը կոնկրետ Հայաստանի համար անընդունելի է:

«Արդիականացումը» ենթադրում է ռազմական կարողությունների ընդլայնում՝ զուգահեռելով զորքերի և սպառազինության տեխնիկական ու տեխնոլոգիական առաջընթացով, ինչը սակայն ամբողջությամբ չի կարող ապահովել պաշտպանական ոլորտի զարգացմանն առնչվող համակարգային խնդիրների լուծումը:

Ընդհանուր առմամբ, անվտանգության երաշխավորվածությունը ապահովելու համար առաջնային կարևորություն ունի անձի, հասարակության և պետության կենսագործունեության ոլորտներում հետևողական փոփոխությունների անցկացումը: Անվտանգության քաղաքականության իրականացման արդյունավետությունը անմիջականորեն առնչվում է ռազմական քաղաքականության ու դրա իրականացնող իշխանական մարմնի գործունեության մակարդակի²³: Ռազմաքաղաքական բարեփոխումների կարևորագույն մասը զինված ուժերի վերականգնումն է, որը ներառում է կառավարչական

²³ Скоков С.И., Выговский И.И., Проблемы и направления совершенствования автоматизированного управления подготовкой и ведением военных действий, Военная мысль № 9, 2011, стр. 63

կառուցակարգերի կատարելագործումը, մարտական կարողությունների, գործունեության օպերատիվության և կայունության բարձրացումը, ժամանակակից զինատեսակներով ու սպառազինությամբ համալրումը: Պետությունն իր անվտանգության ապահովման համար անհրաժեշտ ռազմական հզորության չափը որոշում է՝ ելնելով երկրին սպառնացող առկա և հնարավոր վտանգի ծավալներից, իր տնտեսական հնարավորություններից, ռազմաքաղաքական իրավիճակից, ուժերի տարածաշրջանային հաշվեկշռից, ընդհանուր ու տարածաշրջանային անվտանգության համակարգում իր ստանձնած պարտավորություններից: Այս գործոնների հաշվառմամբ են մշակվում զինված ուժերի զարգացման ընթացիկ և հեռանկարային ծրագրերը, դրանցով են պայմանավորված ռազմական ուժերի կայացման և հետագա զարգացման շատ հարցեր, այդ թվում՝ նաև զինված ուժերի անձնակազմի թվաքանակի սահմանումը, համալրման տարբեր մոտեցումների համադրումը²⁴:

Հայաստանի Հանրապետության՝ որպես զինված ուժերի զորակոչային ու պայմանագրային համալրման համակարգ ունեցող երկրի համար անհրաժեշտ է առանձնացնել պաշտպանական համակարգի նպատակային գործունեության հետևյալ 5 գերխնդիրների տեսլականը.

1. երկրի տարածքի և բնակչության պաշտպանությունը ցանկացած արտաքին ագրեսիայից,
2. օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ աջակցությունը քաղաքացիական իշխանություններին արտակարգ դրությունների կամ աղետների ժամանակ,
3. զորահավաքային ռեսուրսների նախապատրաստումը և պահեստազորի շարունակական վարժանքն ու պատրաստությունը,
4. միջազգային և տարածաշրջանային անվտանգությանն աջակցելու պատրաստակամությամբ պայմանավորված՝ մասնակցությունը բազմազգ խաղաղապահ գործողություններին,
5. զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիների դաստիարակումը որպես հասարակության լիարժեք ու պատասխանատու անդամներ:

²⁴ Քոչարյան Տ.Տ., Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգությունը ազգային անվտանգության համատեքստում, Եր., 2012, էջ 245

Հայաստանի ռազմաքաղաքական բնագավառում անցկացվող բարեփոխումների գլխավոր նպատակը այս 5 խնդիրների լիարժեք ապահովումն է հնարավորինս քիչ միջոցներով, արագ ու օպերատիվ կերպով՝ գլխավոր չափորոշիչ ունենալով արդյունավետությանը և նպատակայնությանը: Արդյունավետությանն ապահովելու համար պետք է հրատապություն ու արագություն ցուցաբերել գործողություններում, իսկ առաջարկությունների ներկայացման և որոշումների կայացման գործում շտապողականությունը նպատակահարմար է:

Ներկայումս խիստ արդիական է դարձել զինված ուժերում ազգային գաղափարախոսությունն արմատավորելու, ազգային բանակի լավագույն ավանդույթները զինվորական առօրյայում ամրագրելու ճանապարհով գոյություն ունեցող արատավոր, հայմարդուն ոչ հարիր երևույթներն իսպառ վերացնելու խնդիրը: Գաղափարական առումով Ազգային բանակի հետագա զարգացման և հզորացման գործընթացը զինվորական առօրյայում հաճախ դժվարանում է՝ զինվորական կարգապահության ու իրավակարգի ոչ բավարարման արդյակի պատճառով: Նշված հարցերում կարևորվում է հատկապես սպայական կազմի պատրաստվածությունը և նվիրվածությունը ծառայությանը: Տեղին է հիշատակել ամերիկացի մասնագետ Ս.Հանթինգտոնի գնահատականը զինված ուժերի սպա զինծառայողների հիմքային դերակատարության վերաբերյալ, այն է՝ վերլուծելով սպայական ծառայությունը որպես մասնագիտություն՝ նշվում է, որ ժամանակակից սպայական կազմը մասնագիտական համախմբվածություն է, իսկ ժամանակակից զինծառայող սպան հատուկ մասնագիտացված ծառայող է: Ընդգծվում է, որ զինված ուժերի սպան կարող է լինել միայն մասնագիտացված զինվորական ծառայող, միաժամանակ կարող է նաև ունենալ նեղ մասնագիտացված գիտելիքներ ու հմտություններ, որոնք կկիրառի ծառայողական գործունեության ընթացքում՝ պարատականությունները կատարելիս:²⁵

Կարգապահության ամրապնդման և ընդհանրապես բանակի հզորացման ուղիների մասին խորհելիս հարկ է ընդգծել

²⁵ Samuel P.Huntington, The Soldier and the State: The Theory and Politics of Civil-Military Relations /Cambridge: Harvard University Press, 1957/, pp. 7–18

գաղափարական առումով Ազգային բանակ կայացնելու հրամայականը, ինչը կարելի է սահմանել հետևյալ կերպ՝ զինվորամուկության (սուդաֆոն) արտահայտված պահվածքի բացառման, պետական գաղափարականության կատարման, խելամիտ նախաձեռնողականության ու հետևողական կատարելագործման գուգակցում հրամանատարի անձնական օրինակի ու նրան գիտակցաբար ենթարկվելու շնորհիվ զինծառայողների համախմբվածության, մարտական պատրաստականության ապահովման հետ՝ գերադասելով մարդկային հարաբերությունները, բանակային ընկերասիրության ամրապնդումը, հրամանատարի կողմից ծնողական պարտականությունների ստանձնումը՝ ժողովրդի հետ միասին կամավոր կերպով համաժողովրդական բանակի վերածվելու պատրաստակամությանը: Այսինքն՝ ազգային մտածելակերպը, ազգային գաղափարախոսությունը պետք է ամրագրվի զինված ուժերի առօրյայում և յուրաքանչյուր զինծառայողի գիտակցման մեջ:

Այս համատեքստում պետք է ընդգծել, որ ՀՀ պաշտպանական բարեփոխումների սկզբնական փուլը վերաբերում էր պաշտպանության բնագավառի իրավական հենքի զարգացմանն ու վերափոխմանը, որին բնականաբար պետք է հաջորդի «անցումը իրավականից ռազմականի»: Այստեղ կարևորվում է այն, որ ՀՀ նախագահի կողմից 2007 թվականի հունիսին հաստատվեց Հայաստանի Հանրապետության պաշտպանական բարեփոխումների 2007-2015 թվականների ծրագիրը, որի շրջանակներում բացի քաղաքական նշանակություն ունեցող ՀՀ ռազմական դոկտրինից պաշտպանության բնագավառում արտահայտված խնդիրներին համապատասխան ընդունվեցին բազմաթիվ նոր իրավական ակտեր, ինչպես նաև փոփոխություններ և լրացումներ կատարելով հստակեցվեցին գրեթե բոլոր գործող նորմատիվ իրավական փաստաթղթերում (այս մասին կանոնադաշտնաքառնախոսության երկրորդ գլխում):

Սակայն, հաջորդ փուլում կարևոր էր, որ օրենսդրորեն ձևակերպված նորացումները գործնականում հստակ կիրառվեն պատասխանատու պաշտոնատար անձանց կողմից, սովորույթի համաձայն չշարունակվեն իրականացվել այն նույն գործառույթները, որոնք

գործում էին նախկինում: Դրա հավանականությունը որոշակիորեն հնարավոր է, որից ելնելով էլ պաշտպանական բարեփոխումների գործնական կիրառելիությունն ապահովելու համար որոշակի ժամանակ է պահանջվում: Այստեղ որպես գերակայություն կարելի է ներկայացնել կադրային, ռազմական կրթության, հասարակության իրազեկման, վարչական կառավարման, գորային կառույցի սահմանման, պաշտպանական պլանավորման և բյուջետավորման ենթաոլորտները, որոնք ունեն փոխկապակցող բնույթ, այսինքն՝ այլ ենթաոլորտների բարեփոխումները հաջող կընթանան, եթե հաջողություն գրանցվի թվարկված, և առաջին հերթին՝ կադրային քաղաքականության հարցերում: Այստեղ հատուկ կարևորություն է ստանում ՀՀ զինված ուժերի կադրային քաղաքականության և դրան սպասարկող ռազմական կրթության համակարգի բարեփոխումը, որոնք պետք է համապատասխանեցվեն պաշտպանական քաղաքականության նպատակներին: Ռազմական կրթությունն ասելով չպետք է հասկանալ միայն սպայական կազմի զարգացումը, այլ նաև ամբողջ զինվորական անձնակազմի կրթվածության, բարոյահեգաբանական վիճակի և բանակ-հասարակություն կապի արդիականացումը:

Մասնավորապես, բարեփոխումների արդյունքում պետք է ունենալ զինվորական կադրերի պատրաստման այնպիսի կատարյալ համակարգ, որը, մի կողմից, լրիվ բավարարի զինված ուժերի պահանջարկը, մյուս կողմից, իր որակական բարձր մակարդակի շնորհիվ հնարավորություն է ընձեռի ԱԳՀ-ի և արտասահմանյան որոշ երկրներից Հայաստանում կադրեր պատրաստելու քաղաքականության իրագործման համար: Անհրաժեշտ է նաև կատարելագործել կադրերի նշանակման, որակավորման բարձրացման և առաջխաղացման համակարգը, որպեսզի բանակային միջավայրում իսպառ բացառվի հովանավորչությունը, ծառայության անհրաժեշտ բոլոր որակներին լիարժեք չհամապատասխանող անձանց առաջխաղացումը, զինծառայողների շրջանում մշտապես խրախուսվի ինքնակատարելագործման, մասնագիտական որակավորման բարձրացման ձգտումը: Փորձառու, երիտասարդ և եռանդուն զինվորական մասնագետների ներդաշնակ զարգացումը՝ հայ զինվորականության լավագույն ավանդույթների

պահպանմամբ ու բազմապատկմամբ, հանդիսացել և միշտ էլ հանդիսանալ ու է ՀՀ զինված ուժերի բարեփոխումների ուղեկիցը, քանզի հայոց բանակը կարող է լինել հզոր և մարտունակ միայն վերջինիս կազմում ունենալով զինվորականի պատիվը պահող ու պաշտող նվիրյալներ²⁶:

Միաժամանակ, հարկ է նշել նաև, որ բարձր մրցակցության և շուկայական տնտեսության պայմաններում այնպիսի զարգացող ուղղություններում, ինչպիսիք են՝ կապը, ռազմական տեղագրությունը, ռադիոէլեկտրոնային պայքարը, հետախուզությունը, թիկունքային ապահովումը և պաշտպանական գնումների համակարգը, հարկավոր է բարեփոխումներ իրականացնել առավել արագ ու արդյունավետ, քանի որ առկա է նաև արտասահմանյան առաջավոր փորձի ներբեռնման ու տեղայնացման հնարավորությունը: Այսինքն՝ ժամանակակից աշխարհը և տեխնոլոգիական զարգացումները կարող են օժանդակել նշված ուղղությունների բարեփոխումներին: Բացի այդ, բարեփոխումների սահուն ընթացքի ապահովման համար անհրաժեշտ է նաև գնահատել պետության շուրջ ձևավորված ռազմաքաղաքական իրողությունները և տարանջատել ռիսկային գործոնները: Գրականության մեջ նման տարանջատումը տրվում է հոտևյալ ուղղություններով՝ տեսամեթոդաբանական, ռազմատնտեսական, հասարակական-քաղաքական, կազմակերպական-գործառնության, նորմատիվ-իրավական, տեղեկատվական-վերլուծական և այլն²⁷:

Նշված ընդհանուր մոտեցումների համադրմամբ ու կոնկրետացմամբ ՀՀ պաշտպանական բարեփոխումների շրջանակներում մշակվել է և կարելի է փաստել, որ հաջողությամբ իրագործվել է ՀՀ ՁՈւ զարգացման միջնաժամկետ պլանը՝ մինչև 2015 թվականը, որում հստակ մատնանշվեցին երկրի պաշտպանության ոլորտի կատարելագործման ուղղությամբ Հայաստանի գործընկերների հետ հետագա համագործակցության առաջնահերթ ոլորտները: Հաջողության

²⁶ Օհանյան Ս.Մ., 21-րդ դարի բանակը, Եր., Տիգրան Մեծ, 2007, էջ 64

²⁷ Брега А.В., Политический риск в обеспечении военной безопасности: теория и основы управления, Автореферат дисс. на соискание учёной степени доктора политических наук, М., 2007, стр. 32-34

գրավականը հանդիսացավ նաև ՀՀ պաշտպանական ռազմավարական վերանայումը, որը երկրի պաշտպանական համակարգի և դրա գործունեության ռազմավարության վերանայմանն ուղղված միջոցառումների ամբողջությունն է և նպատակ ունի գնահատել ՀՀ պաշտպանական համակարգը առկա և երկարաժամկետ հեռանկարում ակնկալվող սպառնալիքներին և մարտահրավերներին դիմակայելու կարողությունների տեսակետից բացահայտել համակարգի զարգացման հնարավորությունները: Հիշյալ գնահատման արդյունքները հիմք են հանդիսանում պաշտպանության ոլորտի հեռանկարային զարգացման ծրագրերի մշակման, հետևաբար, պաշտպանական բարեփոխումների արդյունավետ շարունակման համար²⁸: Պաշտպանության ռազմավարական վերանայման գործընթացը և դրա արդյունքների իրականացմանն ուղղված գործողությունները միավորվեցին մեկ միասնական փաստաթղթում՝ ՀՀ զինված ուժերի զարգացման պլանում, որը երաշխավորում է ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության հիման վրա երկրի պաշտպանության կառավարումը²⁹:

Եվ վերջում կարևորվում է նաև այն հարցը, թե երբ կարող է արձանագրվել բարեփոխումների հաջող ավարտը: Այստեղ պետք է նշել, որ ժամանակակից զարգացող աշխարհակարգում և հատկապես Հայաստանի Հանրապետության շուրջ ձևավորված անվտանգային ու ռազմաքաղաքական իրողությունների պայմաններում՝ պաշտպանության բնագավառի բարեփոխումները ունենալու են մշտական բնույթ, սակայն որոշակիորեն կփոխվի դրանց անցկացման ինտենսիվությունը և բովանդակային մի շարք ասպեկտներ: ՀՀ պաշտպանական բարեփոխումների գերխնդիրը մարտունակությամբ հակառակորդի զինված ուժերի նկատմամբ զինված ուժերի գերազանցության ապահովումն է, զինված ուժերում այնպիսի չափանիշների ստեղծումը և ներդրումը, որոնք լիարժեքորեն կհամապատասխանեն Հայաստանի ազգային անվտանգության

²⁸ ՀՀ Պաշտպանության ռազմավարական վերանայում, ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական կայք // <http://www.mil.am/hy/68/230/266>

²⁹ Օհանյան Ս.Ս., ՀՀ զինված ուժերի զարգացման 2011-2015թթ. միջնաժամկետ պլանը երաշխավորում է ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության հիման վրա պաշտպանության կառավարումը, <http://armenpress.am/arm/news/659760/s-ohanyan-hh-zu-zargacman-2011-2015tt-mijnazhamket-plan.html>

առանձնահատկություններին՝ ամբողջությամբ լուծելով՝ ռազմական անվտանգության ազգային խնդիրները, միաժամանակ փոխգործակցել իրենց անբավարար հնարավորությունները կունենան՝ պետության միջազգային վարկանիշի և հեղինակության բարձրացմանը համարժեք միջազգային անվտանգության ապահովման չափաբաժին ստանձնելու համար³⁰:

Որպես անցկացված բարեփոխումների արդյունավետությունը վկայող փաստեր կարելի է արձանագրել ՀՀ ռազմական դոկտրինի ընդունումը և դրանից բխող բազմաթիվ ռազմավարական բնույթի փաստաթղթերի կիրառումը, ՀՀ անվտանգության սպառնալիքների հիմնավորումները և զարգացման սցենարների մշակումը, ռազմավարական պլանավորման նկատառումները, անվտանգության սպառնալիքների չեզոքացման առաքելությունները, ռազմավարական առաջադրանքների որոշումն ու սահմանումը, ռազմական արդյունաբերության, սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման պետական ծրագրերը և միջարք այլ պաշտպանական պլանավորման ու ծրագրային հիմնարար ձեռքբերումներ:

Այսօր հայկական բանակի հարաճուն զարգացման հիմքում համազգային մոտեցման շնորհիվ երկրի պաշտպանական ոլորտում հաջողությամբ շարունակում են իրականացվել մեծածավալ աշխատանքներ, մասնավորապես, ՀՀ զինված ուժերի ստորաբաժանումները համալրվում են նորագույն ռազմական տեխնիկայով և սպառազինությամբ, պաշտպանական գոտիներում և տեղամասերում կատարելագործվում են ամրաշինական կառույցները, տարեցտարի բարելավվում են զինծառայողների ծառայության, կենցաղի, հանգստի և ժամանցի պայմանները, առանձնակի ուշադրություն է դարձվում զինծառայողների, զոհված ազատամարտիկների, հաշմանդամների և նրանց ընտանիքների սոցիալական ու բնակարանային խնդիրների լուծմանը, իրականացվում են աննախադեպ ծավալների կապիտալ և վերանորոգման շինարարական աշխատանքներ: Այս բոլոր միջոցառումների շնորհիվ օրեցօր ավելանում են զինված ուժերի մարտական կարողությունները, ավելի

³⁰ Պաշտպանական բարեփոխումներ, ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական կայք, <http://www.mil.am/hy/68/230/265>

Է մեծանում վստահությունը սեփական ուժերի նկատմամբ, որի պարագայում ՀՀ զինված ուժերը հանդես են գալիս որպես մրցունակ, անընդհատ կատարելագործվող, բարեփոխվող և զարգացման ուղին բռնած կառույց՝ առաջնային կարևորության նպատակ ունենալով Հայաստանի ռազմական անվտանգության երաշխավորումը³¹:

Միևնույն ժամանակ, պետք է գիտակցել, որ մոտ և ապագա հեռանկարում հնարավոր են փոփոխություններ նաև Հայաստանի Հանրապետության անվտանգության սպառնալիքների ցանկում, որն իր հերթին լրացումների ու հստակեցումների անհրաժեշտության կհանգեցնի ռազմաքաղաքական բնույթի բոլոր ծրագրային միջոցառումներում՝ պահանջելով դրանք կատարելագործել շարունակական բարեփոխումների ձևաչափով: Այսօր անընդհատ փոփոխվող ու զարգացող աշխարհում դրանից խուսափելն անհնար է, և որպեսզի Հայաստանի Հանրապետության զինված ուժերը մշտապես պատրաստ լինեն արձագանքել ու տարածաշրջանային և համաշխարհային անվտանգության միջավայրի փոփոխություններին՝ պաշտպանական բարեփոխումների հետևողական իրականացմանն այլընտրանք չկա: Փոխարենը հարկավոր է վստահ լինել, որ բարեփոխումների ծրագրավորված փուլերն ավարտելուց, այսինքն՝ հաստատված ծրագրերը համապատասխան միջոցներով ապահովելուց և կյանքի կոչելուց հետո ռազմաքաղաքական ղեկավարության և զինված ուժերի անձնակազմի համար բարեփոխումները կլինեն առավել դյուրին, կանցնեն ավելի հարթ ու արդյունավետ՝ ինտեգրելով Հայաստանի շուրջ ձևավորվող ռազմաքաղաքական և անվտանգային միջավայրին, դրանով իսկ երաշխավորելով Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգաբնակչության անվտանգությունը:

1.2. Պաշտպանության ոլորտի բարեփոխումների նախաձեռնումը, անցկացման փուլերը և արդյունավետության հիմնախնդիրը

³¹ ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի ելույթը ՀՀ զինված ուժերի կազմավորման 20-րդ տարեդարձին նվիրված հանդիսավոր միջոցառման ժամանակ, 28.01.2012թ., <http://www.mil.am/hy/news/2095>

Յուրաքանչյուր երկրի պաշտպանական քաղաքականությունը տվյալ պետության ընդհանուր քաղաքականության բաղկացուցիչ մասն է, որը նպատակաուղղված է հավանական արտաքին թշնամուց պետության, բնակչության, տարածքային ամբողջականության և ինքնիշխանության պաշտպանությանը: Պաշտպանական քաղաքականությունը չպետք է նույնականացնել երկրի ռազմական քաղաքականության հետ, այլ պետք է ռազմական քաղաքականությունը դիտարկել որպես պաշտպանական քաղաքականության առանցքային բաղադրիչ, որը հետադարձ գործառնության կապով առնչվում է մյուս բոլոր բաղադրիչների հետ: Ռազմական քաղաքականության հայեցակարգային մասը ապահովում է պաշտպանության բնագավառի կառավարական մարմինը, իսկ գործնական մասը՝ զինված ուժերի կառավարման կենտրոնական մարմինը (գլխավոր շտաբը), որը գործառնության կապերի շրջանակներում և իր իրավասության սահմաններում մասնակցում է նաև ռազմական քաղաքականության հայեցակարգային բաժինների փորձաքննության ապահովմանը³²:

Ինչպես յուրաքանչյուր պետության, այնպես էլ Հայաստանի Հանրապետության զինված ուժերը և ընդհանրապես, պաշտպանական համակարգը քարացած կառույց է, այն իշխանության գործառնության առանցքային օղակն է: Պետության ու հասարակության անընդհատ զարգացմանը զուգընթաց ավելանում է նաև Հայաստանի միջազգային վարկանիշն ու հեղինակությունը: Ուստի, Հայաստանի և հայ հասարակության ռազմական անվտանգությունն ապահովելու համար զինված ուժերը պետք է համաքայլ ընթանան աշխարհաքաղաքական բոլոր զարգացումներին:

Փոփոխվում են նաև Հայաստանի շուրջ ձևավորվող իրողությունները: Այսօր Հայաստանի Հանրապետությունը, իր կայացմանն ու հետագա զարգացմանը զուգընթաց, ավելի է ներգրավվում արտաքին ռազմաքաղաքական գործընթացներում, անդամակցում տարածաշրջանային և միջազգային գանազան

³² «Պաշտպանական քաղաքականություն» հասկացությունը՝ որպես Հայաստանում պաշտպանական բարեփոխումների իրականացման տեսական-մեթոդականական գործիք // Քոթանջյան Հ.Ս., Անվտանգության քաղաքագիտական պրոբլեմներ, ԽՍՀՄ վերակառուցում-Ղարաբաղ, Հայաստան, Անդրկովկաս-Աֆղանստան, Եր., 2009, էջ 86

կազմակերպություններին, ստանձնում բազմաթիվ պարտավորություններ: Այստեղ տեղին է մեջբերել միջազգային և տարածաշրջանային անվտանգության ապահովման գործում սեփական պետության դերակատարության վերաբերյալ Իսրայելի պետության կողմից իրականացվող քաղաքականության հիմնաքարերից մեկը, այն է՝ պետական գործիչներն ու քաղաքական լիդերները պետք է հետևողական ուշադրություն դարձնեն պետության այն դերի վերաբերյալ գիտահետազոտական մտորումներին ու կանխատեսումներին, որոնք վերաբերում են սեփական պետության մասնակցությանը ազգային անվտանգային (Հայաստանի պարագայում կարևորում ենք հենց տարածաշրջանային անվտանգությունը) աշխարհի կառուցման գործընթացներին³³:

Սակայն միակողմանիորեն զարգացող, թեկուզև մարտունակ զինված ուժերով հնարավոր չէ միջազգային անվտանգության լծակների միաժամանակյա գործնական կիրառումը: Այս առումով Հայաստանի համար խնդիրը բարդ է. անհրաժեշտ է ստեղծել այն որակները՝ ինստիտուտները և չափանիշները, որոնց միջոցով հնարավոր կլինի զարգացնել երկրի զինված ուժերի բազմակողմանի հնարավորությունները և գործնականում կիրառելի դարձնել այդ լծակները: Դա է զինված ուժերի զարգացման և արդիականացման ուղին, հետևաբար՝ այդ նպատակներին ուղղված պաշտպանական բարեփոխումների իրականացումն անխուսափելի է:

Հայաստանի ռազմական անվտանգության ապահովման գործում զինված ուժերի առանձնացված դերը պայմանավորված է նաև առկա ռազմական սպառնալիքի ծավալով, բանակի համախմբող դերով ու համազգային բնույթով: Չինված ուժերը մշտապես պետք է զբաղվեն միայն իրենց խնդիրների կատարմամբ և երբեք ու ոչ մի պայմանով չեն քաղաքականության մեջ: Սակայն, ամուր, կարգապահ ու մարտունակ բանակը, հեռու մնալով քաղաքականությունից, միաժամանակ միշտ էլ գտնվելու է երկրի «քաղաքականության կենտրոնում»՝ իր գոյությանմբ վստահություն, հպարտություն ու հավատ ներշնչելով ժողովրդին, զգաստացնելով իրեն վերաբերող

³³ Корнилов А.А., Безопасность превыше всего. Концепции внешней политики и национальной безопасности Государства Израиль: Монография, Н.Новгород, Изд-во ННГУ, 2005, стр. 83

աջ խարհաքաղաքական վիճակը և չեզոքացնելով ռազմական անվտանգության դեմ ուղղված սպառնալիքները: Եվ, իհարկե, միայն արդյունավետորեն օգտագործելով ողջ հայության ու Հայաստանում բնակվող ազգաբնակչության հսկայական ներուժն ու հնարավորությունները, հնարավոր է ապահովել վերոնշյալ պահանջներն արտահայտող, արդիական և հուսալի զինված ուժեր³⁴:

Ռազմական անվտանգության ապահովումը «թանկ հաճույք է» նույնիսկ ամենակայացած պետության ներքին համար: Այս առումով պաշտպանական բարեփոխումները նպատակ ունեն հնարավորություններ ստեղծել սահմանափակ ռեսուրսներն առավելագույն արդյունավետ օգտագործելու համար: Ու թեև ՀՀ զինված ուժերը, մյուս հարևանների հետ համեմատ, կայացած և մարտունակ կարելի է համարել՝ գործնականորեն ապացուցելով դեռևս Ղարաբաղյան պատերազմի տարիներին, սակայն բանակի ներկայիս հնարավորությունները կատարյալ չեն և շտկումների ու բարեփոխումների կարիք ունեն: Պաշտպանական բարեփոխումների խնդիրը զինված ուժերի կայուն և հեռանկարային զարգացման ապահովումն է, բոլոր ենթադրություններում կարողությունների բարձրացումը, նոր կարողությունների ստեղծումը:

Նախկին մյուս խորհրդային հանրապետությունների հետ գրեթե միաժամանակ, սակայն առավել անբարենպաստ պայմաններում ձեռնամուխ լինելով ազգային բանակի ստեղծմանը՝ Հայաստանը կարողացավ աներևակայելի կարճ ժամանակահատվածում ստեղծել կարգապահ ու մարտունակ զինված ուժեր, որոնք ներկայումս իրենց մարտական պատրաստության մակարդակով, բարոյահոգեբանական վիճակով առաջիններից են ԱՊՀ-ում, իսկ Հարավկովկասյան տարածաշրջանում համարվում են ամենամարտունակն ու առաջավորը³⁵: Սակայն, նման կարողություններն ու ձեռքբերումները պետք է զարգացվեն և շարունակական բնույթ ունենան:

³⁴ Բոթանջյան Հ.Ս., Հայաստանի ռազմական շինարարության ու զինված ուժերի ստեղծման որոշ ուղղություններ // Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները, Եր., ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ, 2010, էջ 533-543

³⁵ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի շնորհավորական խոսքը ՀՀ անկախության 20-ամյակի առթիվ ՀՀ զինված ուժերի զորահանդեսի ժամանակ, 21.09.2011թ., <http://www.president.am/hy/statements-and-messages/item/2011/09/01/news-93/>

Այսօր ՀՀ պաշտպանական ուժերում հաջողությամբ իրականացվում են մեծածավալ աշխատանքներ, որոնց շնորհիվ օրեցօր ավելանում են բանակի մարտական կարողությունները, ավելի է մեծանում վստահությունը սեփական ուժերի նկատմամբ: Արդյունքում ՀՀ զինված ուժերը հանդես են գալիս որպես մրցունակ, անընդհատ կատարելագործվող, բարեփոխվող և զարգացման ուղին բռնած կառույց՝ առաջնային կարևորության նպատակ ունենալով ՀՀ ռազմական անվտանգության երաշխավորումը³⁶:

Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոնի տնօրեն Ռիչարդ Կիրակոսյանի կարծիքով՝ Հայաստանը կայուն կերպով ամրագրել է իր ռազմական և անվտանգության ուժերի ռազմավարական հավասարակշռությունը: Այն նաև առաջ է անցել տարածաշրջանային ու միջազգային անվտանգության և կայունության սպասողի իր նախկին դերից՝ դառնալով վերջիններիս դինամիկ աջակցող: Սակայն, հավասարակշռությունը և ընդլայնված կարողությունը, արտաքին ուժն ու հզորությունը պահպանելու հարցում Հայաստանի հրամայականն այժմ ներքին խնդիրների վրա կենտրոնանալն է և նոր «երրորդ սերնդի» ռազմական բարեփոխումների գործընթացին լծվելը: Ռ. Կիրակոսյանը նշում է, որ պաշտպանության բարեփոխումների ավելի լայն ուժերում Հայաստանը ներկայումս մոտենում է մի կարևոր սահմանագծի, քանի որ ռազմական բարեփոխումները պետք է առաջ բերեն «երրորդ սերնդի» բարեփոխումներ: Ավելի կոնկրետ, «առաջին սերնդի» բարեփոխումների նախնական փուլում հիմնականում կարևորվում էր արդիական և մարտունակ զինված ուժերի ստեղծումը, ինչը նշանավորվեց հաղթանակով Ղարաբաղյան պատերազմում: Մարտական պատրաստականության բարձրացման և ավելի խիստ ռազմական գերակայության հաստատման հետպատերազմյան շրջանը կազմում էր ռազմական բարեփոխումների «երկրորդ սերունդը»:

«Երկրորդ սերնդի» պաշտպանության բարեփոխումների ժամանակ ՀՀ զինված ուժերը՝ որպես ինստիտուտ, ավելի են ուժեղացվել՝ նրանց ծանոթացնելով ժողովրդավարական բարեփոխումներին, որը

³⁶ ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի ելույթը ՀՀ զինված ուժերի կազմավորման 20-րդ տարեդարձին նվիրված հանդիսավոր միջոցառման ժամանակ, 28.01.2012թ., <http://www.mil.am/hy/news/2095>

բնորոշվում է ռազմական հնարավորությունների քաղաքացիական վերահսկողությամբ: Վերջինս իրենից բավականին լուրջ ձեռքբերում է ներկայացնում: Սակայն, այս պարագայում, որպեսզի Հայաստանը ամրապնդի իր ռազմական առավելություններն ու ուժի գերակայությունը, ժամանակն է «երրորդ սերնդի» բարեփոխումների իրականացման համար: Բարեփոխումների նոր մակարդակի հրամայականը պետք է կենտրոնանա զինված ուժերի ներքին խնդիրների, հատկապես խաղաղ պայմաններում գրանցվող մահվան դեպքերի և զինվորական պաշտոնյաների նկատմամբ «գրոհանդուրժողականության» նոր քաղաքականության կիրառման վրա³⁷:

Վերլուծելով Հայաստանի երրորդ Հանրապետության կայացումից սկիզբ առած պաշտպանության բնագավառի միջոցառումների և վարվող քաղաքականության հետագա փոփոխություններն ու զարգացումները, պաշտպանական բարեփոխումների գործընթացը կարելի է բաժանել հետևյալ 3 հիմնարար փուլային տարանջատումների.

1. հայեցակարգային մոտեցումների որդեգրում, ռազմական դոկտրինի մշակում և հայեցակարգային հիմքերի բարեփոխումների իրականացում՝ ՀՀ ռազմական անվտանգության ապահովման հիմնադրույթների, ռազմական անվտանգության ապահովման համակարգի, դրա կառուցվածքի, խնդիրների, գործունեության և զարգացման ուղղությունների ու նպատակների հստակեցման նպատակով – 2007-2008թթ.,

2. պաշտպանության ռազմավարական վերանայում՝ զինված ուժերի առկա հնարավորություններին և արդիականացման անհրաժեշտությունների, պահանջվող բարեփոխումների որոշում ու պլանավորում – 2008-2010թթ.,

3. գործնական բարեփոխումների և առանձին ենթակառուցվածքների իրականացում՝ զինված ուժերի համար

³⁷ Giragosian Richard, Armenian Military and Security Policy: Regaining a Strategic Balance, 06.12.2012, <http://regional-studies.org/hy/publications/rsc-analysis/115-061212>

հասանելի ազգային և միջազգային հնարավորությունների կիրառմամբ, 2010-2015թթ.³⁸:

Հայաստանի շուրջ ձևավորված աշխարհաքաղաքական ու պաշտպանական-անվտանգային իրողությունները հիմնավորում են պաշտպանական բարեփոխումների առանցքային բնույթը և ժամանակային կայուն պարբերականությունը: Նման պայմաններում անընդունելի և ոչ արդյունավետ կլինի խնդրի լուծումը կապել նեղ ժամկետների ու վերափոխումների անցկացման արագության վրա, ինչի պարագայում ՀՀ զինված ուժերը չեն կարող լիարժեք հանդես գալ պետության անվտանգության երաշխավորման կարևոր դերակատարի կարգավիճակում: Համեմատական առումով կարելի է նշել, որ, օրինակ, Ռուսաստանի Դաշնությունում իրողությունները այլ կերպ դասավորվեցին, գրեթե նույն ժամանակահատվածում՝ 2008 թվականին սկիզբ առած բարեփոխումներում հատուկ շեշտադրում արվեց դրանց օպերատիվության վրա, որոնց կազմակերպչական հիմնական մասի ավարտ նշվում է 2009 թվականի դեկտեմբերի 1-ը³⁹: Հայաստանի Հանրապետությունում պաշտպանական բարեփոխումների փուլայինությունը ավելի հիմնարար և փոխկապակցված իրականացվեց հետևյալ համամասնությամբ.

ՓՈՒԼ 1 - Պաշտպանության հայեցակարգային հիմքերի ստեղծում և զարգացում

Ազգային անվտանգության ռազմավարության ընդունումը⁴⁰ հայեցակարգային առումով նախանշեց ՀՀ պաշտպանական դոկտրինի քաղաքական և ռազմաքաղաքական ուղղվածությունը: Հետևաբար,

³⁸ Քոչարյան Ս.Տ., Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովումը ազգային անվտանգության համատեքստում, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 212-213

³⁹ Военная реформа: на пути к новому облику Российской Армии, Аналитический доклад международного дискуссионного клуба «Валдай», 19 Июль, 2012, М., стр. 3, http://vid-1.rian.ru/ig/valdai/Military_reform_rus.pdf

⁴⁰ ՀՀ նախագահի հրամանագիրը «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին», ՀՀ ՊՏ 2007.02.15/11, 07.02.2007: Հայաստանի պետականության մեջ ազգային անվտանգության առաջին ռազմավարության հիմնական մեթոդաբանական ուղենիշների համատեքստում ընդգծվում է, որ նման փաստաթղթերի միաբայլ կամ երկբայլ մշակման վերաբերյալ ամերիկյան և եվրոպական գործընկերների այլ ընտրանքային առաջարկներից Հայաստանի համար ընտրվեց ամերիկյան միաբայլ մոտեցումը: Լրացուցիչ տես՝ Քոթանջյան Յ.Ս., Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության միջգերատեսչական մշակման մեթոդաբանություն մասին // ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի աշխատանքային տետրեր, 2007, հմ. 1 (1), էջ 23

պաշտպանական ու որտի դոկտրինը կազմվեց Ազգային անվտանգության ռազմավարության փաստաթղթի հիման վրա, համահունչ է Ազգային անվտանգության ռազմավարության դրույթներին և լիարժեքորեն սահմանում է գինված ուժերի՝ ազգային անվտանգությանն առնչվող պարտականությունները⁴¹:

Ռազմական դոկտրինը ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի կողմից օգտագործվել է նաև ՁՈՒ տարբեր օղակների, ինչպես նաև ռազմական ստորաբաժանումների քանակի և տեսակի, մարտական խնդիրների սահմանման համար: Փաստաթուղթը ընդհանուր առմամբ սահմանել է նաև պաշտպանական համակարգի կազմակերպչական քաղաքականությունը՝ ներառելով ՊՆ և ԳՇ տարբեր ստորաբաժանումների գործառնությունների ու պարտականությունների ուղղվածությունը:

Ռազմական դոկտրինը նկարագրում է ՀՀ գինված ուժերի դերն ու առաքելությունը և ծառայում է որպես սկզբունքային փաստաթուղթ բարեփոխումների ուղղորդման համար: Եթե ՀՀ գինված ուժերի համար դոկտրինը, լինելով մեկ միասնական ռազմավարական փաստաթուղթ, պետք է ուղեցույց հանդիսանա Պաշտպանության նախարարության, ՁՈՒ գլխավոր շտաբի և ընդհանրապես, պաշտպանական համակարգի համար պատասխանատու այլ պետական գերատեսչությունների համար, ապա ՀՀ Ազգային ժողովի, կառավարության, պետական և հասարակական այլ օղակների համար այն դառնում է ազգային անվտանգության, պաշտպանական քաղաքականության և դրա ֆինանսավորման նպատակով հասարակական աջակցության ապահովման բաղադրիչ:

ՀՀ ռազմական դոկտրինը, հանդիսանալով ՁՈՒ հիմնական հայեցակարգային հիմքը, բաց փաստաթուղթ է, ինչը թույլ է տալիս այն տարածել հասարակության շրջանում: Բացի այդ, դոկտրինը հայտարարում է նաև Ազգային անվտանգության ռազմավարությունում սահմանված ռազմական բաղադրատարրերի իրականացմանն ուղղված ընդհանուր ռազմավարությունը՝ կարևորելով նաև պաշտպանական համակարգում վերահսկողական գործառնությունների իրականացումը:

⁴¹ ՀՀ նախագահի հրամանագիրը «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը հաստատելու մասին», ՀՀ ՊՏ 2008/1, 25.12.2007

Ժողովրդավարական արժեքային համակարգում որպես զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության առավել արդյունավետ միջոց առանձնացվում է նաև «հասարակական կամ արտապետական վերահսկողությունը»։ Պաշտպանության ոլորտում ժողովրդավարության դրսևորման շրջանակներում հատուկ կարևորություն ունի տվյալ հասարակությունում գործող և իրականությունն չկտրված «օբյեկտիվ քաղաքացիական վերահսկողությունը», որն իր մեջ ներառում է մի շարք առանցքային հատկանիշներ՝ զինծառայողների արհեստավարժությունը և սեփական իրավասությունների սահմանների գիտակցումը, զինծառայողների ենթարկվելը (դեկավարումը) պետության քաղաքական դեկավարության կողմից, միաժամանակ երկրի քաղաքական վերնախավի կողմից զինված ուժերի որոշակիորեն ինքնուրույնության ամրագրումը, ինչպես նաև արդյունքում զինծառայողների միևնույն քաղաքականացվածությունը և փոխադարձաբար քաղաքականության միևնույն ազդեցությունը զինված ուժերի գործունեության վրա⁴²։

Ընդհանուր առմամբ, քաղաքացիական («արտապետական») վերահսկողություն տերմինը պայմանական է և նկատի է ունեցվում այնպիսի հաստատությունների վերահսկողական գործունեությունը, որոնք պետական իշխանության մաս չեն կազմում, սակայն ակտիվ կերպով մասնակցում են պետական քաղաքականության իրականացմանը⁴³։ Պաշտպանական ոլորտի դոկտրինը նաև անհրաժեշտ է բանակ-հասարակություն կապն ամրապնդելու, հասարակության մեջ զինված ուժերի նկատմամբ վստահությունն ամրապնդելու համար, ուստի այն պետք է պաշտպանական բոլոր ոլորտներում հասարակական վերահսկողության գործունեմեխանիզմներ նախատեսի։

Այդպիսով, ՀՀ ռազմական դոկտրինը հանդիսացավ պաշտպանության բնագավառի և զինված ուժերի համար օրենսդրական, հայեցակարգային և բարեփոխումների համար մեկնարկային հիմնական փաստաթուղթը։

⁴² Samuel P.Huntington, The Soldier and the State: The Theory and Politics of Civil-Military Relations /Cambridge: Harvard University Press/, 1957, pp. 83-85

⁴³ Ավետիսյան Ա., Չինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության հարցի շուրջ ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվան ԱՌՀ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2008, հ.մ. 2-3 (56-57), էջ 80-83

ՓՈԻԼ 2 - Պաշտպանության նազմավարական վերանայում և նազմական կարողությունների զարգացում

Ռազմական դոկտրինի մշակումից և ընդունումից հետո ՀՀ պաշտպանության նախարարությունը ձեռնամուխ եղավ Պաշտպանության նազմավարական վերանայման գործընթացին: Այն անհրաժեշտ էր պաշտպանական բարեփոխումները ճիշտ ուղղորդելու, արդիականացման և զարգացման հեռանկարը պլանավորելու համար: Այսինքն, պաշտպանության նազմավարական վերանայման գործընթացը ՀՀ զարգացման առաջնահերթությունների և բարեփոխումների համատեքստում որոշում է նազմական միջոցներով պաշտպանության իրականացման համար ՁՈԻ առկա կարողություններն ու պահանջվող անհրաժեշտությունները՝ ըստ այդմ հստակեցնելով բարեփոխումների նպատակները⁴⁴: Պաշտպանության նազմավարական վերանայման գործընթացի համապարփակ վերլուծությունը և համադրումը պաշտպանական բարեփոխումների հիմնական նպատակների հետևերկայացվի ատենախոսության 3-րդ գլխում:

Մինչև 2008թ. ՁՈԻ-ում գոյություն ունեին յուրաքանչյուր ուղղությամբ ուժերի և միջոցների, այլ կերպ ասած՝ կարողությունների զարգացման առանձին պլաններ կամ ծրագրեր, սակայն դրանք փոխկապակցված չէին և չէին հատվում նազմավարական նպատակների մեկ միասնական կիզակետում: Մարտավարական խնդիրների և նազմավարական նպատակների միջև առկա բացը լրացնելու համար 2008 թվականից սկսվեց իրականացվել ՀՀ պաշտպանության նազմավարական վերանայումը: Կարևոր է փաստել, որ նման ծրագրային վերանայմամբ պաշտպանական բարեփոխումների նպատակով ձեռնարկվող և հաճախ տարանջատված բնույթ ունեցող գործողությունները միատեղվեցին մեկ ընդհանուր հանգույցում, այն է՝ զինված ուժերի զարգացման պլանը, որը կոչված է հուսալի պաշտպանական կարողություն, վերականգնման, արդիականացման և նազմական ներգրավման միջոցով

⁴⁴ Լրացուցիչ տես ՀՀ ՊՆ պաշտպանության նազմավարական վերանայում, ՀՀ ՊՆ պաշտոնական կայք, <http://www.mil.am/media/2015/07/832.pdf>

ապահովելու պաշտպանության ոլորտի երկարաժամկետ և կայուն զարգացումը⁴⁵:

ՀՀ զինված ուժերի առկա կարողությունները գնահատելուց ու վերանայելուց բացի, ռազմավարական վերանայումը պետք է օգտագործվի նաև ներկա և տեսանելի հեռանկարում ռազմաքաղաքական միջավայրի գնահատման նպատակով՝ այդ կերպ վերաբնութագրելով առկա սպառնալիքները և հաստատելով ռազմական գործունեության առաջնայնությունները, ինչը պաշտպանական բարեփոխումների իրականացման գործում հնարավորություններ կստեղծի թույլատրելի ռիսկերի որոշման համար:

Վերանայման գործընթացը կարևոր է նաև սպառնալիքներին դիմակայելու համար ՀՀ ՁՈՒ ստորաբաժանումներից պահանջվող պատրաստականության վիճակի սահմանման տեսանկյունից: Վերանայման արդյունքները հիմք են հանդիսանում ռազմական կարիքները որոշելու և ՀՀ զինված ուժերի օպտիմալ կառուցվածքը երկարաժամկետ հեռանկարով պլանավորելու համար:

Այս ամենը կիրառվում է զինված ուժերի թվաքանակի, սպառազինության, ստորաբաժանումների, զորատեսակների և ընդհանրապես, Հայաստանի պաշտպանության կառուցվածքում կերպ ազդող կառուցվածքում հետագա փոփոխություններ իրականացնելու համար: Պաշտպանության ռազմավարական վերանայման արդյունքում անհրաժեշտություն առաջացավ վերանայելու ևս մեկ անգամ հիմնավորել ՀՀ ՁՈՒ ստորաբաժանումների տեղակայման աշխարհագրությունը՝ հիմքում ունենալով ենթակառուցվածքի օպտիմալացումը, ինչը հանգեցնում է միմյանց կրկնող օղակների, ծախսերի և ռեսուրսների կրճատմանը:

Պաշտպանության ռազմավարական վերանայմանը գուցենթաց իրականացվեց նաև զինված ուժերի հրամանատարական ուղղահայացի վերանայումը, որի էությունը կայանում է ՀՀ պաշտպանության նախարարության և ՁՈՒ գլխավոր շտաբի լիազորությունների ու գործառնությունների հստակ տարանջատումը: Սա անհրաժեշտ քայլ է զինված ուժերի հետագա զարգացումն ապահովելու համար, քանի որ

⁴⁵ Օհանյան Ս.Մ., Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը (համառոտ ուրվագիծ), Եր., 2012, էջ 354

բացի ներկայիս գործող համակարգի թերություններին, հաճախ միմյանց կրկնող ստորաբաժանումների առկայությունից, ՁՈԻ հրամանատարական ուղղահայացի վերանայումը նպաստում է նաև այս օղակի գործունեության արդյունավետության բարձրացմանը, հիմք է հանդիսանում պաշտպանական համակարգում պաշտպանական պլանավորման մարմինների կատարելագործման, գինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկման մեխանիզմների ամրապնդման համար: Փաստորեն, ռազմական դոկտրինի մշակումը և պաշտպանության ռազմավարական վերանայումը ստեղծում են բոլոր նախադրյալները երկրի պաշտպանության առանձին ենթաուղորտների արդիականացմանն ուղղված արդյունավետ քարտեզագծման իրականացնելու համար:

ՓՈԻԼ 3 - Բարեփոխումներն առանձին ուղորտներում, օրենսդրական բարեփոխումների անհրաժեշտությունը

Պաշտպանական առանձին ուղորտների արդիականացման բարեփոխումներ իրականացնելու համար առաջնահերթ էր զարգացնել կարերի պատրաստման և անձնակազմի կառավարման, պաշտպանական պլանավորման և բյուջետավորման, գորահավաքային և պահեստազորային համակարգի, թիկունքի և այլ բնագավառները: Ոչ պակաս կարևոր են գինված ուժերի ժողովրդավարական վերահսկման կառուցակարգերի կատարելագործումը:

Ընդ որում, պաշտպանական բարեփոխումների նպատակներն ու տրամաբանությունը նաև պաշտպանության ուղորտի օրենսդրական բարեփոխումների անհրաժեշտությունն են ստեղծում: Այս ուղորտում գործող օրենքները գինված ուժերի կարողություններին զարգացման շրջաններում արդեն լիարժեքորեն չէին արտացոլում բարեփոխումների ուղղությամբ որդեգրած նպատակներն ու հնարավորություններ չէին ընձեռում դրանք կյանքի կոչելու համար:

Պաշտպանական բարեփոխումների օրենսդրական ուղղվածության շրջանակներում համապատասխան կարգավորումներ և զարգացումներ անցկացվեցին հետևյալ հիմնական հարցերի վերաբերյալ.

- հրամանատարական ուղղահայացի վերանայումն ու ՀՀ գինված ուժերի ժողովրդավարական վերահսկման մեխանիզմների զարգացումը,

- ՀՀ պաշտպանության և խառնաժամանակային համակարգում քաղաքացիական հաստիքների ներդրումը և քաղաքացիական անձնակազմի սոցիալական ապահովումը,

- գործառնականության ու պահեստազորային համակարգի բարեփոխումները,

- զինված ուժերում զինծառայողների փոխհարաբերության ներկայագավորումը և իրավունքների պաշտպանության հոսսալի երաշխիքների ստեղծումը և այլն:

ՀՀ պաշտպանական բարեփոխումների իրավական ապահովման շրջանակներում ընդունվեցին «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին», «Պաշտպանության մասին», «ՀՀ ՁՈԻ կարգապահական կանոնադիրք» և այլ հիմնարար բնույթի օրենսդրական նորակտեր, ինչպես նաև փոփոխություններ և լրացումներ կատարվեցին «Զինվորական ծառայության անցնելու մասին», «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին», «Զինապարտության մասին» և «Այլ ընտրանքային ծառայության մասին», «Ռազմական ոստիկանության մասին», «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին», «Պետական կառավարչական հիմնարկների մասին» և այլ բազմաթիվ գործող օրենքերում: Նախատեսվեց քաղաքացիական հատուկ ծառայության ներդրումը ՀՀ ՊՆ համակարգում, ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանությանը վերապահվեցին որոշակի օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու իրավասություններ, հստակեցվեցին պաշտպանության ոլորտի կառավարչական համակարգի իրավական վիճակի առանձնահատկությունները, ՀՀ նախագահի կողմից հաստատվեց ՀՀ ՁՈԻ կառուցվածքը, իսկ կառավարության կողմից պաշտպանական գերատեսչության և ՁՈԻ ԳԾ կանոնադրությունների ու կառուցվածքների հետ միասին հաստատվեցին ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի կանոնադրություններ և կառուցվածքը, «ՀՀ ՊՆ աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի կարգավիճակը⁴⁶: Պաշտպանության ոլորտի օրենսդրական

⁴⁶ Լրացուցիչ տես Քոչարյան Ս.Տ., Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովումը ազգային անվտանգության համատեքստում, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 199-204

բարեփոխումներին վերլուծությանը ավելի համապարփակ կանդիդատության ատենախոսության երկրորդ գլխում:

Պաշտպանական բարեփոխումներին շրջանակներում որպես երկրի պաշտպանական և քաղաքացիական կարողությունների համադրման արդյունք հանդիսացավ «Շանթ-2015» ռազմավարական հրամանատարաշտաբային զորավարժությունը, որն իր ծավալով ու ընդգրկվածությամբ իսկապես աննախադեպ էր: Այն անցկացվեց 2015թ. սեպտեմբերի 3-ից 6-ը՝ պետական և տարածքային կառավարման գրեթե բոլոր մարմինների ներգրավմամբ: Չորավարժության ընթացքում խաղարկվեցին մի շարք իրավիճակներ, որոնց ընթացքում ցուցաբերված կատարողականությունը և գրանցված արդյունքները կարևոր նշանակություն ունեցան հատկապես պետական տարբեր մարմինների, և ընդհանրապես, հասարակության՝ բանակի շուրջ արագ համախմբվելու կարողության բարձրացման գործում⁴⁷: Ռազմավարական հրամանատարաշտաբային զորավարժության ընդհանուր մտահղացման ներքո սեպտեմբերի 3-12-ը ՀՀ ՉՈՒ ԳԾ ղեկավարության ներքո անցկացվեց օպերատիվ-մարտավարական զորավարժություն բանակային կորպուսների և ուժեղացման միջոցների հետ: Չորավարժությանը մասնակցեցին ոստիկանության, սահմանապահ զորքերի, տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության պաշտոնյաները, տեղական ինքնակառավարման մարմինները, իսկ ավարտական փուլին ներկա էին նաև ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարը, ՀՀ կառավարության և այլ գերատեսչությունների մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ:

Այսպիսով կարելի է ընդհանրացնել, որ ՀՀ-ում անցկացվող պաշտպանական բարեփոխումները կոչված են ստեղծել քաղաքացիական վերահսկման և պաշտպանական պլանավորման ու կառավարման ժողովրդավարական սկզբունքների վրահիմնված, արդիական ռազմական պահանջներին համապատասխանող, առավել ճկուն և ժամանակակից պաշտպանության համակարգ, որն ի գործու կլինի արդյունավետ ապահովելու ՀՀ ռազմական անվտանգությունը, պաշտպանելու ազգային

⁴⁷ ՀՀ նախագահ Ս.Սարգսյան, «Շանթ 2015» հրամանատարաշտաբային զորավարժությունները հասել են իրենց նպատակին, 12.11.2015թ., Նովոստի-Արմենիա, http://newsarmenia.am/am/news/armenia/shant-2015_hrmanatarashtabayin_zoravarzhutyunnery/

անվտանգության հիմնարար արժեքները, օպերատիվ արձագանքելու բոլոր ճգնաժամային իրավիճակներին և երաշխավորելու պետության միջազգային պարտավորության ներքին կատարումը:

1.3. Զինված ուժերի բարեփոխումները՝ որպես Հայաստանի Հանրապետության անվտանգության երաշխիք

Հարավային Կովկասի տարածաշրջանում տիրող լարված ռազմաքաղաքական իրադրությունը, հարևան պետության պարբերական սադրիչ հարձակումները պահանջում են մշտական զգոնություն, մարտական պատրաստության բարձր մակարդակի պահպանում՝ զրկելով «փորձի ու սխալի» կիրառման հնարավորությունից: Վերջին տարիներին ՀՀ պաշտպանական ոլորտում իրականացվող բարեփոխումները, զորքերի բարոյահոգեբանական ապահովման համալիր միջոցառումները, անձնակազմի հետ տարվող տեղեկատվական-դաստիարակչական աշխատանքում ներդրված նոր սկզբունքները և մոտեցումները, զինվորական կարգապահության ամրապնդման ուղղությամբ ձեռնարկված բազմալեկտոր կանխարգելիչ գործողությունները հանգեցրել են դրական արդյունքների՝ ՀՀ զինված ուժերը դարձնելով ավելի մարտունակ ու օրինակելի տարածաշրջանում:

Յուրաքանչյուր ժամանակաշրջան ունի իրեն բնորոշ մարտահրավերներ ու փորձություններ, որոնց համարժեք և ժամանակին հաղթահարումը միանշանակ ազդում է ժողովուրդների և պետությունների կենսունակության, նրանց զարգացման ու ապագայի վրա: Հայ ժողովրդի առջև ծառացած մարտահրավերների դիմակայման և հաղթահարման առաջնային նախապայմաններից է համահայկական բարոյակերտ արժեհամակարգի պահպանումն ու վերարտադրումը, Հայրենիք-Սփյունք գործակցության առավել ամրապնդման համար համապատասխան ինստիտուտների բազմազանեցումն ու արդիականացումը, կարևորագույն խնդիրների լուծման համար ջանքերի և ռեսուրսների համադրումը:

Անվտանգության այս օրվա աշխարհակառուցվածքը՝ իր բազմատարր և գործունե մեխանիզմներով հանդերձ, ենթարկվում է նոր, ոչ ավանդական փորձությանն ենթի, որոնց կանխարգելման եղանակները անընդհատ հղկման են ենթարկվում: Անվտանգության ժամանակակից համակարգի ստեղծման ձգտումները նպաստում են մի շարք ոչ համաչափ սպառնալիքների շարունակական զարգացմանը, ինչն իր հերթին հանգեցնում է դրանց կիրառման լծակների գլոբալ աճմանը: Եվ տրամաբանական է, որ չնայած աշխարհում նվազում է գլոբալ և կլասիկ պատերազմների հավանականությունը, այն չի հանգեցնում միջազգային անվտանգության ամրապնդմանը: Այլ ընդհակառակը՝ այդ անվտանգությունը դառնում է առավել փխրուն և խոցելի:

Նման պայմաններում գլոբալ աճվում են նաև առանձին պետությունների անվտանգության ապահովման խնդիրները, դրանք ավելի են փոխկապակցվում տարածաշրջանային և միջազգային անվտանգության հետ: Այսօր մեծ ու փոքր գրեթե բոլոր պետություններում, միջազգային և տարածաշրջանային կառույցներում ընթանում է անվտանգության հայեցակարգերի, սպառնալիքների հակազդման ավանդական մեխանիզմների արդիականացման գործընթաց, որը պայմանավորում է միջազգային ինտեգրացիոն գործընթացների ուղղվածությունը: Այս երևույթները ավելի ցայտուն են դրսևորվում այն տարածաշրջաններում, որտեղ ռազմաքաղաքական իրադրությունը դեռևս խմորումների, կայացման կամ փոփոխման փուլում է:

Հարավային Կովկասը, իր դրամատիկ պատմական ժառանգությամբ, միջէթնիկական հարաբերությունների բարդ խճանկարով, անվտանգության համաչափ և ոչ համաչափ սպառնալիքների լայն շրջանակով և բազում հակամարտություններով հանդերձ, յուրահատուկ տարածաշրջան է, որն իր վրա է կրում անվտանգության արտաքին և ներքին գործոնների հակասական ազդեցությունը: Եվ որպես այդպիսին՝ այդ բոլոր գործոնները ազդում են նաև ՀՀ անվտանգային միջավայրի վրա: Դրանից ելնելով ՀՀ ռազմական դոկտրինում սահմանվում է, որ ՀՀ ռազմական անվտանգության միջավայրը ձևավորում են ներպետական, տարածաշրջանային,

արտատարած աշրջանային և երկրի ազգային անվտանգության հիմնարար արժեքների վրա ազդող գործոնները⁴⁸:

Տարածաշրջանում շարունակում են չկարգավորված մնալ առկա գինված հակամարտությունները՝ առաջին հերթին Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը (թեժանալու միտումով): Կայունության համար ոչ պակաս քայլ քայլիչ են տարածաշրջանում առկա ռազմաքաղաքական հակասությունները, երբ պետությունները որդեգրել են տրամադժորեն տարբեր անվտանգության ու պաշտպանական ռազմավարություններ և տարբեր դաշինքներին ու ուժային կենտրոններին հարել ու քաղաքականություններ:

Այդ առումով Հարավային Կովկասի պետություններն ունեն «սեփական խաղը» վարելու սահմանափակ հնարավորություններ և ստիպված են հետևել տարածաշրջանի նկատմամբ արտաքին ուժերի հարաբերություններում «ուժի հավասարակշռության» տատանումներին: Չնայած Հայաստանը երկար ժամանակ համարվում է Ռուսաստանի ամենակարևոր դաշնակիցը Հարավկովկասյան տարածաշրջանում, այնուամենայնիվ, կարողանում է կայուն կերպով պահպանել հավասարակշռությունը Արևմտյան անվտանգության կառույցների ու կազմակերպությունների հետ: Այս կողմնորոշումը հիմնվում է ՆԱՏՕ-ի և Հայաստանի միջև ավելի սերտ ու ակտիվ հարաբերությունների, ինչպես նաև առանցքային գերտերությունների, այդ թվում՝ ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի հետ ռազմական փոխգործակցության էական ընդլայնման վրա:

Հայաստանը աստիճանաբար և կայուն կերպով վերականգնել է ռազմավարական հավասարակշռությունը անվտանգության ոլորտում՝ որպես Արևմտյան անվտանգության և մասնավորապես՝ Կոսովոյում, Իրաքում ու Աֆղանստանում խաղաղապահ գործողությունների եռանդուն աջակից: Այնուամենայնիվ, Հայաստանը միաժամանակ շարունակում է ցույց տալ իր դերը՝ որպես Ռուսաստանի՝ անվտանգության հավատարիմ ու վստահելի գործընկեր և որպես ՀԱՊԿ առանցքային անդամ:

⁴⁸ ՀՀ նախագահի հրամանագիրը «Հայաստանի Հանրապետության ռազմական դրկտրինը հաստատելու մասին», ՀՀ ՊՏ 2008/1, 25.12.2007

Անկախության ձեռք բերումից հետո անցած տարիների ընթացքում ՀՀ-ն անցավ պարտադրված գոյամարտով, դուրս եկավ հաղթանակած և կարողացավ արագ անցնել պետութենաշինության բուն գործընթացին: Պետական իշխանության մեծ ձեռքբերումներից էր բանակաշինության գործում արձանագրված արդյունքը: Որպես դրական արդյունք կարելի գնահատել այն, որ պատերազմական գործողության ընթացքին զուգահեռ զինված խմբավորումներից արդյունավետ անցում կատարվեց կանոնավոր բանակի:

Խստորեն պահպանելով զինվորականության նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ժողովրդավարական սկզբունքը՝ անհրաժեշտ է հստակ ամրագրել բանակի առանցքային տեղն ու դերը պետության անվտանգության երաշխավորման կառուցակարգում՝ միաժամանակ պաշտպանական ոլորտը զարգացնելով ծրագրային ու նպատակամղված բարեփոխումների միջոցով⁴⁹: ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը բանակաշինությունը գնահատում է որպես պետության և ժողովրդի անվտանգության երաշխավորման հիմնական գործոն՝ առանձնացնելով զինված ուժերի մարտունակություն և գործունեություն արդիականացումն ու արդյունավետություն բարձրացումը⁵⁰:

Պաշտպանական բարեփոխումների իմաստաբանական բնութագիրը արդի ժամանակներում համարվում է բավականին մշակված: Այն կազմում է ընդհանուր պետական բարեփոխումների առանցքային բաղկացուցիչ մասը (հատկապես ՀՀ կարգավիճակի երկրների համար), որը ավելի քան մեկ դար առաջ Վ. Դալը բացատրական բառարանում բնութագրել է որպես «նորույթ, բնականոն վերարտադրություն»⁵¹: Ավելի ուշ՝ 20-րդ դարի կեսերին, Ս.Ի.Օժեգովը բարեփոխում բառի իմաստը առաջարկեց հասկանալ «վերածնափոխում, փոփոխություն,

⁴⁹ ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի մամուլի ասուլիսը ՀՀ ՊՆ վարչական համալիրում 18.01.2013թ., <http://www.mil.am/hy/news/2558>

⁵⁰ ՀՀ նախագահի հրամանագիրը «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին», ՀՀ ՊՏ 2007.02.15/11, 07.02.2007

⁵¹ Даль В.И., Толковый словарь живого великорусского языка, СПб-М., Русский язык, 1882, Т. 4, стр. 93

հասարակական կյանքի այս կամ այն կողմի վերաձևակերպում»⁵²: ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվան ԱՌՀԻ-ի կողմից մշակված «Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական եռալեզու բառարանում» բարեփոխում եզրույթը ներկայացվում է որպես «որևէ բանի վերափոխում, փոփոխում, վերակառուցում»՝ առանձնացնելով նաև «պաշտպանական բարեփոխում» հասկացության թարգմանությունը ռուսերենով ու անգլերենով⁵³:

Ծարլ Դը Գոլը, վերլուծելով պետության գործունեության բովանդակությունը ռազմական վերափոխումների համատեքստում, առանձնացնում է առնվազն երեք խումբ հարցեր: Նախևառաջ, ռազմական ոլորտի բարեփոխումը կառավարման և կազմակերպչական ասպեկտն է՝ ուղղված գերագույն հրամանատարությանը և նպատակ ունենալով ուղղորդել ու ճիշտ պլանավորել երկրի պաշտպանական ներուժը: Երկրորդ խմբում առանձնացվում են զինված ուժերի անձնակազմի կառուցվածքային-գործառնային և ծառայողական պարտականությունների սահմանազատումը, ծառայության կազմակերպման սկզբունքներն ու դրանց կիրառման ձևերը: Եվ վերջապես, երրորդ խումբը ընդգրկում է բարեփոխման գիտատեխնիկական և նորարարական կողմը, որը ենթադրում է զինուժի տեխնիկական ու գիտական ադապտացիան աշխարհում դիտարկվող նվաճումներին⁵⁴: Օրինաչափ է նշել, որ այդ փոփոխությունները պայմանավորվում են շատ տարրերով, որոնք կախված են պետության զարգացման կոնկրետ պատմական պայմաններից: Այն կարող է կախված լինել նոր զինատեսակների, զինված հակամարտման ժամանակ կիրառվող սպառազինության տեսակների էվոլյուցիայով և բազմապիսի այլ հանգամանքներով:

Պետության ռազմական կազմավորումը բարդ, բազմապրոֆիլ ու բազմաշերտ համակարգ է: Լայն իմաստով այն իր մեջ ներառում է երեք

⁵² Ожегов С.И., Шведова Н.Ю., Толковый словарь русского языка: 80 000 слов и фразеологических выражений / Российская академия наук. Институт русского языка им. В. В. Виноградова. — 4-е изд., дополненное. — М.: Азбуковник, 1999, стр. 556

⁵³ Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն բառարան, Եր., ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվան ԱՌՀԻ, 2012, էջ 101

⁵⁴ Савинкин А.Е., Климов С.Н., Мандевилль Л., За профессиональную армию: Идеи Шарля де Голля и их развитие в XX веке, М.: Военный университет, 1998, стр. 92-93

հիմնական ենթահամակարգեր. առաջինը՝ ռազմական ուժը, այսինքն՝ զինված ուժերը, այլ գործառնականությունները և մարմինները, որոնք ներգրավված են զինված ուժերը գործադրելու քաղաքական որոշումների մեջ, երկրորդը՝ զինված ուժերի նյութատեխնիկական բազայի նախապատրաստումը և կիրառումը, այսինքն՝ պետության ու հասարակության տարրերի միասնությունը, իսկ երրորդը հանդիսանում է բարոյահոգեբանական և ռազմահայրենասիրական հոգևոր ներուժը: Այն կազմում է սոցիալական, բարոյա-էթիկական, ազգայնական, հոգեհուզական երևույթների ամբողջությունը՝ ուղղված զինվորական ծառայության և ռազմական հզորության կատարելագործմանը, որը բխում է պետության հասարակական կյանքի, ազգային հատկանիշների, ավանդույթների ու հայրենիքի պաշտպանության նկատմամբ վերաբերմունքից: Նեղիմաստով ռազմական կազմավորումը իրենից ներկայացնում է ՁՈԻ, գործառնականությունների ղեկավարման ու զինվորական կառավարման մարմինների համախումբ, որոնց միասնական և համակարգված գործողություններն ուղղված են ազգային անվտանգության խնդիրների լուծմանը, հասարակության կյանքի կարևոր ոլորտների բնականոն գործունեության ապահովմանը:

Ռուսաստանի Դաշնության անվտանգության խորհրդի նախկին քարտուղար Ա.Նիկոլանը տալիս է պաշտպանական բարեփոխումների ավելի ընդհանրական բացատրություն՝ դրա տակ հասկանալով պետության ռազմական քաղաքականությունը, որն ուղղված է ռազմական շինարարության կատարելագործմանը⁵⁵: Այն համարվում է նաև քաղաքական ու սոցիալական վերափոխումների բաղկացուցիչ մաս, որոնք միասին ապահովում են պետության անվտանգությունն ու պաշտպանությունը, նրա կառուցողական դերն ու ազդեցությունը ժամանակակից աշխարհում:

Չինվորական բնույթի բարեփոխումների բովանդակային մասը կարելի է ներկայացնել որպես զինվորական համակարգի էական ձևափոխում, որը կատարվում է պետական իշխանության գերագույն մարմինների որոշմամբ: Ընդ որում, այդ բարեփոխումները պայմանավորվում են պետության քաղաքական որոշումներով,

⁵⁵ Николаев А., Абстрактная доктрина абстрактного государства // Независимое военное обозрение, 1999, Вып. 4, стр. 26

սպառազինության նոր տեսակների ստեղծմամբ, տնտեսական հենքի ավելացման նախաձեռնություններով, սպառազինությունների արտադրության մակարդակի բարձրացմամբ, զինված պայքարի ձևերի կատարելագործմամբ և այս բոլորը միասին իրավական ամրագրում են ստանում համապատասխան օրենքներով, զինվորական կանոնադրություններով ու այլ նորմատիվ փաստաթղթերով⁵⁶։ Օրինակ, Ռուսաստանի Դաշնությունում պաշտպանական բարեփոխում կատեգորիայի բովանդակությունը բացահայտված է «Զինվորական բարեփոխումների մասին» օրենքում՝ ընդունված 1999 թվականին։ Այն իր մեջ ներառում է քաղաքական, տնտեսական, իրավական, զինվորական և ռազմատեխնիկական, սոցիալական ու այլ համալիր միջոցառումներ, որոնք ուղղված են ՌԴ ՁՈԻ, այլ զորամիավորումների, զինվորական գործադիր մարմինների, ռազմական արդյունաբերության և դրանց կառավարման մարմինների որակյալ ձևափոխմանը, որի նպատակն է սեփական ռեսուրսների հաշվին պաշտպանության բավարար ապահովումը⁵⁷։ ՌԴ ՁՈԻ գլխավոր շտաբի պետի նախկին տեղակալ գեներալ -գնդապետ Վ.Մանիլովի տեսակետի համաձայն՝ ռազմական բնագավառի ժամանակակից բարեփոխումները իրենցից ներկայացնում են պետության ռազմական կարողությունների քանակական ու որակական փոփոխությունների միասնություն, որն ուղղված է դրա համապատասխանեցմանը ազգային շահերին, աշխարհաքաղաքական և ռազմաքաղաքական նոր իրողությունների գնահատմանն ու դրանց համարժեք սեփական հնարավորությունների օպտիմալացմանը⁵⁸։

Հայաստանի շուրջ ձևավորված անվտանգության միջավայրից բխող բազմաթիվ համաչափ և անհամաչափ, ներքին ու արտաքին, տարածաշրջանային և արտատարածաշրջանային մարտահրավերների չեզոքացման խնդիրները, ձևերը և եղանակներն առավել ապես պայմանավորում են ՀՀ ռազմական դոկտրինի բնույթն ու բովանդակությունը, այդ թվում՝ ռազմական ռազմավարության սկզբունքները, նպատակները և խնդիրները, պաշտպանական համակարգի

⁵⁶ Военный энциклопедический словарь, М., Воениздат, 1983, стр. 633

⁵⁷ Арбатов А.Г., «Военная реформа», <http://www.nypl.org/research/chss/subguides>

⁵⁸ Манилов В., "Военная реформа - ответ на вызов времени", "Красная звезда", 12.01.1999г., <http://flot.com/today/ref8.htm>

կառուցվածքն ու զարգացման հեռանկարները, քանի որ նման պայմաններում հարկ է էապես վերաիմաստավորել անվտանգության վերաբերյալ ավանդական պատկերացումները՝ զգալի չափով ընդլայնելով անվտանգությանը, այդ թվում՝ պաշտպանական անվտանգությանն առնչվող հարցերի շրջանակը: Դրա հետևանքով անհրաժեշտություն է ծագում վերանայել ու ինչպես պետության պաշտպանական համակարգի առջև դրվող խնդիրների ցանկը, զինված ուժերի կիրառման պայմաններն ու պահանջները, այնպես էլ զինված ուժերի թվաքանակը, կառուցվածքը, ռազմատեխնիկական քաղաքականությունը, մարտական պատրաստականությունը և էությունն ու ուղղվածությունը:

Ռազմական դոկտրինի համաձայն՝ ՀՀ ռազմական անվտանգության համակարգի բարեփոխումների առաջնային նպատակը քաղաքացիական վերահսկման և պաշտպանական պլանավորման ու կառավարման ժողովրդավարական հիմնարար սկզբունքների վրահիմնված, արդիական պահանջներին համապատասխանող, առավել ճկուն և ժամանակակից ռազմական անվտանգության համակարգի ստեղծումն է, որը կապահովի երկրի ռազմական անվտանգությունը, կպաշտպանի ազգային անվտանգության հիմնարար արժեքներն ու կապահովի միջազգային պարտավորությունների կատարումը⁵⁹: Այդ բարեփոխումների կարևոր առաջնահերթություններ են ՉՈՒ-ում գործող ռազմական չափանիշների կատարելագործումը, անվտանգության ապահովման առաջատար համակարգերի և դաշնակից երկրների պաշտպանական համակարգերի ու ՉՈՒ հետ համատեղելիության և փոխգործակցության, նաև ճգնաժամային իրավիճակներին արագ արձագանքել ու կարողությունների զարգացումը՝ ազգային խնդիրներին ծառայեցնել ու միջազգային առաքելություններ իրականացնել ու նպատակով:

Ավելին, պաշտպանության ոլորտի բարեփոխումների տեսանկյունից Հայաստանը շարունակում է խորացնել իր կապերն Արևմուտքի հետ, որն արտահայտվում է երկու հիմնական մակարդակներում: Առաջինը երկկողմ հարաբերությունների

⁵⁹ ՀՀ նախագահի հրամանագիրը «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը հաստատելու մասին», ՀՀ ՊՏ 2008/1, 25.12.2007

մակարդակն է: Հայաստանը մեծապես ընդլայնել է իր հարաբերությունները՝ կնքելով երկկողմ համաձայնագրեր մի շարք Արևմտյան պետությունների հետ: Երկրորդը, բազմակողմ հարաբերությունների մակարդակն է: Հայաստանը ամրապնդել է իր ինստիտուցիոնալ համագործակցությունը ՆԱՏՕ-ի հետ, հատկապես Գործընկերություն և հանուն խաղաղության ծրագրի շրջանակներում: Սակայն Հայաստանի համար, որպես Հարավային Կովկասում ՀԱՊԿ անդամ միակ պետություն, ինչպես նաև միակ պետություն, որն իր տարածքում բնդունում է օտարերկրյա (ռուսական) ռազմաբազա, հավասարապես կարևոր է այն, որ Հայաստանը միաժամանակ ամրապնդել է ռազմավարական հարաբերությունները Ռուսաստանի հետ:

Այս միտումը ռազմական և անվտանգության ոլորտների բարեփոխումներում խթանել է «փոխլրացման» որոշակի մակարդակի ձևավորումը, որը հիմնված է ՌԴ հետ «ռազմավարական դաշինքի» և Արևմտամետ կողմնորոշման հակասական ազդակների հավասարակշռման քաղաքականության վրա: Նման մարտավարությունը նպաստել է ՀՀ ռազմավարական կարևորության ավելացմանը Արևմուտքի հետ գործակցությամբ, ինչպես նաև իր դերի բարձրացմանը՝ որպես ՌԴ վստահելի տարածաշրջանային դաշնակից⁶⁰: Չնայած Հայաստանը դեռևս կախվածության մեջ է ռուսական զինամթերքից և զեղչված գեների ձեռքբերման հնարավորություններից (որոնք ձեռք են բերվել ՀԱՊԿ-ի շրջանակներում), գործառնական պատրաստվածության, հայեցակարգային հիմքերի և կարողությունների արդիականացման տեսանկյունից ՀՀ պաշտպանության ոլորտի բարեփոխումները ձեռք են բերել որոշակիորեն արևմտամետ հեռանկար:

Անցած տարիների կտրվածքով ակտիվորեն շարունակվել և ընդլայնվել է Հայաստանի Հանրապետության միջազգային պաշտպանական և ռազմական համագործակցությունը՝ երկկողմ և բազմակողմ ձևաչափով հիմնականում ուղղվելով ՀՀ միջազգային ռազմաքաղաքական դիրքերի ամրապնդման, ՀՀ ՁՈՒ զարգացման և միջազգային ներգրավման խնդիրներին: Երկկողմ ձևաչափում առավել մեծ ծավալի համագործակցային միջոցառումներ են իրականացվել ՌԴ,

⁶⁰ Տե՛ս նաև Giragosian Richard, Armenian Military and Security Policy: Regaining a Strategic Balance, 06.12.2012թ., <http://regional-studies.org/hy/publications/rsc-analysis/115-061212>

ԱՄՆ-ի, Գերմանիայի, Չինաստանի, Ռուսաստանի, Լեհաստանի, Բելառուսի հետ: Բազմակողմ հարթությունում առավել բազմաթիվ տարաբնույթ միջոցառումներ են իրականացվել ՅԱՊԿ-ի, ՆԱՏՕ-ի, ԱՊՀ-ի, ԵԱՀԿ-ի և Եվրամիության հետ հարաբերությունների շրջանակներում: ՀՀ պաշտպանական գերատեսչությունը մասնակցում է մարդու իրավունքների ոլորտում ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի, ԵԱՀԿ-ի և այլ մեխանիզմներին:

ՀՀ ռազմական քաղաքականության ևս մեկ առաջնահերթությունն այն է, որ նրաներքին քաղաքիչ ղ պետության ռազմական կազմավորման արդյունավետ շինարարությունն ու պատրաստությունն է, որի մեջ բացի զինված ուժերից մտնում են նաև ռազմական բնույթի հատուկ միջոցներով ռազմական անվտանգության խնդիրների կատարման համար նախատեսված մարմինները, դրանց կառավարման մարմինները, ինչպես նաև երկրի արդյունաբերական ու գիտական համալիրների այն մասը, որը նախատեսված է ռազմական անվտանգության ապահովման համար: Արդյունավետ ռազմական կազմակերպության շինարարության համար անհրաժեշտ է նրա թվաքանակը, մարտական կազմը, կազմակերպական-հաստիքային կառուցվածքը, կառավարման համակարգերի և ապահովման մյուս տեսակների կարողությունները հասցնել արդյունավետ մակարդակի: Պարտադիր նախապայմաններից է ռազմական անվտանգության ապահովմանն ուղղված նյութական ռեսուրսների և դրամական միջոցների իրացման օպտիմալացումը, պետության ռազմական կազմակերպության, դրա բոլոր բաղադրիչների փոխադրված, համակարգված բարեփոխման հիման վրա դրանց օգտագործման արդյունավետության բարձրացումը: Եվ այս համատեքստում պետք է ընդգծել, որ ռազմական ոլորտի բարեփոխումների կարևորագույն մասը բուն զինված ուժերի և դրա կառավարման համակարգի վերակառուցումն է, որը ներառում է զորքերի և կառավարման մարմինների կառուցվածքային կատարելագործումը, զինված ուժերի մարտական կարողությունների զարգացումը, արդի սպառազինության վերազինումը⁶¹:

⁶¹ Քոչարյան Տ.Տ., Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգությունը ազգային անվտանգության համատեքստում, Եր., 2012, էջ 198

Պաշտպանական ուժերի կառավարման համակարգի օպերմալացման միջոցով Հայաստանի անվտանգության պաշտպանական բաղկացուցչի առավելագույնս ապահովման նպատակով մասնագետների կողմից արդարացիորեն առաջարկվում է Հայաստանի Հանրապետության՝ որպես ժողովրդավարական ու իրավական պետության պաշտպանական ուժերի կառավարման համակարգի տարբերակը, որը ներառում է պաշտպանական ուժերի կառավարման արևմտյան մոտեցման հիմնական տարրերը և դրանով իսկ հնարավորություն կընձեռվի մշակել ու վարել ու արդյունավետ պաշտպանական (ռազմաքաղաքական) քաղաքականություն⁶²:

Ինչպես ցանկացած գործում, այնպես էլ պաշտպանական բարեփոխումների հաջողությունը կախված է նաև նպատակի հստակ գիտակցումից, իսկ այնուհետև գործողությունների ճիշտ ու իրատեսական պլանավորումից: Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր օղակի ղեկավար պաշտոնյաուն հրամանատար պետք է գիտակցի, թե որտեղ է կանգնած իր ենթակայության տակ գտնվող ստորաբաժանումը, ուր է տանում այդ ստորաբաժանումը, և ինչպես պետք է հասնել նպատակին: Պլանավորման գործընթացը կարևորվում է նաև այն պատճառով, որ ցանկացած օղակի գործունեության արդյունավետությունը գնահատվում է ոչ միայն տվյալ պահին տրված հանձնարարության արագ կատարման, այլ նաև գինված ուժերի խնդիրների լուծումն առավել լայն շրջանակում և առավել երկարատև հեռանկարում տեսնել ու ունակության հիման վրա:

Ամփոփելով ատենախոսության առաջին գլխում ներկայացված վերլուծությունը՝ պետք է փաստել, որ ՀՀ զինված ուժերում շարունակաբար իրականացվող պաշտպանական բարեփոխումները կոչված են ապահովել ու այնպիսի պաշտպանական համակարգ, որն ի վիճակի կլինի ոչ միայն համապատասխան կերպով արձագանքել ու ներկայիս և մոտ հեռանկարի սպառնալիքներին ու մարտահրավերներին՝ հուսալի կերպով չեզոքացնելով դրանք, այլ և ազդել ու տարածաշրջանի անվտանգային-ռազմաքաղաքական միջավայրի

⁶² Զոթանջյան Յ.Ս., Զիլինգարյան Դ.Ս., Ավետիսյան Վ.Պ., Մինասյան Ա.Ա., Պաշտպանական քաղաքականությունն հասկացությունը՝ որպես Հայաստանում պաշտպանական բարեփոխումների իրականացման տեսական-մեթոդաբանական գործիք // ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվան ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2009, հմ. 1-2 (59-60), էջ 8-22

վրա: Անհրաժեշտ է նաև, որ ՀՀ ՁՈՒ-ն և ծառայությունն անցնող անձնակազմը լինեն կարգապահ, հայրենասեր ու բարձր բարոյական արժեքների դավանող, ինչը կարևոր նախապայման է մարտունակ ու մարտապատրաստ ռազմական կազմավորման համակարգ ու երաշխավորված ռազմական անվտանգության միջավայր ունենալ ու համար:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

2.1. Պաշտպանություն ու որսի կառավարման առանձնահատկությունները

Մարդկության պատմությունը ցույց է տալիս, որ պետությունների առջև մշտապես ծառացել են խնդիրներ՝ կապված դրանց գոյատևման և աշխարհում դերակատարություն ունենալ ու հետ, որից ելնելով յուրաքանչյուր պետություն հոգ է տարել իր անվտանգության և պաշտպանության մասին: Պետություններին վերաբերող իրավիճակները, պայմանները և սպառնացող վտանգները բարձրացնում են նոր մարտահրավերներ, որոնց իմաստավորումը գիտավերլուծական ու հետազոտական առաջնահերթ խնդիրներից է: Պետությունը, համաձայն ներկայումս առավել տարածում գտած մոտեցման, օժտված է երեք հիմնական հատկանիշներով՝ տարածք, բնակչություն և ինքնիշխանություն: Այս հատկանիշների միաժամանակյա առկայությունը պետություններին հնարավորություն է տալիս ինքնուրույն հանդես գալ միջազգային հարաբերություններում, գործել որպես միջազգային հանրության լիարժեք անդամ⁶³:

Յուրաքանչյուր երկրի պետական կառուցակարգի կազմակերպման և գործունեության հիմքում ընկած սկզբունքներն ունեն օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների փոխադասավորվածություն: Անշուշտ, արդի ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության մոդելը նպաստում է պետության կառավարման սկզբունքների համամիասնականացմանը, սակայն պետք է

⁶³ Проблемы общей теории права и государства., Под общ. ред. доктора юридических наук, профессора В. С. Нерсисянца, М.: Издательство НОРМА, 2004, стр. 541

նկատի ունենալ, որ ամեն մի պետության կոնկրետ պայմանները կարող են պատճառավորել սկզբունքների շրջանակի վերանայման կամ լրացման անհրաժեշտություն: Պետական կառուցակարգի կազմակերպման և գործունեության սկզբունքների համակարգում ներառված սկզբունքները չպետք է հակասեն համընդհանուր ճանաչում գտած սկզբունքներին, այլ պետք է լրացնեն դրանք:

Մասնագիտական գրականության մեջ ընդունված է, որ ցանկացած պետության կառավարման համակարգը ոչ թե նրա մարմինների մեխանիկական միավորումն է, այլ դրանց հստակ կազմակերպված, խստիվ կարգավորված ամբողջական կառուցակարգ, որի կազմավորումը պայմանավորված է բազմաթիվ գործոններով: Ընդ որում, որպես պետական միասնական, ամբողջական համակարգի գործառնություն և մշտական զարգացման վրա էականորեն ներգործող գործոններ կարելի է նշել տնտեսական պայմանները, քաղաքական համակարգի ու կյանքի առանձնահատկությունները, պաշտոնական, այդ թվում՝ իրավաքաղաքական գաղափարախոսությունը, հասարակության բարոյաքաղաքական և գաղափարական որակները, պետական կառուցակարգի հիմնարար սկզբունքները, հասարակության առջև կանգնած խնդիրներն ու նպատակները և այլն: Այդ գործոնների շարքում ընդգծվում են նաև արդի պայմաններում պետության ռազմական քաղաքականության իրագործման յուրահատկությունները և դրանց ազդեցությունը համապատասխան իշխանական կառուցակարգերի ձևավորման վրա:

Պետության առաջնային հատկանիշների շարքում կարևորվում է ինքնիշխանությունն ինստիտուտը: Հայաստանի և Արցախի՝ որպես երկու հայկական պետությունների ինքնիշխանությունը և տարածքային ամբողջականությունը սպառնացող վտանգը մշտապես առկա արտաքին ռազմաքաղաքական գործոն է: Հետևաբար, հանրության և պետության առջև կանգնած գլխավոր խնդիրը երկրի պաշտպանությունն է, նրա պաշտպանունակության մշտական ամրապնդումը:

Պաշտպանունակությունը պետական-իշխանական համակարգին բնորոշ որոշակի հատկություն է (ինքնապահպանման, ինքնավերարտադրման, ինքնակատարելագործման հատկություն), այլ

ոչ թե «մերկ» պաշտպանվածություն: Խնդիրն այն է, որ այդ հատկությունը (ներառյալ՝ արտակարգ, պատերազմական պայմաններում գործելու ունակությունը) պետք է ներդրվի պետական մարմինների ու իրավական ինստիտուտների էության մեջ: Պաշտպանունակության սկզբունքը պահանջում է այնպես կառուցել պետական-իշխանական ապարատը, որ այն ունակ լինի թե խաղաղ, թե արտակարգ ու պատերազմական պայմաններում իրականացնել իր առջև դրված խնդիրները, արժանի հակահարված տալ հակառակորդին: Այդ ունակությունը ինքընստինքյան դրսևորվող հատկությունն է, այլ պետք է ձևավորվի հատուկ պետաիրավական ինստիտուտների հիմնադրմամբ և կայացմամբ, որոնք էլ, արդյունքում, պետք է կարողանան արագ, օպերատիվ ու արդյունավետ կատարել կառավարչական բոլոր խնդիրները: Նման կարողության ներդրումը պետական ապարատին կօժտի կայունությամբ, այսինքն՝ ընդունակությամբ՝ պահպանել իր հիմնական բնութագրերը և կատարել իր առջև դրված խնդիրները՝ անկախ տարբեր տեսակի հնարավոր բացասական ներգործություններից:

Պաշտպանունակությունը ճանաչելով պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունք՝ չի նշանակում, որ տեղի է ունենում «պաշտպանական գործառույթ» տեսական կատեգորիայի վերանվանում: Դրանք էականորեն տարբերվում են: Պետության կամ պետական ապարատի գործառույթները գործունեության հիմնական ուղղություններն են, որոնք ուղղված են հասարակության պետական կառավարման նպատակների ու խնդիրների իրագործմանը: Պաշտպանական գործառույթ իրականացնում է ցանկացած պետություն: Սակայն, «ոչ խաղաղություն, ոչ պատերազմ» իրավիճակի համար պաշտպանունակությունը վերածվում է ղեկավար, ելակետային դրույթի և շատ դեպքերում պայմանավորում է պետական ապարատի կազմակերպումը և գործունեությունը՝ այլ սկզբունքների հետ միասին: Ընդ որում, այն համահունչ է պետական ապարատի կազմակերպման ու գործունեության այլ սկզբունքների՝ սահմանադրականության, օրինականության և այլնի հետ, որովհետև խոսքը գնում է ոչ թե ինչ-որ արտասովոր, արտակարգ երևույթի մասին, այլ ղեկավար գաղափարը քաղաքական հենքով օրենսդրության մեջ (այդ

թվում՝ սահմանադրական) կենսագործելու մասին, ինչը, բնականաբար, չի հակասում միջազգային իրավունքի նորմերին:

Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիան (հոդ. 15) սահմանում է, որ ազգի կյանքին սպառնացող պատերազմի կամ այլ արտակարգ դրության ժամանակ ցանկացած բարձր պետություն կարող է կիրառել միջոցներ, որոնք նահանջում են կոնվենցիայի պարտավորություններից միայն այն չափով, որքանով դա պահանջում է դրության սրությունը, պայմանով, որ այդպիսի միջոցները չեն համարվում անհամատեղելի՝ այլ միջազգային պարտավորությունների հետ: Սակայն նման դեպքում անհրաժեշտ է պահանջվող ընթացակարգով տեղեկացնել եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին՝ կիրառված միջոցների և դրանց ընդունման պատճառների մասին⁶⁴:

Արդի ժամանակաշրջանում ռազմական ուժի ավանդական ըմբռնումը՝ որպես պետության ինքնիշխանության և տարածքային ամբողջականության երաշխիք, առավել ապես չի արտացոլվում ընթացող քաղաքական գործընթացներում, որից ելնելով էլ պետության պաշտպանությունը չի կարելի դիտարկել միայն ռազմական բաղադրիչի կատարելագործման շրջանակներում⁶⁵: Փաստորեն, պետության պաշտպանությունը պետական իշխանությանը վերապահված բացառիկ գործառույթ է, որն ուղղված է տվյալ երկրի տարածքային ամբողջականության և անվտանգության, սահմանների անձեռնմխելիության ապահովմանը: Այն, ունենալով հիմնարար նշանակություն, ապահովում է պետության անվտանգությունն ու ինքնավարությունը և դրանով իսկ պայմաններ է ստեղծում մյուս գործառույթների իրականացման համար: Պետության պաշտպանական գործառույթները ըստուղղվածության բաժանվում են երկու տեսակի՝ ներքին ու արտաքին, որոնք միմյանց հետ փոխկապված են և իրագործելի են համարված մոտեցմամբ՝ երաշխավորելով երկրի պաշտպանությունը:

⁶⁴ Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիա, ընդունված 1950թ., ՀՀ ՊՏ 17/2002, 05.06.2002, 15-րդ հոդվածը

⁶⁵ Քոչարյան Ս.Տ., Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգությունը ազգային անվտանգության համատեքստում, Եր., 2012, էջ 29

Ամենաընդհանուր բնորոշմամբ պաշտպանությունը (ռուսերեն՝ оборона, անգլերեն՝ defense) սահմանվում է որպես պետության ինքնիշխանության, անկախության, տարածքային ամբողջականության և սահմանների անձեռնմխելիության պահպանմանը նպատակաուղղված քաղաքական, տնտեսական, ռազմական, սոցիալական, իրավական և այլ բնույթի միջոցառումների համակարգ⁶⁶։ Որպես պետության պաշտպանության գործառնություն արդյունավետության երաշխավորման նախադրյալներ պետք է դիտարկել հետևյալ չափորոշիչները.

ա) իշխանության համակարգը լինի օպտիմալ և հստակ այնքանով, որ չառաջացնի որևէ անորոշություն ցանկացած իրավիճակում, այդ թվում նաև՝ պատերազմական,

բ) իշխանական բոլոր կառույցները հստակ տիրապետեն և ընդունակ լինեն գործելու պատերազմական պայմաններում՝ ելնելով իրենց սոցիալ-իշխանական առաքելությունից,

գ) պետական-իշխանական համակարգը տոգորված լինի հայրենիքի պաշտպանության ոգով ու պատրաստակամությամբ և այլն:

ՀՀ պաշտպանության համակարգը ձևավորվում է ազգային շահերին առնչվող աշխարհաքաղաքական, ներտարածաշրջանային և արտատարածաշրջանային գործոնների ազդեցությամբ, որոնք պայմանավորված են՝ մի կողմից տարածաշրջանում առկա ազգամիջյան հակամարտություններով, իսկ մյուս կողմից՝ արտաքին ուժերի ազդեցությամբ։ Ազգային շահերի երաշխավորման ցուցանիշների շարքում առանձնակի կարևորվում է ներքաղաքական կայունությունը, քանզի Հայաստանի շուրջ ձևավորված աշխարհաքաղաքական իրողությունները պարտադրում են հնարավորինս զերծ մնալ ներքաղաքական անկայունություններից և քաղաքական ճգնաժամերից⁶⁷, ինչն անմիջականորեն անդրադառնալու է երկրի պաշտպանության համակարգի վրա:

«Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ պաշտպանությունն նշանակում է ռազմական անվտանգության համակարգ,

⁶⁶ Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն մեծ բառարան, Եր., ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվան ԱՌՀԻ, 2015, էջ 476

⁶⁷ Ղևոնդյան Ա., Ազգային շահերի հիմնահարցը Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման առաջնային միջավայրում, Եր., 2011, էջ 84

այն է՝ տարածքը, հասարակությունն ու տնտեսությունը պաշտպանությունն ախտահարատել ու Յայաստանի անկախությունը, տարածքային ամբողջականությունը, սահմանների անձեռնմխելիությունն ու անվտանգությունը պաշտպանել ու՝ ռազմական, քաղաքական, տնտեսական, տեղեկատվական, սոցիալական, իրավական և այլ միջոցների ու միջոցառումների, ինչպես նաև ռազմական անվտանգության միջազգային երաշխիքների ապահովման մեխանիզմների կիրառման համալիր գործունեության ամբողջությունն⁶⁸: Նախկին օրենքը պաշտպանությունը սահմանում էր որպես քաղաքական, տնտեսական, ռազմական, սոցիալական, իրավական և այլ միջոցների ու միջոցառումների համակարգ, որն ուղղված է հանրապետության ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և անվտանգության ապահովմանը⁶⁹:

Մեր կարծիքով կարելի է միավորել վերոնշյալ նախկին ու գործող օրենսդրական ձևակերպումները և պաշտպանությունը ներկայացնել հետևյալ սահմանմամբ. պաշտպանությունը ՀՀ տարածքը, բնակչությունը, ինքնիշխանությունը զինված հարձակումից պաշտպանել ու, ինչպես նաև պաշտպանությանը նախապատրաստել ու ն ուղղված քաղաքական, տնտեսական, ռազմական, սոցիալական, իրավական տեղեկատվական միջոցառումների, ինչպես նաև միջազգային պարտավորությունների շրջանակներում խաղաղության ապահովման միջոցառումների համակարգ է, որը ֆինանսավորվում է պետական բյուջեի և օրենքով նախատեսված այլ միջոցների հաշվին: Նման ձևակերպման համատեքստում պաշտպանության բովանդակությունը կներառի ռազմական, քաղաքական, տնտեսական, տեղեկատվական, սոցիալական, իրավական և ռազմական անվտանգության միջազգային երաշխիքների ապահովման միջոցառումներ:

Յուրաքանչյուր պետության պաշտպանությունն իր գործառնությանն ու նպատակային տեսակետից պետք է ձևավորի մի մեխանիզմ, որը կոչված է ազգային ու ռազմական անվտանգության ապահովման բնագավառում երկրի ընդունած հայեցակարգային

⁶⁸ «Պաշտպանության մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2008/73, 24.12.2008, 3-րդ հոդվածը

⁶⁹ «Պաշտպանության մասին» ՀՀ նախկին օրենք (չի գործում), ՀՀ ՊՏ ՀՀՊՏ 1997.06.27/15, 1-ին հոդվածը

մոտեցումներն ու քաղաքական որոշումները իրականացնել իշխանության օրենսդրական, գործադիր մարմինների և պետության ռազմական կազմավորման բոլոր կառույցների համակարգված գործունեությամբ: Այդպիսի համակարգի կազմակերպման գործում անհրաժեշտ է խստիվ ղեկավարվել ժամանակակից իրողությունները օբյեկտիվորեն արտացոլող սկզբունքներով: Այդ սկզբունքներից հիմնականները հետևյալներն են.

- անհատի, հասարակության և պետության անվտանգության ապահովման գործունեությունը հիմնվում է սահմանադրության ու ընթացիկ նորմատիվ-իրավական բազայի վրա,

- պաշտպանության ինստիտուտը փոխկապակցված է ազգային անվտանգության համակարգի մյուս տարրերի հետ և դրանց հետ կազմում է միասնական ամբողջություն,

- պաշտպանության ապահովման կառուցվածքն ու կազմը բխում է պետության ազգային շահերին սպառնացող և կանխատեսվող վտանգներից, պետության ռազմական անվտանգության ապահովման առաջնահերթ միջոցառումներից (քաղաքական, տնտեսական, տեղեկատվական, ռազմական), ինչպես նաև մարդկային կամքից անկախ գործոններից (ժամանակաշրջանը, աշխարհաքաղաքական զարգացումները և այլն):

Պաշտպանության գործառույթի իրականացման հիմքում ընկած է երկրի պաշտպանական ռազմավարությունը, որը ներկայացվում է որպես ռազմական անվտանգության ապահովման համար անհրաժեշտ գործունեության համակարգ՝ պետության պաշտպանական քաղաքականությունը⁷⁰: Խաղաղ ժամանակներում այն ներկայացվում է որպես պետության բազմակողմանի պատրաստություն՝ արտաքին հնարավոր հարձակումների դիմակայելու համար, իսկ ռազմական գործողությունների ու պատերազմների պայմաններում նշված գործառույթն ընդունում է հակառակորդի դեմ զինված պայքարի ձև, որի ժամանակ տեղի է ունենում պետության բոլոր ուժերի միավորում՝ կառավարման համընդգրկուն համակարգով:

⁷⁰ ՀՀ նախագահի հրամանագիրը «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը հաստատելու մասին», ՀՀ ՊՏ 2008/1, 25.12.2007, 3-րդ բաժինը

Պաշտպանության գործառույթի իրականացման միջոցառումների կազմակերպման գործընթացը հիմնվում է պաշտպանության բնագավառի կառավարման վրա՝ որպես պետական մարմինների և պաշտոնատար անձանց նպատակաուղղված գործունեությունն այդ միջոցառումների կազմակերպման և իրականացման ուղղությամբ: Հանդիսանալով պետական կառավարման բաղկացուցիչ մաս՝ պաշտպանության բնագավառի կառավարումը այնուամենայնիվ օժտված է մի շարք առանձնացված հատկանիշներով: Օրինակ այն, որ պաշտպանության հիմքը կազմում են զինված ուժերը՝ որպես ուժ գործադրելու իրավունք ունեցող պետական մարմին:

Գիտագործնական առումով կարևոր է ընդգծել նաև, որ պաշտպանության ապահովման համակարգը պետք է ոչ միայն արձագանքի սպառնալիքներին և մարտահրավերներին, այլև ունենա դրանց կանխատեսման հնարավորություն, այդ սպառնալիքները կանխելու և կասեցնելու համար ժամանակին միջոցառումներ ձեռնարկելու կարողություն: Տվյալ սկզբունքը կազմում է պաշտպանության համակարգի, դրա կառավարման և կառուցվածքային տարրերի կանխատեսական-վերլուծական գործառույթի հիմքը:

Ինչպես և ցանկացած կառավարման գործընթաց, այնպես էլ պետության պաշտպանության կառավարման համակարգի վերլուծություն մեջ կարևորվում են նպատակները: Կառավարման նպատակը ելակետային կատեգորիա է, այն արտացոլում է կառավարման օբյեկտի ցանկալի, հնարավոր և անհրաժեշտ վիճակը, որին պետք է հասնել: Դա այն իդեալն է, տրամաբանորեն հիմնավորված այն վերջնարդյունքը, որը պետք է ստեղծվի, կյանքի կոչվի, ինչպես նաև օբյեկտի վացնի հասարակական կյանքի, տարբեր սոցիալական խմբերի, քաղաքացիների պահանջմունքները:

Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ նպատակների հիմնավորման, նպատակադրման գործընթացը հինգ տարրերի բանաձև է՝ հաշվարկել, կանխատեսել, ծրագրավորել, պլանավորել և կանխագուշակել: Պետական կառավարման համակարգի ընդհանուր նպատակները կոնկրետացվում են յուրաքանչյուր պետական հաստատության նպատակներում և խնդիրներում: Առհասարակ այստեղ

նպատակները կարելի է բաժանել երկու խմբի՝ պաշտպանության բնագավառի կառավարման ընդհանուր նպատակներ և դրա բովանդակությունը կազմող առանձին միջոցառումների կազմակերպման նպատակներ:

Ընդհանուր նպատակների շարքին դասվում են ՀՀ տարածքը, բնակչությունը, ինքնիշխանությունը գինված հարձակումից պաշտպանելը, երկրի պաշտպանությանը պատրաստվելը, մասնակցությունը միջազգային պարտավորությունների շրջանակներում խաղաղությունը ապահովող միջոցառումներին: Այս նպատակներին հասնելու համար իրականացվում են մի շարք միջոցառումներ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր կոնկրետացված նշանակությունը և կոչված է ապահովել ընդհանուր նպատակի մի մասի իրականացումը: Օրինակ, պաշտպանության նախապատրաստումը, որպես ընդհանուր նպատակ իրականացվում է իրավական, տնտեսական, ռազմական, տեղեկատվական և այլ միջոցառումների միջոցով: Իր հերթին տնտեսական միջոցառումները՝ օրինակ բյուջետային պլանավորումը, նպատակ է հետապնդում գինված ուժերի համար բավարար քանակի տեխնիկայի ձեռք բերում: Ռազմական միջոցառումը՝ օրինակ զորավարժությունները, նպատակ են հետապնդում պատրաստել զորքերին իրական կյանքում հնարավոր պատերազմական գործողություններին: Տեղեկատվական միջոցառումները՝ օրինակ հետախուզական տվյալների ձեռքբերումը, նպատակ են հետապնդում անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովել պետական պաշտոնատար անձանց՝ ՀՀ սպառնացող հնարավոր վտանգների մասին: Ինչպես երևում է՝ այս միջոցառումներից յուրաքանչյուրը մի առանձին նպատակ է հետապնդում, բայց բոլոր այդ նպատակներն էլ ծառայում են մեկ ընդհանուր, ամբողջական նպատակին՝ պաշտպանությանը նախապատրաստվելուն:

Կառավարման նպատակները հստակեցնելուց հետո, հաջորդ քայլը հանդիսանում է այն գործառնությունների որոշումը և սահմանումը, որոնց միջոցով պետք է իրականացվեն նպատակները: Պաշտպանության բնագավառի կառավարման գործառնությունները և նպատակները փոխադարձաբանավորված են: Եթե առաջինները պատասխանում են «ինչ անել»

հարցին, ապա երկրորդները՝ «ինչպես անել» հարցին: Քանի որ կառավարումը շատ հաճախ դիտարկվում է որպես գործունեություն, ապա կառավարման գործառույթները կդիտվեն որպես կառավարման բնագավառում գործունեության որոշակի դրսևորումներ: Դրանք պետության կառավարչական ազդեցության կոնկրետ ձևեր են, որոնք նպատակաուղղված են կառավարման օբյեկտում որոշակի փոփոխություններ կատարել, այն տեղափոխել այլ ցանկալի վիճակի:

Մասնագիտական գրականության մեջ ամենատարածված տեսակետի համաձայն՝ գործառույթներն ընդունված է բաժանել ընդհանուր և հատուկ գործառույթների: Ընդհանուր գործառույթների թվին են դասվում պետական գործունեության առավել էական կողմերը, նրանց հիմնական կապերը: Այդ գործառույթները գոյություն ունեն պետական կառավարման գրեթե բոլոր տեսակներում: Ընդհանուր գործառույթներն են. կազմակերպումը, պլանավորումը, կարգավորումը, կադրային ապահովումը և վերահսկումը⁷¹: Սակայն կադրային ապահովման ֆունկցիայի հետ մեկտեղ, մեր կարծիքով, կարելի է ավելացնել նաև նյութատեխնիկական ապահովումը:

Պաշտպանության բնագավառի կառավարումը ևս, որպես պետական կառավարման բնագավառի բաղադրամաս, ունի իր գործառույթները՝ ինչպես ընդհանուր, որոնք բնորոշ են կառավարման բոլոր ճյուղերին, այնպես էլ հատուկ, որոնք բնորոշ են միայն այս ոլորտին: ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ պետական մարմինները և պաշտոնատար անձիք իրավասու են կատարել միայն գործողությունները, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ և օրենքներով⁷²: Սահմանադրական այս դրույթին համապատասխան «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանվում է, որ ՀՀ-ում պաշտպանության կազմակերպումը խաղաղ ժամանակ ներառում է.

- ռազմական քաղաքականության հիմնական ուղղությունների մշակումը, այդ թվում՝ ազգային անվտանգության ռազմավարության և ռազմական դոկտրինի ընդունումն ու կատարելագործումը,

⁷¹ Атаманчук Г.В.. Теория государственного управления. Изд. "Омега-Л", М., 2013, стр. 186

⁷² ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), ՀՀ ՊՏ 2005 (հատ. թող.), 05.12.2005, 5-րդ հոդված

- ռազմական սպառնալիքի կանխատեսումն ու գնահատումը,
- պաշտպանության բնագավառի իրավական կարգավորումը,
- անհրաժեշտ կառուցվածքով, թվակազմով, ժամանակակից սպառազինության մեջ և ռազմական տեխնիկայով հագեցած, բարձր մարտունակությամբ ու նեցուղ զինված ուժերի ստեղծումը, զարգացումը, դրանց ծավալման և օգտագործման պլանավորումը,
- պարտադիր զինվորական ծառայության զորակոչի անցկացումը և քաղաքացիներին պայմանագրային հիմունքներով զինվորական ծառայության ներգրավումը,

• միջազգային համագործակցությունը, ռազմաարդյունաբերական համալիրի զարգացումը, ռազմական գիտության զարգացումը և ռազմական ուսուցումը, զինված ուժերում մարդկային ռեսուրսների պլանավորումն ու օգտագործումը և միջարքայլ միջոցառումներ⁷³:

Օրենսդրական ամրագրում ստացած այս գործառնությունների մեջ կարելի է առանձնացնել ինչպես ընդհանուր բնույթի գործառնություններ, այնպես էլ հատուկ գործառնություններ: Պատշաճ կերպով ամրագրված չէ օրինակ վերահսկողական գործառնությունը: Այն նշվում է միայն պաշտպանական ծախսերի օգտագործման մասում: Մինչդեռ առկա են բազմաթիվ այլ ոլորտներ, որտեղ դիտարկվում է վերահսկողության անհրաժեշտություն, ինչպես օրինակ, զորակոչը, զինվորական ծառայության անցնելու պայմանները և այլն: Պրակտիկան ցույց է տալիս, որ նշված հարցերում ևս առկա են բազմաթիվ խախտումներ, հետևաբար վերահսկողության անհրաժեշտությունն այստեղ ակնհայտ է:

Ինչ վերաբերում է պատերազմական պայմաններում ձեռնարկվող միջոցառումներին, ապա օրենքը սահմանում է, որ ռազմական դրության իրավական ռեժիմը, զորահավաքային նախապատրաստությունը և զորահավաքի անցկացումը կազմակերպում են առանձին օրենքով: «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը սահմանում է այն միջոցառումների և սահմանափակումների ցանկը, որոնք կիրառվում են ռազմական դրության ժամանակ: Դրանք են.

⁷³ «Պաշտպանության մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2008/73, 24.12.2008, 4-րդ հոդվածը

- ՀՀ զինված ուժերի և այլ զորքերի փոխադրում և իսկատարմարտական պատրաստականության, ընդհանուր կամ մասնակի զորահավաքի հայտարարում և անցկացում, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտպանական, պետության ու տնտեսության կենսագործունեության համար հատուկ նշանակություն ունեցող օբյեկտների փոխադրում ռազմական դրության աշխատանքային ռեժիմի,

- ռազմական դրության իրավական ռեժիմին համապատասխանող ֆինանսական, վարկային, հարկային, մաքսային, սահմանային և բանկային պետական հատուկ քաղաքականության իրականացում, ֆինանսատնտեսական գործունեության առանձին տեսակների, ներառյալ՝ ծառայությունների մատուցման, ապրանքների և ֆինանսական միջոցների շրջանառության սահմանափակումներ,

- կազմակերպությունների (անկախ կազմակերպական-իրավական ձևից) կողմից ՀՀ տնտեսության, պաշտպանության և բնակչության կենսագոյության համար հատուկ նշանակություն ունեցող արտադրանքի թողարկման առաջնահերթ կատարման ենթակա առաջադրանքների սահմանում,

- պարետային ժամի սահմանում, այսինքն՝ օրվա որոշակի ժամանակահատվածում առանց անձը հաստատող փաստաթղթերի և հատուկ թույլ տվությունների հասարակական վայրերում գտնվելու արգելում,

- զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ և թունավոր նյութերի, հատուկ միջոցների վաճառքի սահմանափակում կամ արգելում, թմրեցնող, հոգեմետ, ուժեղ ներգործող նյութեր պարունակող դեղագործական միջոցների և պրեպարատների, էթիլային սպիրտի, ալկոհոլային խմիչքների, սպիրտ պարունակող արտադրանքի շրջանառության հատուկ ռեժիմի սահմանում, վտանգավոր արտադրությունների, պայթուցիկ, ռադիոակտիվ, քիմիական և կենսաբանական վտանգավոր նյութերի օգտագործման կասեցում և այլ միջոցառումներ⁷⁴:

⁷⁴ «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2007/4, 17.01.2007, 8-րդ հոդվածը

Պաշտպանության ոլորտի կառավարումը՝ ինչպես գործունեության ցանկացած այլ ձև, հիմնվում է որոշակի սկզբունքների վրա: Այս առումով «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ պաշտպանությունը կազմակերպվում և իրականացվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակության և քաղաքացիների ընդգրկվածության, օրինականության, մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների հարգման, զինված ուժերի գործունեության նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սկզբունքների հիման վրա⁷⁵:

Նշված սկզբունքներն, իհարկե, արտացոլում են պաշտպանության կազմակերպման հիմնական էությունը, սակայն, մեր կարծիքով, այստեղ դուրս են մնացել մի շարք այլ անհրաժեշտ սկզբունքներ: Մասնավորապես, մոռացության են մատնվել բանակաշինության համար այնպիսի կարևոր նշանակություն ունեցող սկզբունք, ինչպիսին է՝ զինված ուժերի հրամանատարության կենտրոնացվածությունը և միանձնյա կառավարումը: Որքան էլ ժողովրդավարական պետությունում գործեն զինված ուժերը, որքան էլ դրանք համապատասխանեցվեն ժողովրդավարական պետության պահանջներին, այդուհանդերձ չպետք է մոռանալ, որ զինված ուժերն առավել արդյունավետ են գործելու այն ժամանակ, երբ դրանցում առկա է հստակ սահմանված ենթակայություն, որոշումների ընդունման միանձնություն, հրամանների անշեղ և հստակ կատարում⁷⁶: Այլ հարց է, որ զինված ուժերի կիրառման մասին որոշումներ ընդունելիս չի կարելի ղեկավարվել մեկ անձի կողմից կամայական որոշման մոտեցմամբ:

Չորքերի մարտական գործողությունների ղեկավարումը պաշտպանության բնագավառի կառավարման առավել հատկանշական մասն է կազմում: Այդ առանձնահատկությունը կայանում է նրանում, որ ղեկավարումը հանդիսանում է զինված պայքարի դրսևորում, որտեղ երկու կողմերն էլ մեկ նպատակ են հետապնդում՝ առավել քիչ զոհերի

⁷⁵ «Պաշտպանության մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2008/73, 24.12.2008, 4-րդ հոդվածը

⁷⁶ Глухов Е.А., Коллегиальные органы управления в военных организациях: некоторые проблемы их статуса // Право в Вооруженных Силах, военно-правовое обозрение, Вып. 4, 2013, стр. 82

գնով ոչ նշացնել մեկը մյուսին: Ձորքերի մարտական գործողությունների ղեկավարումը բնութագրվում է օպերատիվությամբ, հաստատակամությամբ, որոշումների ընդունման արագությամբ: Արտահայտման ձևը հանդիսանում է մարտական հրամանը, իսկ անհրաժեշտ նախապայմանը՝ ենթարկվելը հրամանատարին, նրա կողմից վերահսկվող մարտական կարգապահությանը:

Ակնհայտ է, որ զորքերի օպերատիվ կառավարումը չի կարող չտարբերվել պետական կառավարման մյուս ճյուղերի մեթոդներից ու ձևերից: Չինված ուժերի կենտրոնացված ղեկավարումն իր դրսևորումն է գտնում ռազմական ղեկավարման կենտրոնական մարմիններին իրենց ենթակա զորքերի ղեկավարման լիակատար իշխանությամբ օժտելու մեջ, այն է՝ զինված ուժերի համար մեկ հարամանատարության սահմանումը: Կենտրոնացված կառավարման դեպքում ավագ հրամանատարը ոչ միայն իր ենթակաների համար խնդիր է առաջադրում, այլ նաև նրանց այդ խնդիրները լուծելու ուղղություն է տալիս, մշտապես ազդեցություն է գործում նրանց գործունեության նկատմամբ: Սակայն, կենտրոնացումը չի ենթադրում ռազմական ղեկավարման բոլոր գործառնությունների կենտրոնացում կենտրոնական մարմիններում, չի նշանակում ստորադաս մարմինների փոխարինում, օրենքներով և զինվորական կանոնագրքերով նրանց վերապահված ինքնուրույնության սահմանափակում և չի զրկում նախաձեռնություններ դրսևորելու հնարավորությունից: Անհրաժեշտ է, որպեսզի ստորադաս մարմինները ևս որոշակի ազատություն ունենան, որպեսզի ծառայության իրականացումը գուտ ձևական բնույթ չկրի, այլ լինի նախաձեռնող: Բայց չի կարելի նաև թույլ տալ, որ նախաձեռնությունը վերաճի ինքնագործունեության: Դա բացառելու համար շատ կարևոր է զինված ստորաբաժանումների առջև դնել հստակ խնդիրներ, որոնք գերծ կլինեն երկակի մեկնաբանություններից:

Ծառայության կազմակերպման ու գործառնական ապահովման տեսանկյունից կարևորվում են նաև ծառայողական գործունեության համար անվտանգ պայմանները՝ հիմնված կանոնագրքային պահանջների վրա: Չինված ուժերում զինվորական ծառայության անվտանգ

պայ մաններին ապահովման, անձնակազմի մահացու թյան և վնասվածքների դեպքերի կանխարգելման առաջադրանքների կատարումը հիմնականում պայմանավորված է զինծառայողների միջև ոչ կանոնագրքային փոխհարաբերությունների կանխարգելման ճիշտ կազմակերպմամբ:

Զինծառայողների միջև կանոնագրքային փոխհարաբերությունների կանոնների խախտումն առանձին զինծառայողների, միկրոխմբերի բարոյական և ֆիզիկական ներգործությունն է առաջին տարին ծառայող կամ այլ զինծառայողների հաշվին՝ «զորանոցային հարմարավետության» որոշակի առավելություն և նվաճելու նպատակով: Զինծառայողների միջև ոչ կանոնագրքային փոխհարաբերությունները կոնֆլիկտների լուծման առավել սուր ձևեր են՝ սոցիալ-հոգեբանական խոր արմատներով: Դրանք արտահայտվում են զինծառայողների՝ ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնադրությամբ սահմանված փոխհարաբերությունների կանոնների ու կարգուկանոնի խախտմամբ, մարդկային արժանապատվության, բարոյական և ֆիզիկական վիրավորանքով (նվաստացմամբ), անհարգալից վերաբերմունքով և բռնությամբ⁷⁷:

Իրականացնելով զինվորական կոլեկտիվներում ոչ կանոնադրային հարաբերությունների կանխարգելման աշխատանքներ, երիտասարդ զինվորների նկատմամբ ճնշումների բացառման միջոցառումներ՝ զինվորական ղեկավարները (հրամանատարները) պետք է առաջնորդվի հետևյալ մոտեցումներով.

- կազմակերպել զորամասի (ստորաբաժանման) զինծառայողների վարքի կանոնների և սահմանված կարգուկանոնի պահպանման պարբերական վերլուծություն և օբյեկտիվ գնահատում,

- զինծառայողների կարգապահության ապահովման դաստիարակչական և կազմակերպչական աշխատանքը բացառապես պետք է իրականացնել օրենքների, զինվորական երդման, համազորային կանոնադրությունների, հրահանգների, հրամանատարների և պետերի հրամանների դրույթների հիման վրա,

⁷⁷ Լրացուցիչ տես «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքը, ՀՀ ՊՏ 2012.04.18/20 (894), 21.03.2012

- դաս տիրարակչական գործընթացը պետք է կազմակերպել զինվորական կոլեկտիվներում բարոյահոգեբանական իրավիճակի և զինծառայողների անհատական-հոգեբանական առանձնահատկություններին իմացություն հիման վրա,

- ոչ կանոնագրքային փոխարաբերություններին կանխարգելման համար անհրաժեշտ է իմանալ դրանց դրսևորման ձևերը, համապատասխան բացասական սովորույթների առկայությունը կոնկրետ ստորաբաժանումում, գտնել այդ բացասական դրսևորումների հակազդեցություն ձևերն ու միջոցները, ազդել միկրոխմբերի վրա,

- ձևավորել գործամասի անձնակազմի և հասարակական կազմակերպություններին՝ զինվորական կոլեկտիվների բարոյահոգեբանական իրավիճակի վրա ներազդելու արդյունավետ համակարգ,

- նկատառելով առկա սոցիալ-հոգեբանական բացասական երևույթները, դրանց գործելու մեխանիզմը պայմանավորող գործոնները՝ ապահովել բոլոր աստիճանների հրամանատարների հոգեբանական պատրաստությունը, կանոնագրքային փոխարաբերություններին խախտումների նախական խման և կանխարգելման նպատակով կազմակերպել հետևողական ու նպատակային աշխատանք և այլն:

Հայաստանի Հանրապետությունն իր անվտանգության անվտանգության գործընթացում ձևավորում է պետության ռազմական կազմավորում (պաշտպանական կազմակերպվածք): Ոլորտի մասնագետների կողմից արտահայտված հիմնավոր տեսակետի համաձայն՝ Հայաստանի ռազմական կազմավորման մեջ մտնում են՝

– ՀՀ ազգային անվտանգության խորհուրդը, որն իր աշխատակազմով հանդերձ ռազմավարական ղեկավարման գլխավոր մարմինն է և համադասում է պետական մարմիններին գործունեությունը պաշտպանական ոլորտում,

– զինված ուժերը, որոնք պաշտպանական անվտանգության ապահովման միջուկն ու հիմքն են, այլ գործեր, աշխարհագործ, ռազմական կազմավորումները և պետական մարմինները, որոնք նախատեսված են ռազմական մեթոդներով պաշտպանական

անվտանգության ապահովման խնդիրների իրականացման համար, ինչպես նաև՝ դրանց ղեկավարման մարմինները,

– Երկրի արդյունաբերական ու գիտական համալիրների այն մասը, որը նախատեսված է պաշտպանական անվտանգության պահանջմունքների բավարարման համար⁷⁸: Գրեթե նույնական «կազմ-կառուցվածք» ունեն նաև արտասահմանյան շատ երկրների ռազմական կազմավորումները, մասնավորապես, օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության ու նույն ռազմական կազմավորման համակարգում ներառված չէ ՌԴ Ազգային անվտանգության խորհուրդը⁷⁹, ինչը, սակայն, Հայաստանի համար արդարացված է՝ հիմնվելով նաև վերջին երկու տասնամյակում տեղի ունեցած անվտանգային ու ռազմաքաղաքական զարգացումների վրա:

ՀՀ գինված ուժերի և ենթակառուցվածքի ներկայիս կառավարման համակարգը, ըստ հիմնական բովանդակության, սկսել է կազմավորվել 1995 թվականից: Չնայած, որ նմանատիպ բարդ կառույցի լիակատար կայացման համար անցած ժամանակաշրջանը չափազանց քիչ է, այնուամենայնիվ համակարգը եղած հնարավորությունների սահմաններում արդեն կայացել է, բնագավառում կատարվել և շարունակվում են կատարվել մեծ ծավալի աշխատանքներ: Սակայն, բավարարել են նաև կառավարման համակարգի հետագա զարգացման գործընթացում առկա խնդիրները, որոնց լուծմանն ու հաղթահարմանը նպաստակառնողված աշխատանքները հետևողականությամբ են պահանջում:

Պաշտպանության բնագավառի գործող (կիսանախագահական հանրապետության մոդելում) կառավարման համակարգը ամփոփ նկարագրության մեջ ունի հետևյալ կառուցվածքը. Նախագահը ՀՀ գինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի կարգավիճակով հանդես է գալիս որպես ռազմական անվտանգության ապահովման երաշխավոր⁸⁰, իսկ կառավարությունը, վարչապետը և պաշտպանության նախարարը պաշտպանության համակարգի ղեկավար շղթայի օղակներ են, որոնք

⁷⁸ Քոթանջյան Հ.Ս., Մարտիրոսով Լ.Ա., Մարտիրոսյան Տ.Ռ., Չիլինգարյան Դ.Ս., Հայաստանի Հանրապետության պաշտպանական դոկտրինի մշակման որոշ հարցեր, Հայկական բանակ, 2007, հմ. 1 (51), էջ 22

⁷⁹ Структура, вооружение и военная техника Вооруженных Сил Российской Федерации: Под ред. В.И. Александрова, А.М. Кабаченко, В.В. Куликова и др.; М.: МГИМО-Университет, 2015, стр. 14

⁸⁰ ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), ՀՀ ՊՏ 2005 (հատ. թող.), 05.12.2005, 49-րդ հոդվածը

իրենց լիազորությունների սահմաններում ապահովում են պաշտպանության քաղաքականության իրականացումը:

Կառավարությունն իր լիազորություններն իրականացնում է օրենսդրական նախաձեռնության իրավունքի իրացման, ինչպես նաև Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված կարգով երկրի պաշտպանության իրականացման գործնական ապահովման միջոցով, որը ներառում է պաշտպանության իրականացման ապահովման մասով ՀՀ ներքին քաղաքականության մշակումն ու իրականացումը, ինչպես նաև Նախագահի հետ համատեղ՝ ՀՀ արտաքին քաղաքականության մշակումը և իրականացումը: Վարչապետը պաշտպանության իրականացման ապահովման մասով ղեկավարում է կառավարության գործունեությունը և համակարգում նախարարների աշխատանքը, ընդունում է որոշումներ՝ այդ նպատակով կառավարության գործունեության կազմակերպմանն առնչվող հարցերի վերաբերյալ⁸¹:

ՀՀ պաշտպանության նախարարը կառավարության անդամ է և օժտված է երկրի պաշտպանության իրականացման ապահովմանն ուղղված ՀՀ կառավարության՝ վերը նշված լիազորությունների իրականացման ապահովման իրավասությամբ: Նա ինքնուրույն պետական կառավարման մարմին չէ և պետական կառավարմանը մասնակցում է կառավարության կազմում՝ որպես կառավարության անդամ: Որպես այդպիսին սահմանվում է, որ պաշտպանության նախարարությունը հանրապետական գործադիր մարմին է, որը մշակում և իրականացնում է պաշտպանության բնագավառում կառավարության քաղաքականությունը⁸²: Նախարարի իրավասությունն չի կարող գերազանցել կառավարության լիազորությունները և վերջինս չի կարող ունենալ այնպիսի լիազորություններ, որոնք ներառված չեն կառավարության իրավասության շրջանակներում կամ ուղղակիորեն չեն բխում դրանցից: Նախարարը պաշտպանական ոլորտում մշակվող և իրականացվող քաղաքականության՝ կառավարության իրավասությանը

⁸¹ Քոչարյան Ս.Տ., Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգությունը ազգային անվտանգության համատեքստում, Եր., 2012, էջ 212

⁸² ՀՀ կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 1554-Ն որոշում, ՀՀ ՊՏ 2009/2, 14.01.2009, ՀՀ պաշտպանության նախարարության կանոնադրության 1-ին կետը

ենթակա մասի համակարգողն է և ապահովում է գինված ուժերի գործառույթների կատարումը:

Պաշտպանության ոլորտում ՀՀ Նախագահի՝ որպես պետության գլխի և Ազգային ժողովի՝ որպես օրենսդիր իշխանության մարմնի իրավասությունները և դրանց հարաբերակցությունը նույնպես սահմանված են Սահմանադրությամբ: ՀՀ Նախագահը պետության գլուխն է և որպես երկրի գինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար համակարգում է պետական մարմինների գործունեությունը պաշտպանության բնագավառում, նշանակում և ազատում է գինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը, հանրապետության վրա գինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարվելու դեպքերում հայտարարում է ռազմական դրություն և կարող է հայտարարել ընդհանուր կամ մասնակի զորահավաք և որոշում է ընդունում գինված ուժերի օգտագործման մասին: Պատերազմի ժամանակ հանրապետության Նախագահը կարող է նշանակել և ազատել գինված ուժերի գլխավոր հրամանատարին, իսկ գինված ուժերի օգտագործման կամ ռազմական դրություն հայտարարելու դեպքերում իրավունքի ուժով անհապաղ գումարվում է Ազգային ժողովի հատուկ նիստ⁸³: Ռազմական դրության իրավական ռեժիմ հայտարարվելու դեպքում, բացի գինված ուժերից, կարող են օգտագործվել ազգային անվտանգության, ոստիկանության, արդարադատության, փրկարար ծառայության և այլ պետական լիազոր մարմինների ուժերն ու միջոցները⁸⁴:

Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական մակարդակում «գործառույթ—ինստիտուտ—լիազորություն» եռամիասնական շղթայում լիարժեք ներդաշնակության ապահովման գլխավոր հիմնավորմամբ 2015թ. անցկացվեցին սահմանադրական բարեփոխումներ, որի արդյունքում Հայաստանը անցնում է խորհրդարանական հանրապետության կառավարման մոդելին: Խորհրդարանական հանրապետությունում Նախագահը կառավարության

⁸³ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ / Ընդհ. խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Եր., «Իրավունք», 2010, էջ 632-635

⁸⁴ «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2007/4, 17.01.2007, 9-րդ հոդվածը

ղեկավարին և անդամներին նշանակում է դեյ ուրե (իսկ դեֆակտո այդ լիազորությունը օժտված է խորհրդարանում (ստորին պալատում) ձայների մեծամասնությունը վայելող կուսակցությունն ու դրա լիդերը): Այս մոդելում նախագահի հիմնական գործառնությունը հանրապետությունը ներկայացնելն է, միջազգային պայմանագրեր կնքելը կամ դրանց վավերացմանը մասնակցելը, իսկ օրենսդիր կամ գործադիր իշխանության իրականացման գործում որևէ փաստացի լիազորություններով վերջինս օժտված չէ⁸⁵:

Բնականաբար, սահմանադրական բարեփոխումների արդյունքում փոփոխություններ են նախատեսվում նաև երկրի պաշտպանության բնագավառի կառավարման գործառնություններում: Այսպես, Նոր Սահմանադրության 155-րդ հոդվածի համաձայն՝ զինված ուժերը գտնվելու են կառավարության ենթակայության ներքո և դրանց կիրառման մասին որոշումը նույնպես ընդունելու է կառավարությունը: Նորույթ է նաև այն ձևակերպումը, որ պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունները սահմանում է Անվտանգության խորհուրդը, իսկ պաշտպանության նախարարն այդ ուղղությունների շրջանակներում իրականացնում է զինված ուժերի ղեկավարումը: Առանձին մասով ընդգծվում է, որ վարչապետը հանդիսանում է պատերազմական իրավիճակներում զինված ուժերի գերագույն հրամանատարը⁸⁶: Այստեղ հարկ է նաև նշել, որ նշված դրույթը (ներառված 6-րդ գլխում) ուժի մեջ է մտնելու 33 Նորընտիր նախագահի կողմից պաշտոնի ստանձնումից հետո (2018թ., իսկ մինչ այդ շարունակելու են գործել 2005թ. փոփոխություններով Սահմանադրության համապատասխան դրույթները): Խորհրդարանական հանրապետության մոդելում երկրի պաշտպանության ոլորտի կառավարման առանձնահատկությունները կվերլուծվեն ատենախոսության հաջորդ ենթագլխում:

Հետազոտության առարկայի համատեքստում հարկ է հակիրճ անդրադառնալ նաև զարգացած երկրների պաշտպանության ոլորտի

⁸⁵ Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, պատ. խմբ.՝ Ն.Ա.Այվազյան, ԵՊՀ հրատ., Երևան, 2008, էջ 410
⁸⁶ 33 Սահմանադրության փոփոխություններ, 06.12.2015թ., <http://res.elections.am/images/doc/draft06.12.15.pdf>

կառավարման կառուցակարգերին: Այսպես, ՌԴ պաշտպանության ուղորտում պետության գլխի, գործադիր մարմնի և խորհրդարանի լիազորությունները սահմանված են Սահմանադրությամբ: 87-րդ հոդվածի համաձայն՝ Նախագահը հանդիսանում է ՌԴ ՉՌԲ գերագույն գլխավոր հրամանատարը, իսկ 83-րդ հոդվածով սահմանվում է, որ ՌԴ Նախագահը հաստատում է ռազմական դոկտրինը, նշանակում և ազատում է ՉՌԲ գլխավոր հրամանատարական կազմին: Բացի այդ, Ռուսաստանի նկատմամբ ագրեսիայի կամ ագրեսիայի սպառնալիքի դեպքում Նախագահը Դաշնության ամբողջ տարածքում կամ դրա առանձին մասերում հայտարարում է ռազմական դրություն՝ այդ մասին անհապաղ տեղեկացնելով Դաշնային խորհրդին և Պետական Դումային: Վարչապետը Նախագահի հաստատմանն է ներկայացնում պաշտպանության նախարարի թեկնածուին: ՌԴ Նախագահը նշանակում է պաշտպանության նախարարի տեղակալներին, ՉՌԲ գլխավոր շտաբի պետին⁸⁷:

ԱՄՆ Սահմանադրության 2-րդ հոդվածի 2-րդ բաժնի համաձայն՝ ԱՄՆ-ը Նախագահը համարվում է նահանգների ոստիկանության և բանակի գերագույն գլխավոր հրամանատարը: Կոնգրեսը իրավունք ունի հայտարարել պատերազմ, սահմանել ցամաքային, օդային և ծովային զորքերի կազմավորման և ղեկավարման կարգը: Կոնգրեսի և ԱՄՆ Նախագահի կողմից ընդունված «Ռազմական լիազորությունների վերաբերյալ» բանաձևի համաձայն՝ մինչև ռազմական ուժի կիրառումը Նախագահը պետք է խորհրդակցի Կոնգրեսի հետ⁸⁸: Եթե ռազմական գործողություններ են սկսվում, ապա Նախագահը 48 ժամվա ընթացքում գրավոր զեկույց է ներկայացնում Կոնգրեսին: Չեկույցում պետք է ներառված լինեն նախ այն պայմանները, որոնք առաջացրել են զենքի կիրառման անհրաժեշտությունը, ապա սահմանադրության այն դրույթները, որոնք թույլ են տվել Նախագահին կիրառել զինուժ, ինչպես նաև ռազմական գործողությունների մասշտաբի գնահատումը և ռազմական գործողությունների նախատեսված ժամկետները: Առանց

⁸⁷ Конституция Российской Федерации, от 12 декабря 1993г., https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_28399/

⁸⁸ Резолюция о военных полномочиях, Совместная резолюция по вопросу о военных полномочиях конгресса и президента США, Принята 1973 г. Сенатом и Палатой представителей Соединенных Штатов Америки на совместной сессии конгресса, <http://www.grinchevskiy.ru/1945-1990/rezoluciya-o-voennih-polnomochiyah.php>

Կոնգրեսի թույլատրության ռազմական գործողությունները կարող են տևել ոչ ավել, քան 60 օր: Ծայրահեղ դեպքերում կարող է այդ ժամկետը ավելացվել ևս 30 օրով:

ԱՄՆ նախագահի և Կոնգրեսի լիազորությունները հարաբերվում են նաև պաշտպանության բնագավառի ղեկավար կազմին նշանակելիս: ԱՄՆ նախագահը Սենատի համաձայնությանն է ներկայացնում ԱՄՆ պաշտպանության նախարարի, Կենտրոնական հետախուզության վարչության պետի և Յետաքննությունների Դաշնային բյուրոյի տնօրենի թեկնածուներին: Նախագահը որոշում է գինված ուժերի զարգացման հիմնական ուղղությունները, իսկ պաշտպանության նախարարը հանդիսանում է գինվորական հարցերով ԱՄՆ նախագահի գլխավոր խորհրդականը: Նախարարը Ազգային անվտանգության խորհրդի անդամ է և իրականացնում է գինված ուժերի ուղղակի ղեկավարումը:

ԳԴՀ նախագահի և պառլամենտի լիազորությունները, դրանց հարաբերակցությունները նախատեսված են Սահմանադրությամբ: Բուկնդեսթագը Բուկնդեստատի համաձայնությամբ և կառավարության նախաձեռնությամբ հաստատում է, որ երկիրը ենթարկվել է ռազմական հարձակման կամ այդ հարձակման վտանգը գոյություն ունի: Եթե դաշնության տարածքը ենթարկվել է գինված հարձակման, Նախագահը Բուկնդեսթագի համաձայնությամբ կարող է հանդես գալ միջազգային հանրությանն ուղղված հայտարարությամբ պետության պաշտպանության միջոցառումների վերաբերյալ: Բուկնդեսթագը Բուկնդեստատի համաձայնությամբ ցանկացած ժամանակ կարող է կասեցնել պաշտպանության մասին նախագահի հայտարարությունը:

ԳԴՀ պաշտպանության նախարարը նշանակվում է նախագահի կողմից՝ վարչապետի առաջարկությամբ: Նախարարը հանդիսանում է գինված ուժերի գլխավոր իրամասնատարը և պատասխանատու է Գերմանիայի բանակի գործունեության համար: Միաժամանակ, Սահմանադրության 115-րդ հոդվածի «բ» կետի համաձայն՝ պաշտպանական

ոլորտի գործողությունների հրամանատարությունը կարող է նաև անցնել Գերմանիայի վարչապետին՝ կանցլերին⁸⁹:

Այսպիսով, ՀՀ ռազմական կազմավորման համակարգի վերլուծությունը վկայում է, որ, ընդհանուր առմամբ, այն այլ պետությունների ռազմական կազմավորումներից (ներկայումս նման է Ռուսաստանի Դաշնության ռազմական կազմավորմանը) տարբերվում է նրանով, որ բացի զինված ուժերից, նրանում ընդգրկված են պետական այլ մարմիններ ու կազմակերպություններ, որոնք, իրականացնելով ռազմական անվտանգությանը վերաբերող գործառնություններ, այնուամենայնիվ, չեն կիրառում ռազմական բնույթի հատուկ մեթոդներ և զինված ուժերի հետ հարաբերակցության առումով ունեն օժանդակ նշանակություն: Որպես նշվածի հիմնավորում՝ անհրաժեշտ է ընդգծել այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունում ռազմական ոլորտի բարեփոխումների ընթացքում չեն հստակեցվել պետության ռազմական կազմավորմանը վերաբերող հիմնական չափորոշիչները: Դեռևս իրեն զգացնել է տալիս նաև խորհրդային շրջանում առկա պետական կյանքի տարբեր ոլորտների որոշակի աստիճաններով «ռազմականացման» տեսակետը⁹⁰, որն անընդունելի է համարվում և հակասում է քաղաքացիական հասարակության ձգտող պետության մոդելին ու շահերին:

2.2. Պաշտպանության համակարգի կազմակերպումը խորհրդարանական հանրապետության մոդելում (համեմատական վերլուծություն)

Պետության և հասարակության բնականոն և ներդաշնակ զարգացման համար կարևոր խնդիր է օրենսդիր, գործադիր ու դատական

⁸⁹ Основной закон Федеративной Республики Германии, от 23 мая 1949г., http://www.rfhwb.de/Pravo/Pravo_ru/pravo_ru1.htm

⁹⁰ Նման իրավիճակի վերաբերյալ գնահատականի հանդիպեցինք Լատինական Ամերիկայի որոշ երկրների փորձի ուսումնասիրության ժամանակ, մասնավորապես, Ալֆրեդ Շտեֆանը նժում է, որ Լատինական Ամերիկայի որոշ երկրներում զինվորականները իրականացնում էին (վերահսկում) երկրի համար առանձնացված նշանակություն ունեցող տնտեսական ոլորտներ, ներառյալ՝ անվտանգության հետ գրեթե անմիջական առնչություն ունեցող ուղղություններ: Alfred Stepan, «The New Military Professionalism of Internal Warfare and Military Role Expansion», Origins, Policies and Future, New Haven: Yale University Press, 1973, p. 49

իշխանութիւն մարմինների փոխհամաձայնեցված գործունեութիւնն ապահովումը, նրանց լիազորութիւնների սահմանադրական հստակ կանոնակարգումը և դրանց իրականացման վերահսկումը՝ հիմնված զսպումների ու հակակշիռների վրա:

Իշխանութիւնների տարանջատումը, առանց որի անհնար է պատկերացնել ժողովրդավարական պետութիւն և քաղաքացիական հասարակութիւն գոյութիւնը, միաժամանակ պահանջ է առաջադրում՝ անհրաժեշտ զսպումների ու հակակշիռների մեխանիզմի գործադրմամբ և սահմանադրութեամբ ամրագրված իշխանութիւն տարբեր մարմինների փոխհարաբերութիւնների հաշվեկշռի պահպանմամբ ապահովել պետութիւն և հասարակութիւն դինամիկ ու կայուն առաջընթաց: Այդ համատեքստում կառավարման մոդելի սահմանման ժամանակ կարևորվում է իշխանութիւն մակրոինստիտուտների և դրանց հարաբերութիւնների ձևավորումը, հատկապէս՝ կառավարութիւն ու խորհրդարանի փոխհարաբերութիւնների բովանդակութիւնը⁹¹:

Հայաստանի Հանրապետութիւնը՝ որպէս ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետութիւն՝ պետաիշխանական զարգացմանը համընթաց, առաջարկվում են պետութիւն և պետական իշխանութիւն համակարգի կազմակերպմանն ու գործունեութիւնը ներկայացվող նոր մարտահրավերներ: Դրանք հատկապէս ակնառու են պետական իշխանութիւն համակարգի արդյունավետ համակարգային և գործառնական տարանջատման ապահովման խնդրի առկայութիւն պայմաններում, երբ չափազանց կարևոր նշանակութիւն է ստանում իշխանութիւնների բաժանման և հավասարակշռման համակարգի լիարժեք և արդյունավետ կենսագործումը՝ անհրաժեշտ ու բավարար սահմանադրական երաշխիքների ստեղծմամբ և ամրագրմամբ (կառավարման ձևը):

Պետութիւն կառավարման խորհրդարանական հանրապետութիւն մոդելում գերակայում է խորհրդարանի իշխանութիւնը, որը կազմավորում է կառավարութիւն, նշանակում է վարչապետին, հրապարակում է օրենքներ, հաստատում է պետական բյուջեն և այլն: Այս կառավարման ձևի առավելութիւններից է իշխանութիւն

⁹¹ Маркаров А.А., Полупрезидентализм в контексте постсоветской трансформации, Ер., Изд-во ЕГУ, 2008, стр. 24

բարձրագույն օղակների միասնությունը,⁹² քանզի գործադիր իշխանության՝ կառավարության ղեկավարի և անդամների նշանակման գործընթացում առանցքային է խորհրդարանի, ավելի ստույգ՝ խորհրդարանական մեծամասնության դերակատարությունը, խորհրդարանն է վերահսկում դրանց գործունեությունը: Քանի դեռ կառավարությունը վայելում է օրենսդիրների մեծամասնության աջակցությունը, այն կարող է բնականոն իրականացնել իր լիազորությունները: Կորցնելով խորհրդարանական մեծամասնության աջակցությունը՝ կառավարությունը հրաժարական է տալիս:

Խորհրդարանական կառավարման ձևի բնորոշ գծերից են գործադիր իշխանության իրականացումը խորհրդարանի կողմից կազմավորված կառավարության կողմից, կառավարության ղեկավարի՝ իշխանական գործունե լիազորություններով օժտված լինելը, որոնք ծավալային առումով կարելի է համեմատության մեջ դնել պետության գլխի լիազորությունների հետ՝ նախագահական կառավարման ձևի պայմաններում, ինչպես նաև կառավարության քաղաքական պատասխանատվությունը խորհրդարանի առջև, ինչը ենթադրում է, որ խորհրդարանի կողմից կառավարությանն անվստահություն հայտնելու արդյունքում վերջինս պետք է հրաժարական տա:

Այս համատեքստում խիստ կարևոր է կառավարության կայունության ապահովումը: Եթե զարգացած երկրներն իրենց երկարատև խորհրդարանական ավանդույթներով և ձևավորված կուսակցական համակարգերով կարող են հաճախակի իրենց թույլ տալ կառավարությունների փոփոխություն, ապա Հայաստանի դեպքում սա կարող է նաև որոշակի վտանգավոր հետևանքներ ունենալ⁹³: Փորձելով

⁹² Խորհրդարանական կառավարման ձև ունեցող պետություններում իշխանության տարբեր ճյուղերի միջև առկա է զգալի փոխկապակցվածություն և փոխկախվածություն, որն էլ դրանց միջև պատնեշները դարձնում է ոչ այդքան հստակ: Տե՛ս Черкасов А. И., Глава государства и правительство в странах современного мира: конституционно-правовое регулирование и практика, М., 2006, էջ 4: Խորհրդարանական կառավարման ձևի բնութագրության հետ կապված, երբեմն գործածվում է «իշխանությունների սիմֆոնիա» եզրույթը, որի համաձայն՝ իշխանությունների բաժանումը չպետք է շատ կոշտ լինի: Տե՛ս Васильев А. В., Разделение властей: теоретические аспекты и современная практика // Право и государство: теория и практика, М., 2006, N 7, стр. 5

⁹³ ՀՀ նախագահ Ս.Սարգսյանի կողմից առանձնակի կարևորվում է Հայաստանի համար կայուն կառավարություն ունենալու հրամայականը: Նրա խոսքով՝ «խորհրդարանական համակարգում, առավել ևս մեր երկրում, կայուն կառավարումն առաջնային է, և այդ կառավարումը պետք է լինի ուղղաձիգ, իսկ դրան հասնելու միակ ճանապարհը կայուն մեծամասնությունն է»: Այդ մասին լրացուցիչ տես ՀՀ նախագահ

խորհրդարանական կառավարման ձևով ստեղծել կայուն ժողովրդավարական համակարգ՝ միևնույն ժամանակ չի կարելի ընկնել մեկ այլ ծայրահեղության՝ անարխիայի մեջ: Խորհրդարանական կառավարման ձևին անցնելու դեպքում հատկապես կարևոր նշանակություն ունեն կառավարության կայունությունը, խորհրդարանի վերահսկողական և իրազորությունների, խորհրդարանական փոքրամասնության ներքին, ինչպես նաև Հանրապետության Նախագահի գործառնության և ընտրության կարգի հիմնախնդիրները: Կառավարման խորհրդարանական համակարգում Ազգային ժողովը, բնականաբար, առանցքային դերակատարում ունի քաղաքական համակարգում: Ազգային ժողովը միակ Սահմանադրական մարմինն է, որն ուղղակիորեն ընտրվում է ժողովրդի կողմից: Ազգային ժողովի ընտրություններն անցկացվում են համամասնական ընտրակարգով և այդ պարագայում Աժ մտնելու հնարավորություն են ստանում բոլոր նշանակալի քաղաքական ուժերը:

Փաստորեն, խորհրդարանական հանրապետության հիմնական առանձնահատկությունը կայանում է նրանում, որ կառավարությունը ձևավորվում է խորհրդարանական հիմքով և ամբողջապես պատասխանատվություն է կրում խորհրդարանի առջև: Խորհրդարանական հանրապետությունը բնութագրվում է նրանով, որ իշխանական գերակայությունը պետական կառավարման այդ համակարգում պատկանում է խորհրդարանին, իսկ կառավարությունը քաղաքական պատասխանատվություն է կրում խորհրդարանի, այլ ոչ թե հանրապետության Նախագահի առջև, և հրաժարական է տալիս խորհրդարանի կողմից անվստահություն հայտնելու դեպքում:

Խորհրդարանական հանրապետության կառավարման ձևաչափը ժողովրդավարության վերջնական երաշխիք չէ, բայց նաև ավելի մեծ հնարավորություն է ստեղծում, որ երկիրը շրջանցի հակաժողովրդավարական ցնցումները: Որպես նշված հիմնախնդրի լուծման տարբերակ Հայաստանում ներկայումս դիտարկվում է անցումը կառավարման խորհրդարանական հանրապետության

համակարգին, որն արդեն իսկ 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունվեց:⁹⁴ Այս կապակցությամբ ՀՀ Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում նշված է, որ հիմնախնդիրները պայմանավորված են ինչպես կառավարման ձևի առանձնահատկություններով, իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ոչ հետևողական իրացմամբ, համակարգային առումով ոչ կատարյալ լուծումներով, այնպես էլ քաղաքական և սահմանադրական մշակույթի ցածր մակարդակով, կուսակցական համակարգի ոչ բավարար կայացվածությամբ⁹⁵:

Դիտարկվող խնդրի համարժեք լուծումներ կարող են գտնվել հանրապետության կառավարման խորհրդարանական համակարգի ներդրման պայմաններում՝ երկրի քաղաքական ուժերի միջև անհրաժեշտ քաղաքական փոխհամաձայնության պարագայում: Կառավարության կայունությունն ապահովելու համար պետք է հաշվի առնել ժամանակակից պառլամենտարիզմի զարգացման փորձը, կայունությանը նպաստող այն միջոցները, որոնք իրենց արդարացրել են միջազգային պրակտիկայում, օրինակ, մասնավորապես՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում: Կայունությանը նպաստող միջոցներ կարող են լինել կոնստիտուկտիվ անվստահության քվեն և վարչապետի ուժեղ դերը պետական կառավարման համակարգում: Խորհրդարանի լուծարումը կարող է իրականացվել միայն այն դեպքում, երբ ճգնաժամային իրավիճակներում Ազգային ժողովն ի վիճակի չէ ընտրել նոր վարչապետ: Գործող կառավարման համակարգի համեմատ՝ սկզբունքորեն նոր դեր պետք է իրականացնի Հանրապետության Նախագահը, որը պետք է ընտրվի Ազգային ժողովի կամավելի լայն ընտրական կոլեգիայի կողմից խորհրդարանի լիազորությունների ժամկետը գերազանցող ժամկետով, մասնավորապես՝ Սփյուռքի ներկայացուցիչների ընդգրկումը:

⁹⁴ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ընդունեց Սահմանադրության փոփոխությունների նախագծի վերաբերյալ արձանագրությունը, 14.12.2015թ., <http://newspress.am/archives/12812>

⁹⁵ ՀՀ Նախագահին առընթեր Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից մշակված ՀՀ Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը, Եր., Մարտ 2014թ., Էջ 21, <http://moj.am/storage/uploads/A1.pdf>

Սահմանադրական բարեփոխումների համատեքստում կարևոր է նաև դիտարկել Հայաստանի շուրջ ձևավորված աշխարհաքաղաքական իրողություններին նույնական և կառավարման խորհրդարանական մոդել ունեցող երկրների փորձը: Հարավկովկասյան տարածաշրջանային առումով պետք է փաստել, որ խորհրդարանական կառավարման ձևաչափին անցում կատարած Վրաստանի քաղաքական համակարգում առկա են հակասություններ նախագահի ու կառավարության միջև, այդ հակասությունները առերևույթ չեն խոչընդոտում պաշտպանական-անվտանգային խնդիրների լուծմանը, իսկ պաշտպանության ու անվտանգության ոլորտում թե նախագահը, թե կառավարությունը, թե խորհրդարանը ունեն նույն դիրքորոշումը արտաքին քաղաքական հիմնական կուրսի նկատմամբ: Ավելին, փորձագետների կարծիքով՝ «Վրաստանում քաղաքացիական հասարակությունը վերջին տարիների ընթացքում ավելի է ուժեղացել, քաղաքացիական հասարակությունում դրական զարգացումներ են նկատվում, ինչից ելնելով էլ Վրաստանի քաղաքական զարգացումները հետաքրքիր են Հայաստանի, Ադրբեջանի և տարածաշրջանում չճանաչված պետությունների համար»⁹⁶: 2014թ. նոյեմբերին «Ազատ դեմոկրատներ» կուսակցության իշխող «Վրացական երազանք» դաշինքից դուրս գալու հետևանքով Վրաստանում ներքաղաքական ճգնաժամի առաջացումը վկայում է, որ կառավարման խորհրդարանական մոդելում որոշումների ընդունման արդյունավետությունը և պետական համակարգի կայունությունն էականորեն պայմանավորված են խորհրդարանում կայուն քաղաքական կռիվից ի առկայությունամբ:

Վրաստանում սահմանադրական բարեփոխումների փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ կառավարման խորհրդարանական հանրապետության մոդելին անցնելիս վարչապետի և նախագահի իրավասությունների ոչ հստակ սահմանազատումը կարող է հանգեցնել նրանց լիազորությունների հարցում տարածայնությունների առաջացմանը: Տվյալ հանգամանքը կարող է էականորեն խոչընդոտել

⁹⁶ Մինասյան Սերգեյ, «Վրաստանը կամուրջ է դարձել նաև Հայաստանի և ԵՏՄ-ի համար», 20.06.2015թ., www.aravot.am/2015/06/20/583952/

պէտակ ան կառավարման համակարգի արդյունավետ աշխատանքին: Հանրապետության նախագահի և վարչապետի միջև տարած այնուհետև առաջացմանը նպաստում է նաև կառավարման խորհրդարանական մոդելում հասարակության շրջանում նախագահի՝ որպես պետության իրական ղեկավարի ընկալման ավանդական ըմբռնումը: Ավելին, 2012թ. հոկտեմբերի ընտրությունների արդյունքում Վրաստանում ձևավորված քաղաքական դաշտն ու հետագա զարգացումները չէին կարող չազդել նաև Հարավկովկասյան տարածաշրջանում անվտանգային մթնոլորտի վրա⁹⁷:

Վրաստանում խորհրդարանական հանրապետության կառավարման մոդելին անցումը հանգեցրել է պաշտպանական-անվտանգային ոլորտում նշանակություն ունեցող որոշումների ընդունման արդյունավետության նվազեցմանը, ինչպես նաև Ազգային անվտանգության խորհրդի որոշակի անգործունակությանը: Միաժամանակ, պետք է ընդգծել, որ պաշտպանական-անվտանգային ոլորտում ձևավորվել են սահմանադրությամբ չնախատեսված պետական մարմիններ: Մասնավորապես, նախկին վարչապետ Բ.Իվանիշվիլին ստեղծել է Ազգային անվտանգության խորհրդի լիազորությունները կրկնող մարմին, որն Ազգային անվտանգության խորհրդին գուցա եռապոլսականում է գործել մինչ օրս: Վրաստանում պաշտպանական-անվտանգային ոլորտում անհաջողությունները ավելի շատ կարելի է բացատրել ոչ կառուցողական ընդհանուր արտաքին քաղաքական կուրսի, պաշտպանական քաղաքական պլանավորման թերացման, ռազմական առաջնահերթությունների առումով ունեցած տեսլականի ոչ բավարար կանխատեսման հանգամանքներով:

Ժամանակային առումով տեսական բնույթ ունեցող պատերազմական գործողությունների ու պարբերաբար ակտիվացող պայմանների տեսանկյունից կարևոր է նաև անդրադառնալ Իսրայելի խորհրդարանական կառավարման համակարգին և դրա դրսևորումներին երկրի պաշտպանության կազմակերպման գործընթացում: Ավելին, հայ և

⁹⁷ Լրացուցիչ տես Neil Macfarlane, Georgia in the Caucasus, Materials of the international strategic policy forum “Regional Security Dynamics In The South Caucasus”, 29-30 November, 2012, Yerevan // ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀ-ի «Հայ կական բանակ» ռազմագիտական հանդեսի աշխատանքային տետրեր, 2013, հատուկ թողարկում, էջ 223

հրեա ժողովուրդները պատմության զարգացումների արդյունքում պետականության մշակույթի վերածնունդով ունեցան ինքնուրույն, ազգային պետականություններ⁹⁸: Իսրայելի տարածքային հակամարտությունը գալիս է դեռևս 1970-ական թվականներից, երբ արաբների ու հրեաների բնակության դասավորության փոփոխման ծրագրով նախատեսվեց որպես տարածքային պաշտպանության համակարգի ամրապնդման ռազմավարական ռեսուրս ստեղծել նոր հրեական բնակավայրեր: Իսրայելի բանակի (ՑԱՀԱԼ՝ Իսրայելի Պետության Պաշտպանության բանակ, եբր. TSAHAL – Tsva Haganah Le-Israel) առջև ծառացած առաջնային խնդիր է դիտարկվում հրեական և արաբ բնակչության շփման գծի պաշտպանությունը⁹⁹: Տարբեր ժամանակաշրջաններում պատերազմական իրավիճակների ակտիվացման և հարաբերականորեն խաղաղության պայմանների փոփոխության զարգացումներ են անցել Իսրայելի և Պաղեստինյան ռադիկալ կազմակերպությունների միջև ռազմական հակադրումները¹⁰⁰, ինչը որոշակիորեն նման է հայ-ադրբեջանական հակամարտության համար արդեն 20 տարուց ավել նկարագրվող «ոչ խաղաղություն, ոչ պատերազմ» իրողությանը:

Իսրայելի պաշտպանական-անվտանգային համակարգում հաջողությունները բացատրվում են ոչ այնքան ժողովրդավարական ինստիտուտներով, որքան արմատավորված ազգային գաղափարախոսության, աշխարհագրական դիրքի, տասնամյակների ընթացքում հակամարտության պատճառով երկրում գինված ուժերի առանցքային դերի արմատավորման, խոշոր տերությունների կողմից Իսրայելի նկատմամբ բացարձակ հետաքրքրության ու դրանից բխող աջակցության, ինչպես նաև այս ամենի արդյունքում նորարարության խթանման ու կայացած տնտեսության հանգամանքներով: Այս դրական

⁹⁸ Զոթանջյան Յ.Ս., Խորհրդարանական հանրապետության անվտանգային-պաշտպանական համակարգը. Իսրայելի և Վրաստանի դասերի ռազմավարական քաղաքագիտական իմաստավորում // ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի աշխատանքային տետրեր, 2016, հմ. 2 (88), էջ 10

⁹⁹ Զոթանջյան Յ.Ս., Պետության տարածքային պաշտպանության կազմակերպման հարցի շուրջ՝ Իսրայելի օրինակով // Հայաստանի Հանրապետության պաշտպանական-անվտանգային համակարգի բարեփոխման ուղեւիշները, Եր., ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվան ԱՌՀԻ, 2013, Մաս 1, էջ 27

¹⁰⁰ Ермаков А.А., Военная политика Израиля в отношении Сектора Газа на современном этапе // Зарубежное регионоведение: проблемы теории и практики: материалы 7-ого Междунар.науч.конфер.; сб.ст. / Под ред. А.А.Корнилова и др. – Н.Новгород: ННГУ им. Н.И.Лобачевского, 2015, стр. 73

կողմերի հետ միաժամանակ հարկ է նշել, որ Իսրայելի խորհրդարանական մոդելում նույնպես դրսևորվում են բազմապիսի խնդիրներ:

Իսրայելական պետության խորհրդարանական համակարգում առկա են լուրջ բաժանարար գծեր իշխանական կոալիցիայի մեջ մտնող կուսակցությունների միջև: Խորհրդարանում ընտրությունները կայանում են համամասնական ընտրակարգով և առանց տարածքի աշխարհագրական գործոնի՝ կիրառելով ընտրացուցակների մեխանիզմը: Իսրայելի կառավարման համակարգը խթանում է փոքր կուսակցությունների գործունեությունը: Անցնելով 3,5 տոկոս ընտրական շեմը կամ ունենալով ընդամենը 4 տեղ խորհրդարանում՝ կուսակցությունները կարող են զգալի ազդեցություն ունենալ ամբողջ քաղաքականության վրա: Խնդիրը կայանում է նրանում, որ կուսակցություններն իրենց բնույթով տարբեր են՝ կրոնական, գաղափարական, էթնիկական, սոցիալական և այլն, ու թեև կուսակցություններին հաջողվում է պայմանավորվել մի շարք խնդիրների շուրջ, կառավարման համակարգը հանգեցնում է հասարակության շրջանում բաժանարար գծերի առաջացմանը: Միևնույն ժամանակ, իշխող կոալիցիայի կուսակցությունները միշտ չէ, որ համաձայնության են գալիս առանցքային հարցերի շուրջ:

Իսրայելի քաղաքական համակարգում խնդիրները, սակայն, չեն նշանակում, որ համակարգը գտնվում է ստատիկ վիճակում: Երկրի խորհրդարանական մոդելում պարբերաբար իրականացվում են բարեփոխումներ թե՛ ընտրություններից ընտրություններ, թե՛ գործունեության ընթացքում՝ ինստիտուցիոնալ ու ընթացակարգային մակարդակներով: Կառավարման համակարգում առկա բազմաթիվ խնդիրներով հանդերձ թե՛ պետական, թե՛ փորձագիտական օղակներում գերակշռում են երկրի խորհրդարանական մոդելը պահպանելու և այն կատարել ազդորդելու դիրքորոշումները:

Արդեն նշեցինք, որ 2005 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում Հայաստանը կիսանախագահական հանրապետության կառավարման ձևի նախագահական-խորհրդարանական մոդելից, ըստ էության, անցում կատարեց խորհրդարանական-

նախագահական մոդելին՝ պայմանավորված այն հանգամանքով, որ Սահմանադրության մեր ագրվեցին ՀՀ նախագահի կողմից Ազգային ժողովն արձակելու հիմքերը, մեծացավ խորհրդարանական մեծամասնության դերակատարությունը ինչպես կառավարության կազմավորման, այնպես էլ վերջինիս անվստահություն հայտնելու գործընթացներում: Մասնավորապես, Նախագահն այլևս օժտված չէր վարչապետին սեփական հայեցողությամբ զբաղեցրած պաշտոնից ազատելու լիազորությամբ:

ՀՀ-ում 2005թ. Սահմանադրությամբ գործող կառավարման ձևը սահմանադրական գործող կարգավորումների կատարելագործման վերջնարդյունքում փոփոխվեց՝ նպատակ ունենալով օբյեկտիվ և սուբյեկտիվ մի շարք գործոններով պայմանավորված զարգացնել Սահմանադրությամբ ամրագրված իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի արդյունավետ իրացումը: Իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի իրացման ոլորտներում դիտարկվող խնդիրները, դրանց լուծման վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները, ինչպես նաև հնարավոր այլընտրանքն արդեն մոտ 10 տարի անց արտացոլվեցին ՀՀ նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից մշակված ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում¹⁰¹:

Արդյունքում, 2015թ. դեկտեմբերի 6-ին Հայաստանի Հանրապետությունում անցկացվեց Սահմանադրության փոփոխությունների հանրաքվե: Սահմանադրական փոփոխությունների նախագիծը, այլ բարեփոխումներից զատ, ենթադրում էր անցում կատարել կառավարման կիսանախագահական համակարգից խորհրդարանական հանրապետության համակարգի¹⁰²: Նոր սահմանադրության 16 գլուխներից 5-ը, որոնք վերաբերում են սահմանադրական կարգի հիմունքներին, պետության

¹⁰¹ ՀՀ Նախագահին առընթեր Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից մշակված ՀՀ Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը, Եր., Մարտ 2014թ., էջ 42-43, <http://moj.am/storage/uploads/A1.pdf>:

¹⁰² ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2015թ. դեկտեմբերի 13-ի թիվ 99-Ա որոշումը ՀՀ Սահմանադրության փոփոխությունների 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեի արդյունքներն ամփոփելու վերաբերյալ, http://res.elections.am/images/dec/15.99_A.pdf

քաղաքականության հիմնական նպատակներին, տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում օրենսդրական երաշխիքներին, տեղական ինքնակառավարմանը, օմբուդսմենի ինստիտուտին և մարդու իրավունքների երաշխավորմանը, արդեն մտել են ուժի մեջ: ՀՀ կառավարման կարգը փոփոխող՝ կիսանախագահականը խորհրդարանական հանրապետության դարձնող գլուխները ուժի մեջ կմտնեն մինչև 2018 թվականը մի քանի փուլերով՝ ուղեկցվելով նաև օրենսդրական փոփոխություններով ու լրացումներով:

Այս առումով, կարևոր է գիտագործնական հենքով գնահատել խորհրդարանական կառավարման համակարգին անցնելու ռիսկերը պաշտպանական-անվտանգային տեսանկյունից, ուսումնասիրել միջազգային փորձի հիմնատարերը մեկ համակարգից մյուսին անցնելու գործընթացում, կանխատեսվող խնդիրների պատճառներն ու առանձնահատկությունները, բացահայտել ոչ թե կոնկրետ մեկ համակարգի ներդրման կամ տեղայնացման, այլ տարբեր համակարգերի մեխանիզմների համադրման առանձնահատկությունները՝ հիմնվելով նաև ՀՀ իրավական-քաղաքական իրականության և սեփական կարիքների գնահատման վրա:

Միանշանակ, հարկավոր է համաձայնել ոլորտի հիմնադիր հետազոտողների կողմից նշվող այն տեսակետին, որ ՀՀ-ում այսօր անցկացվող պաշտպանական բարեփոխումների համառոտ և կարևոր է նաև հիմնվել Իսրայելի նախագահ և ռազմական հետախուզության նախկին ղեկավար Խայիմ Հերցոգի՝ Իսրայելի Պետության ներկայացման փորձի վրա, ով հրեա ժողովրդի պատմությունը ներկայացնում է որպես ազգային ինքնության պահպանման շարունակական հերոսական գործընթաց (բաժանելով 3 ժամանակագրական փուլերի՝ օտարաբնականության պայմաններում պայքարի երկու 1000-ամյակ, գրեթե 100 տարի՝ Պաղեստին ներգաղթ սկսելուց հետո, Իսրայելի ազգային պետականության վերականգնման ու պաշտպանության 60-ամյա շրջան)¹⁰³:

¹⁰³ Քոթանջյան Հ.Ս., Իսրայելի պաշտպանության բանակում գինվորի մարտական ոգու ձևավորման փորձի մասին՝ ՀՀ պաշտպանական բարեփոխումների լույսի ներքե // Հայաստանի Հանրապետության պաշտպանական-անվտանգային համակարգի բարեփոխման ուղենիշները, Եր., ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվան ԱՌՀԻ, 2013, Մաս 1, Էջ 118

Նշված փորձի դիտարկման արդյունքում կարելի է փաստել, որ ՀՀ-ում անցումը խորհրդարանական կառավարման համակարգին մեկ ակնթարթում տեղի չի ունենալ ու: Դա պայմանավորված է քաղաքական մշակույթով, արմատավորված ինստիտուտներով ու ընթացակարգերով: Այնպես ինչպես Վրաստանում, Հայաստանում ևս հնարավոր է աստիճանական անցում խորհրդարանական մոդելին և նոր մոտեցումների աստիճանական կիրառում, քանի որ նույնիսկ հասարակության և անհատի մակարդակով երկիրը դեռևս պատրաստ չէ ունենալ ու մեծ Բրիտանիայի կամ Գերմանիայի օրինակով խորհրդարանական կառավարման համակարգ: Մյուս կողմից, համակարգային այդ աստիճանական անցումը կարող է բացասաբար անդրադառնալ որոշումների ընդունման արդյունավետության վրա, երբ կառավարման հին մոդելը դեռևս ամբողջությամբ չի փոխարինվել նոր մոդելով: Այս փուլում է, որ ի հայտ են գալիս հին ու նոր ինստիտուտների և նրանց գործառնությունների կրկնօրինակում:

Զնայած այն հանգամանքին, որ խորհրդարանական կառավարման համակարգը հնարավոր է որոշակի խոչընդոտներ առաջացնի որոշումների ընդունման ընթացակարգում, պաշտպանական-անվտանգային ոլորտում կանխատեսվող խնդիրների հավանականությունը այժմ էլ մեծ չէ որոշ պատճառներով:

Նախ, այն երկրներում, որտեղ առկա է ռազմական ուղղակի սպառնալիք, պաշտպանական-անվտանգային հարցերում գնահատվում է որոշակի միասնական մոտեցում երկրի անվտանգության հիմնական բաղադրիչների վերաբերյալ: Հնարավոր է լինեն տարածայնությամբ երկրի անվտանգությունն ապահովել ու նույնված հնարավոր ուղիների վերաբերյալ, սակայն ինչ վերաբերում է վերջնարդյունքին, քիչ հավանական է, որ կառավարման համակարգը խոչընդոտի մեծ հրատապությամբ ներկայացնող ռազմավարական որոշումների ընդունմանը: ՀՀ-ում թե հասարակական, թե քաղաքական մակարդակներում դիտարկվում է համընդհանուր մոտեցում պաշտպանական-անվտանգային հարցերին, ու անկախ կառավարման համակարգից՝ այդ մոտեցումը կմնա որպես գերակա: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է իրավական մակարդակով ապահովել

ճգնաժամային պայմաններում համակարգի ճկունությունը՝ ստեղծված իրավիճակին արագ արձագանքելու և նշված անհետաձգելի ռազմավարական որոշումների ընդունումը արդյունավետ դարձնելու համար: Այսինքն, անհրաժեշտության դեպքում համակարգը պետք է ապահովի անհրաժեշտ մակարդակի օպերատիվություն:

Բացի այդ, չնայած խորհրդարանական կառավարման համակարգը ենթադրում է որոշումների ընդունման ավելի դանդաղ ընթացակարգ, համակարգը նպաստելու է պաշտպանական-անվտանգային համակարգի կատարելագործմանը: Խորհրդարանի դերի ընդլայնմամբ ու ժեղանալու է ոլորտի նկատմամբ վերահսկողությունը, և ոլորտային որոշ խնդիրներ հնարավոր է ստանան ավելի արագ լուծումներ, քան ներկայումս՝ ելնելով փոխադարձ ներգրավվածության բարձր աստիճանից: Նման գործընթացը կհանգեցնի նաև ոլորտի իրավական դաշտի առավել կատարելագործման և իրավակիրառ ոլորտում համապատասխան փոփոխությունների: Չնայած խորհրդարանական կառավարման համակարգ ունեցող երկրները որոշակի խնդիրներ են արձանագրում որոշումների ընդունման ընթացակարգում, այնուամենայնիվ, միտված են համակարգի կատարելագործմանը և ոչ թե այլ կառավարման համարգի անցնելուն: Այս առումով, անհրաժեշտ է նոր կառավարման համակարգի ներդրման գուգահեռ բարձրացնել նաև խորհրդարանի իրավական և քաղաքական մշակույթի և առհասարակ ինստիտուտների քաղաքական ավանդույթների և լոյալ համագործակցության մակարդակները:

Խորհրդարանական կառավարման մոդելը ֆիքսված մոդել չէ, այսինքն, յուրաքանչյուր պետություն կարող է գնահատելով ներկայիս իրավիճակն՝ ընտրել կամ ստեղծել քաղաքական և իրավական իրականություններից բխող սեփական մոդելը: Ուսումնասիրելով խորհրդարանական կառավարման ձև ունեցող երկրների փորձը՝ անհրաժեշտ է կենտրոնանալ ոչ միայն այդ երկրների հաջող փորձի, այլև անհաջող փորձի վրա՝ համակարգի ներդրման խնդիրները, խոչընդոտները ու հանգամանքները բացահայտելու և համապատասխանալ անավորում իրականացնելու համար:

Ենթագլուխը կարելի է ամփոփել այն հետևություններ, որ ՀՀ սահմանադրական բարեփոխումների գործընթացում անցումը կառավարման խորհրդարանական հանրապետության մոդելին իր դրական կողմերով հանդերձ կարող է առաջ բերել ռիսկեր հետևյալ ուղղությամբ՝ ազգային անվտանգությանը վերաբերող որոշումների ընդունման արդյունավետությանը, պաշտպանության բնագավառում վարչապետի և նախագահի իրավասության ներքին հստակ սահմանադատումը ու գործնական իրականացումը, պաշտպանական անվտանգային ոլորտի ղեկավարման նոր համակարգի ձևավորումը և կիրարկումը գինված ուժերի հրամանատարական ուղղահայացի ներքո, ներքաղաքական կոշտ զարգացումների և սահմանադրական կարգին սպառնացող վտանգների ժամանակ ռազմաքաղաքական որոշումների կայացման հնարավոր բարդությանը: Նշված խնդիրների հետևողական ու փոխկապակցված չկարգավորման պարագայում Հայաստանում կարող է կանխատեսվել նաև ներքաղաքական ճգնաժամի որոշակի խորացում, իսկ ՀՀ սահմանադրական բարեփոխումների գործընթացում դիտարկվող ռիսկերի ոչ լիարժեք գնահատումը կարող է նաև վտանգել պաշտպանական-անվտանգային համակարգի արդյունավետ գործունեությունը:

2.3. Հայաստանի Հանրապետության պաշտպանության ոլորտի իրավական կարգավորումը և օրենսդրական բարեփոխումները

Յուրաքանչյուր պետության գինված ուժերը տվյալ երկրի ռազմական կազմավորման առանցքն են, որի գործունեությունը նախատեսվում է սահմանադրություններով և օրենքներով՝ պաշտպանության համակարգին առաջադրված խնդիրներին ու գործառնություններին համապատասխան: Երկրի պաշտպանության կազմակերպվածքը, ներառյալ՝ գինված ուժերի կազմը և թվաքանակը, որոշում է պետությունը՝ ըստ անվտանգության իրական ու կանխատեսվող սպառնալիքների, սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների, ինչպես նաև միջազգային հարաբերություններին իրավիճակի և այլ գործոնների: Պաշտպանության ոլորտի իրավական

կարգավորումը այնպիսի գործընթաց է, որը նախառաջ ուղղված է ոչ միայն կոնկրետ խնդիրների լուծմանը, այլև նպատակ ունի կանխատեսել ու կանոնակարգել ապագայում հնարավոր բոլոր խնդրահարույց հարցերը: Այդ գործունեությունը կոչված է գտնել ու ամրագրել ու այն հնարավոր տարբերակները, որոնք անհրաժեշտ են պետության պաշտպանության պահանջմունքների և առկամարդկային ու սոցիալ-տնտեսական հնարավորությունների արդյունավետ համադրման համար¹⁰⁴:

Պաշտպանության բնագավառում գործում է պետության ռազմաքաղաքական ղեկավարության իրավունքների և պարտականությունների անխզելիության սկզբունքը, ինչն արտացոլված է բոլոր ժողովրդավարական պետությունների իրավական համակարգերում¹⁰⁵: Ֆրանսիայի նախագահ Շարլ դե Գոլլը, 1958թ. օգոստոսի 8-ին ելույթ ունենալով Սահմանադրական խորհրդատվական կոմիտեի առջև և հիմնավորելով Ֆրանսիայի Սահմանադրության մեջ 16-րդ հոդվածը ներառելու անհրաժեշտությունը՝ պաշտպանության բնագավառում պետության ղեկավարի ընդարձակ լիազորություններ ընձեռելու մասին, նշեց, որ այդ հոդվածն անհրաժեշտ է, որպեսզի Սահմանադրությունը պետության ղեկավարությանը պարտադրի համապատասխան ձևով գործելու, որով էլ կորոշվի վերջիններիս պատասխանատվության հարցը՝ սահմանադրական լիազորությունների չիրականացման համար¹⁰⁶: 19-րդ դարի գերմանացի մասնագետ Լ. Ֆոն Շտեյնը նշում է, որ պետության ղեկավարը միաժամանակ երկրի «ռազմական կենցաղի» կառավարողն է, այդ պատճառով էլ նա այդ ոլորտում գերիշխում է բոլորին¹⁰⁷:

ՀՀ պաշտպանական համակարգի կառուցման գործընթացում ընդգծված կարևորություն ունի այն անհրաժեշտությունը, որ այդ համակարգը պետք է լիովին համապատասխանի Հայաստանի ռազմական անվտանգությանն ուղղված արդիական մարտահրավերներին, ինչի

¹⁰⁴ Шукин А.В., Российское военное законодательство на современном этапе (итоги работы научно-практической конференции) // Право в Вооруженных Силах, военно-правовое обозрение, Вып. 9, 2013, стр. 5

¹⁰⁵ Писарев А.Н., Полномочия высших органов государственной власти Российской Федерации в области обороны. Дисс. на соискание учёной степени кандидата юридических наук М., 1995, стр. 68

¹⁰⁶ Comptern du analitique du Comite Consultant, Paris, 1960, p. 76

¹⁰⁷ Штейн фон Л. Учение о военном быте как часть науки о государстве. СПб, 1875, стр. 497

ճկուն, մարտունակ և ի գործը՝ չեզոքացնելու առկա ու կանխատեսվող բոլոր սպառնալիքները, ապահովելու ազգային անվտանգության հիմնարար արժեքների հուսալի պաշտպանությունը, ինչպես նաև կատարելու պետության անունից ստանձնած համապատասխան պարտավորությունները: Այս համատեքստում հարկ է ընդգծել, որ պաշտպանական բարեփոխումների արդյունավետությունը անմիջականորեն կախված է նաև իրավական հիմքի կատարելագործումից, ինչը հնարավորություն կընձեռի պատասխանատու օղակներին և բոլոր շահագրգիռ կողմերին ավելի հստակ որոշելու իրենց անելիքը՝ հնարավորություն տալով նաև վերացնել բացթողումները:¹⁰⁸ Պաշտպանական բարեփոխումների նպատակներն ու տրամաբանությունը հանգեցրին նաև պաշտպանության ոլորտի օրենսդրական բարեփոխումների: Այս ոլորտում գործող օրենքները, որոնք ընդունվել էին տարբեր ժամանակահատվածներում, երբեմն նույնիսկ բարոյապես հնացած լինելով, լիարժեքորեն չէին արտացոլում բարեփոխումների ուղղությամբ որդեգրած նպատակները և այդպիսով հնարավորություններ չէին ընձեռում դրանք կյանքի կոչելու համար, ինչի արդյունքում փոփոխություններ և լրացումներ կատարվեցին ՀՀ պաշտպանության բնագավառին առնչվող հիմնական մի շարք օրենքներում, նաև ընդունվեցին ամբողջությամբ նորերը¹⁰⁹:

Հայաստանի պաշտպանության ոլորտի օրենսդրական զարգացումները կարելի է բաժանել 4 ժամանակագրական փուլերի: Առաջին փուլն ընդգրկում է 1990 թվականից 1997 թվականը, երբ ԽՍՀՄ որոշ իրավական ակտեր մեխանիկորեն արտացոլվեցին նորանկախ Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ, ինչպես նաև առաջին անգամ փորձ արվեց կարգավորելու նորաստեղծ զինված ուժերում ծագող իրավահարաբերությունները: Երկրորդ փուլը սկսվում է 1997 թվականից և ավարտվում 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեի արդյունքների հիման վրա ՀՀ Սահմանադրության մեջ

¹⁰⁸ Օհանյան Ս.Մ., Հայաստանի Հանրապետության պաշտպանական բարեփոխումները. երկրորդ փուլ // ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀ-ի Հայկական բանակ ռազմագիտական հանդես, 2-3 (56-57), 2008, էջ 7, 16

¹⁰⁹ Քոչարյան Ս.Տ., Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգությունը ազգային անվտանգության համատեքստում, Եր., 2012, էջ 213

կատարված փոփոխություններով: Երրորդ փուլը տևում է նշված Սահմանդրական փոփոխություններից մինչև 2007-2008 թվականները, երբ Սահմանադրության մեջ կատարված փոփոխությունները հիմք հանդիսացան ՀՀ պաշտպանության ոլորտի օրենսդրության զարգացման ռազմավարական ծրագրերի մշակման և օրենսդրական բարեփոխումների նախաձեռնման համար¹¹⁰: Որպես չորրորդ փուլ կարելի է առանձնացնել 2008թ.-ից մինչև օրս ընկած ժամանակահատվածը, երբ ընդհանուր պաշտպանական բարեփոխումներին համապատասխան և պաշտպանության համակարգի ռազմավարական վերանայման ծրագրերին համահունչ կատարելագործվում է ոլորտի նորմատիվ իրավական հիմքը, զարգանում է իրավահարաբերությունների կանոնակարգման մակարդակն ու մշակույթը: Այս փուլի շարունակությամբ է, որ ներկայումս ակտիվորեն պլանավորվում և մշակվում են Հայաստանի խորհրդարանական կառավարման ձևին անցնելու կապակցության երկրի պաշտպանության համակարգի օրենսդրության արմատական վերափոխումները՝ ի կատարումն 2015 թվականին ընդունված նոր Սահմանադրության համապատասխան պահանջների:

Փոփոխված Սահմանադրության 14-րդ հոդվածով սահմանվում է, որ գինված ուժերն ապահովում են ՀՀ պաշտպանությունը, անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունը: Խորհրդարանական կառավարման ձևաչափին անցնելը համապատասխան փոփոխություններ պահանջեց նաև պաշտպանության ոլորտի կառավարման հարցերում: Այսպես, Սահմանադրության 154-րդ հոդվածի համաձայն՝ ՁՈՒ-ն կառավարության ենթակայության ներքո են և դրանց կիրառման մասին որոշումը նույնպես ընդունում է կառավարությունը, իսկ անհետաձգելի ահրաժեշտության դեպքում նման որոշումը, պաշտպանության նախարարի առաջարկությամբ, կարող է կայացնել վարչապետը՝ անհապաղ տեղեկացնելով կառավարության անդամներին: Նորություն է նաև այն ձևակերպումը, որ պաշտպանության ոլորտի

¹¹⁰ Նազարյան Ա.Ս., Հայաստանի Հանրապետության պաշտպանական ոլորտի օրենսդրական բարեփոխումների հիմնական ուղղությունները բանակաշինության արդի փուլում // ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ-ի «Հայ կական բանակ» ռազմագիտական հանդես, 2008, հ.մ. 2-3 (56-57), էջ 37-38

քաղաքականության հիմնական ուղղությունները սահմանում է Ազգային անվտանգության խորհուրդը, իսկ պաշտպանության նախարարն այդ հիմնական ուղղությունների շրջանակներում իրականացնում է ՁՈՒ ղեկավարումը: Ոչ պատերազմական ժամանակ ՁՈՒ ԳԾ պետը ենթակա է պաշտպանության նախարարին, սակայն պատերազմի ժամանակ ՁՈՒ գերագույն հրամանատարը վարչապետն է¹¹¹:

2015թ. սահմանադրական փոփոխությունների ազդեցությունները ՀՀ պաշտպանության վրա կարելի է ներկայացնել հետևյալ խմբավորումներով.

- ազդեցություն հրամանատարական ուղղահայացի և դրանից բխող կառավարման ու ղեկավարման կարգավորումների վրա,
- գինված ուժերի գործառնությունը կառավարության ենթակայության ներքո,
- պատերազմի ժամանակ գինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի կարգավիճակի ուղղորդումը վարչապետին՝ գերագույն հրամանատարի ամրագրմամբ,
- պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունների սահմանում Ազգային անվտանգության խորհրդի կողմից,
- Հայաստանի պաշտպանության ոլորտում գործող նորմատիվ-իրավական ակտերի վերանայման ու արմատական փոփոխությունների անհրաժեշտություն:

Պետության պաշտպանության կազմակերպական-իրավական հիմքերի շրջանակում ընդգծվում է նաև ՁՈՒ համալրման գործընթացները, որոնց իրավական հիմքերն ամրագրվում են սահմանադրություններում և այլ օրենքներում՝ սահմանելով երկրի պաշտպանությանը մասնակցելու քաղաքացիների պարտականությունները: Մասնակցությունը երկրի պաշտպանությանը քաղաքացիների սահմանադրական բնույթի պարտականություն է: Սահմանադրությամբ ամրագրված դրույթն ամբողջությամբ համապատասխանում է միջազգային իրավունքի նորմերին և համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքներին: Մարդու իրավունքների համընդհանուր

¹¹¹ 2015թ. ՀՀ Սահմանադրության փոփոխություններ, ՀՀ ՊՏ հատուկ թողարկում/2015, 21.12.2015թ., 14-րդ և 154-րդ հոդվածներ

հռչակագրի 29-րդ հոդվածում սահմանված է, որ յուրաքանչյուր ոք ունի պարտականություններ հասարակության առջև, միայն որում և հնարավոր է անձի ազատությունը խաթմբ գարգացումը¹¹²:

Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին Միջազգային դաշնագրում նույնպես ամրագրված է, որ ամեն օր անհատը պարտականություններ է կրում մյուս անձանց և այն հասարակության առջև, որին նա պատկանում է: Ստանձնելով երկրի քաղաքացիների իրավունքներն ապահովելու պարտականությունը՝ պետությունը վերջիններից պահանջում է օրինաչափ վարքագծի դրսևորում, որը կհամապատասխանի իրավական դրույթներին: Այդ նպատակով պետությունը քաղաքացիներին հասցեագրված պարտականությունների տեսքով ձևավորում է իր պահանջները և սահմանում իրավաբանական պատասխանատվություն դրանք չկատարելու համար:

Փաստացի, գրեթե բոլոր պետություններում ավանդաբար առանձնանում են քաղաքացիների սահմանադրական այդ պարտականությունը վերաբերող երկու հիմնական ձևեր՝ զինապարտությունը և երկրի պաշտպանությունը մասնակցելու պարտականության կամովին կատարումը: Այս առնչությամբ ուշադրության արժանի դրույթներ կան մի շարք երկրների սահմանադրություններում: Այսպես, ԱՄՆ զինված ուժերի համալրման առանձին հարցեր ամրագրվել են այդ երկրի սահմանադրական այլ ակտերում: Այսպես, «Համադաշնության հոդվածներով»¹¹³ կարգավորվում են բանակի և նավատորմի համալրման, ինչպես նաև արտաքին ու ներքին վտանգներից նահանգների պաշտպանության հարցերը: Կոնգրեսին վերապահված է ցամաքային զորքերի թվաքանակը սահմանելու և վերջինիս ֆինանսավորմանն առնչվող հարցերը կարգավորելու իրավունք:

ՉԺՀ Սահմանադրությունը հռչակում է, որ երկրի ռազմական անվտանգության դեմ ուղղված ոտնձգությունների դեմ պայքարելը ՉԺՀ յուրաքանչյուր քաղաքացու սուրբ պարտքն է և քաղաքացիները

¹¹² Մարդու իրավունքների մասին հռչակագրի 29-րդ հոդվածի 1-ին կետը (ընդունվել և հռչակվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1948թ. դեկտեմբերի 10-ի 217 Ա բանաձևի համաձայն)

¹¹³ Конституции зарубежных государств (2-ое изд-е, перераб. и дополн.): Сост. А.В. Маклаков, М., “Вольтерс Клувер”, 1999, стр. 183-188:

օրենքին համապատասխան ունեն գինվորական ծառայության և ժողովրդական աշխարհագործին մասնակցելու պարտականություն¹¹⁴:

Գերմանիայի Հիմնական օրենքը բավականաչափ ուշադրություն է դարձնում պաշտպանության բնագավառում քաղաքացիների սահմանադրական պարտականություններին՝ վերաբերող հարցերին: Դրանում սահմանված են երկրի բոլոր քաղաքացիների՝ այդ պարտականությունների կատարման ձևերը: Բացի այդ, սահմանված է նաև, որ գինվորական ծառայության գորակոչի ենթակա 18 տարին լրացած արական սեռի այն ներկայացուցիչները, ովքեր գինվորական ծառայությունից հրաժարվում են՝ ըստ հավատքի և կրոնական համոզմունքների, պարտավոր են կրել այնպիսի ծառայություն, որը չի առնչվում գինված ուժերում գենք կրելու կամ սահմանափակ ծառայություն անցնելու հետ¹¹⁵: Որպես բացառություն կարող է լինել պետության պաշտպանության հատուկ անհրաժեշտության վիճակը, երբ այդ անձինք ծառայության են ներգրավվում գինված ուժերի մատակարարման ոլորտում: Պետության պաշտպանության տվյալ իրավիճակում որպես քաղաքացիական անձնակազմ կարող են ծառայության ներգրավվել նաև 18-55 տարեկան կանայք՝ քաղաքացիական սանիտարական ծառայություններում և ստացիոնար գինվորական հոսպիտալներում աշխատելու համար:

Հունաստանի Սահմանադրությամբ պետական յուրաքանչյուր գործառույթ կարող են իրականացնել միայն Հունաստանի քաղաքացիները: Չենք կրելու ի վիճակի յուրաքանչյուր քաղաքացի օրենքով սահմանված կարգով պետք է օժանդակի երկրի պաշտպանությանը: Սահմանադրությունը բացառում է այդ պարտականությունից քաղաքացիների ազատումը նույնիսկ կրոնական նկատառումներով¹¹⁶: Իտալիայի Սահմանադրությունը հայրենիքի պաշտպանությունը հռչակում է որպես քաղաքացու սրբազան պարտք: Օրենքը կարող է որոշել պարտադիր գինվորական ծառայության

¹¹⁴ Конституция Китайской Народной Республики, принято 4 декабря 1982г. (с изм. 1988, 1993, 1999, 2004 гг.), ст. 55, http://chinalawinfo.ru/constitutional_law/constitution

¹¹⁵ Основной закон Федеративной Республики Германии, от 23 мая 1949г., ст. 12, http://www.rfhwb.de/Pravo/Pravo_ru/pravo_ru1.htm

¹¹⁶ Конституция Греции, принято 11 июня 1975г., ст. 4, <http://legalns.com/download/books/cons/greece.pdf>

իրավական սկզբունքները, որոնցից մի քանիսն ուղղակիորեն նշված են Սահմանադրության մեջ. գինվորական պարտականության կրումը չպետք է վնաս պատճառի քաղաքացու աշխատանքային և քաղաքական իրավունքներին: Սահմանադրությունը գինծառայողներին պարտադրում է կարգապահությամբ և արժանավորությամբ կատարել իրենց լիազորված գործառույթները՝ երդում տալով օրենքով սահմանված կարգով¹¹⁷:

Իսպանիայի Սահմանադրությունը երկրի պաշտպանությունը համարում է քաղաքացիների և իրավունք, և պարտականություն¹¹⁸: Իսպանացիների գինվորական պարտականությունները որոշվում են օրենքով, իսկ Սահմանադրությունը երաշխավորում է գինվորական ծառայությունից ազատվելու հնարավորությունը, երբ այն հակասում է քաղաքացու հավատքին և կրոնական համոզմունքներին: Այդ դեպքում գինվորական ծառայությունը փոխարինվում է այլ ընտրանքային քաղաքացիական ծառայությամբ:

Պորտուգալիայի բոլոր քաղաքացիներն ունեն Սահմանադրությամբ ամրագրված պարտականություններ¹¹⁹: Երկրի պաշտպանությունը համարվում է պորտուգալացիների և իրավունքը, և պարտականությունը: Երկրի հիմնական օրենքը սահմանում է պարտադիր գինվորական ծառայության շրջանակներն ու ժամկետները: Սահմանադրությունն այն բաժանում է երկու տեսակի՝ շարային (զենքի կրմանն առնչվող) և ոչ շարային՝ գինվորական ծառայություն կամ քաղաքացիական ծառայություն: Սահմանադրությունն այլ ընտրանքային քաղաքացիական ծառայություն է պարտադրում այն անձանց, ովքեր խղճի և դավանանքի ազատության նկատառումներով հրաժարվում են թե՛ շարային, թե՛ ոչ շարային գինվորական ծառայությունից:

Այսպիսով, տարբեր երկրների սահմանադրությունները, որպես կանոն, ուղղակիորեն ամրագրում են երկրի պաշտպանությանը

¹¹⁷ Конституция Итальянской Республики, принято 27 декабря 1947г., ст. 52, 54, http://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/italy/italy--r.htm

¹¹⁸ Конституция Королевства Испании, принято 27 декабря 1978г., ст. 30, http://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/spain/spain--r.htm

¹¹⁹ Конституция Португальской Республики, принято 2 апреля 1976г., ст. 12, http://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/portugal/portug-r.htm

մասնակցել ու քաղաքացիների պարտականությունը, որի իրականացման ձևերն արդեն իսկ սահմանվում և մանրամասնվում են այլ օրենսդրական ակտերով:

ՀՀ-ն ընդունում է երկրի պաշտպանության անհրաժեշտությունը՝ համապատասխան պարտականությունն սահմանելով իր քաղաքացիների համար, այսինքն՝ այն կրում է համընդհանուր բնույթ¹²⁰: ՀՀ քաղաքացիները հայրենիքի պաշտպանությանը մասնակցելու իրենց սահմանադրական պարտքը կատարում են օրենքով սահմանված կարգով: 2015թ. Սահմանադրության 14-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է ՀՀ քաղաքացիների՝ երկրի պաշտպանության մասնակցելու սահմանադրական պարտականությունը¹²¹, իսկ արդեն «Չինվորական ծառայությունն անցնելու մասին» ՀՀ օրենքը զինվորական ծառայության անցկացումը նախատեսում է զորակոչի միջոցով՝ պարտադիր զինվորական ծառայության ժամանակ, պայմանագրային զինվորական ծառայությունը՝ կամավոր հիմունքներով) և ՌՌԲ-եր ընդունվելով (հետուսումնական պարտադիր պայմանագրային զինվորական ծառայության պայմանով)¹²²: Պայմանագրով զինվորական ծառայության անցնելու իրավունքն իր բնույթով միաժամանակ հանդիսանում է նաև ՀՀ քաղաքացիների աշխատանքի իրավունքի իրականացման ձև:

Այս առնչությամբ արտահայտելով իր տեսակետը՝ Ա. Վախիդովը նշում է, որ զինծառայողներն իրականացնում են միջազգային իրավական ակտերով և սահմանադրություններով հռչակված աշխատանքի իրենց իրավունքը՝ զինվորական ծառայության անցնելով ինչպես պարտադիր կարգով (զորակոչի միջոցով), այնպես էլ կամավոր հիմունքներով (պայմանագրային զինվորական ծառայություն)¹²³:

¹²⁰ Քոչարյան S.S., Հայաստանի Հանրապետությունում զինվորական ծառայության կազմակերպչական ապահովումը // ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2-3 (56-57), 2008, էջ 67

¹²¹ 2015թ. ՀՀ Սահմանադրության փոփոխություններ, ՀՀ ՊՏ հատուկ թողարկում/2015, 21.12.2015թ., 14-րդ հոդվածը

¹²² «Չինվորական ծառայությունն անցնելու մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2002/26, 19.07.2002, 3-րդ հոդվածը

¹²³ Вахидов А.Т. О некоторых вопросах реализации военнослужащими права на труд в Российской Федерации. Материалы международной научной конференции, посвященной пятидесятилетию Всеобщей декларации прав человека «Права человека в России: декларации, нормы и жизнь», М.: МНЭПУ, 1999, стр. 23

Եվ, իսկապես, ծառայողական ամեն մի գործունեությունն աշխատանքային գործունեության տարատեսակ է, իսկ զինվորական ծառայությունն իր սոցիալական բնույթով կարելի է համարել որպես վերջինիս հատուկ տեսակ:

Պետության անվտանգության և պաշտպանության նպատակների նկատառումներով սահմանափակվում է որոշակի կատեգորիայի քաղաքացիների գործունեության ձևի ընտրության սահմանադրական իրավունքը: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ոչ թե քաղաքացիներին աշխատանքի ընտրության ազատությունից զրկելուն, այլև վերջիններիս հանձնարարվող գործունեության որոշակի ձև իրականացնելու պարտականությանը (պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելով): Միաժամանակ, տվյալ դեպքում չեն խախտվում այնպիսի սահմանադրական սկզբունքներ, ինչպիսիք են՝ օրենքի առջև բոլորի հավասարությունն անկախ սեռից, ռասայից, ազգությունից, դավանանքից, նյութական հնարավորություններից և պաշտոնից, բնականության վայրից և այլ հանգամանքներից: Այս տրամաբանությունից էլ ելնելով՝ ՀՀ նոր Սահմանադրության մեջ արդարացիորեն ամրագրվեց, որ զինվորական կամ այլ ընտրանքային ծառայությունը չի համարվում պարտադիր կամ հարկադիր աշխատանք¹²⁴:

Զինվորական ծառայության զորակոչվելը պարտադիր է բոլոր այն քաղաքացիների համար, ում վերաբերում է, սակայն միաժամանակ օրենքով սահմանվում են սահմանադրական այդ պարտականության կատարումից ազատելու կամ տարաժամկետելու հնարավորություններ: Օրենսդրական ամրագրումները չեն հակասում սահմանադրական իրավունքի այն դրույթին, որ սահմանվում է անձի հնարավորությունների հավասարություն, այդ թվում՝ սահմանադրական պարտականություններ կատարելիս: Այսպես, յուրաքանչյուր քաղաքացի, ով ենթակա է զինվորական ծառայության զորակոչվելու, կարող է սահմանված կարգով ազտավել պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից կամ օգտվել զորակոչից տարկետման իրավունքից:

¹²⁴ 2015թ. ՀՀ Սահմանադրության փոփոխություններ, ՀՀ ՊՏ հատուկ թողարկում/2015, 21.12.2015թ., 57-րդ հոդված

Փաստորեն, պետությանը զինվորական ծառայության անցնելու հնարավորությունն ունեցող ոչ բոլոր քաղաքացիներին է ներգրավում զինվորական ծառայության: Այս դեպքում խոսքը վերաբերում է օրենքով հնարավոր, այսինքն՝ իրավական անհրաժեշտությանը: Չինվորական ծառայությանը քաղաքացիների տարբեր կատեգորիաների ներգրավման իրավական անհրաժեշտությունը պետությանը սահմանում է համապատասխան օրենսդրական ակտերում՝ ըստ հասարակական կյանքի արդի անհրաժեշտ պայմանների: Այդպիսով, ՀՀ բոլոր քաղաքացիները երկրի պաշտպանությանը մասնակցելու սահմանադրական պարտականության կրողներ են, բայց ոչ բոլորն են համարվում զինվորական ծառայության անցնելու իրավական պարտականության կրողներ: Հիմնվելով վերոգրյալի վրա՝ կարելի է չհամաձայնել այն տեսակետին, որ զինվորական ծառայության անցնելը բոլոր քաղաքացիների համընդհանուր սահմանադրական պարտականությունն է¹²⁵, այլ համարվում է նրանց առանձին կատեգորիաների իրավական պարտականություն: Ընդհանրացնելով կարելի է նշել, որ երկրի պաշտպանության սահմանադրական պարտականությունը հասարակության բոլոր անդամների շահերի նկատառմամբ պետության սահմանած և Սահմանադրությամբ ամրագրված անհրաժեշտություն է, հանուն որի իրականացման նախատեսվում են վարքագծի ձևեր և պատասխանատվություն այդ սահմանադրական պարտականության ոչ պատշաճ կատարման համար:

Չինապարտության համակարգը՝ որպես ՀՀ քաղաքացիների կողմից երկրի պաշտպանությանը մասնակցելու սահմանադրական պարտականության ապահովման գործիք, պետք է ներառի այդ պարտականության իրականացման ամբողջ շղթան՝ զինվորական հաշվառում-նախագորակոչային պատրաստություն-գորակոչի կազմակերպման միջոցով իրականացվող պարտադիր զինվորական ծառայություն-կամահայտության վրա հիմնված պայմանագրային զինվորական ծառայություն-պահեստազորային համակարգ՝ ապահովելով խաղաղ և պատերազմի ժամանակ ՀՀ պաշտպանության

¹²⁵ Տե ս, օրինակ, Овсянко Д.М. Административно-правовые проблемы государственной службы в Российской Федерации: Автореф. на дисс. докт. юр. наук (в виде научного доклада). М. 1998, стр. 38

արդյո՞ւն նավետուէթյունը: Նշված շղթայի միասնակուէթյունը և գինապարտուէթյան համակարգի ամբողջականութիւնն ապահովելու հրամայականը հանգեցնում է այդ հարաբերութիւնները մեկակտու և ամբողջական կանոնակարգելու անհրաժեշտութիւն, ինչին և միտված է տվյալ բնագավառում ներկայումս իրականացվող քաղաքականութիւնը՝ «Զինապարտութիւն և գինվորական ծառայութիւն մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը:

«Զինապարտութիւն մասին» ՀՀ գործող օրենքով սահմանվում են գինվորական հաշվառումը, նախագորակոչային պատրաստութիւնը, զորակոչը և դրակազմակերպման գործընթացը, ՀՀ ՁՈԻ պահեստազորում հաշվառումն ու պահեստազորայինների մասնակցութիւն ամբիրականացվող միջոցառումները, միաժամանակ շարքային և սպայական կազմերի պարտադիր գինվորական ծառայութիւն զորակոչի կազմակերպման և պահեստազորայինների մասնակցութիւն ամբիրականացվող միջոցառումների հետ կապված հարաբերութիւնները կարգավորված են ոչ ամբողջական, ինչը բազմաթիվ խնդիրներ է առաջացնում գործընթացի պատշաճ իրականացման ուղղութիւն ամբ: «Զինվորական ծառայութիւն անցնելու մասին» ՀՀ գործող օրենքով սահմանվում են գինվորական ծառայութիւն տեսակները՝ պայմանագրային, պարտադիր և պահեստազորային, սակայն հիմնական կարգավորում տրվում է պայմանագրային գինծառայութիւն անցնելու հարաբերութիւններին, իսկ զորակոչի միջոցով իրականացվող պարտադիր գինվորական ծառայութիւն և պահեստազորում ծառայութիւն հետ կապված հարաբերութիւնները գրեթէ կարգավորված չեն:

«Զինապարտութիւն և գինվորական ծառայութիւն մասին» օրենքի ընդունման անհրաժեշտութիւնը պայմանավորված է գինապարտութիւն և գինվորական ծառայութիւն հետ կապված հարաբերութիւնները մեկ միասնական ակտով կարգավորելու, ինչպես նաև պաշտպանական բարեփոխումների շրջանակներում իրականացվող գործընթացում քաղաքացիների գինվորական հաշվառման, զորակոչի, գինվորական ծառայութիւն անցման և պահեստազորային պատրաստութիւն հետ կապված հարաբերութիւնները հստակեցնելու

հրամայ ականով: Օրենքի նախագծի մշակման և ներկայացման պահանջը սահմանված է նաև ՀՀ կառավարության 2014 թվականի գործունեության միջոցառումների ծրագրում և գերակախնդիրներում¹²⁶:

Հայրենիքի պաշտպանությանը մասնակցելու բոլոր ձևերը, այդ թվում՝ զինվորական ծառայությունն անցնելը, ըստ սահմանադրական հիմքերի՝ միայն քաղաքացիների պարտականությունն է: Հարց է ծագում, թե արդյոք կարող են այլ պետությունների քաղաքացիները կամ, ընդհանրապես, քաղաքացիություն չունեցող անձինք զինվորական ծառայությունն անցնել: ՀՀ Սահմանադրության 46-րդ հոդվածի (յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել ՀՀ պաշտպանությանը) և «Հինապարտության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի (զինապարտությունը ՀՀ պաշտպանությանը մասնակցելու՝ քաղաքացիների սահմանադրական պարտականությունն է) սահմանումներից բխում է, որ տվյալ դեպքում խոսքը միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիների մասին է: Ճիշտ է, օրենսդրությամբ հստակորեն չի արգելվում ՀՀ քաղաքացիություն չունեցող անձանց (այլ պետությունների քաղաքացիների) մասնակցությունը Հայրենիքի պաշտպանությանը, բայց նշված դրույթներում արդեն իսկ ամրագրելով «քաղաքացի» հասկացությունը՝ բացառվում է այդպիսիք չհամարվող անձանց ներգրավումը զինվորական ծառայության:

Միաժամանակ հարկ է նշել, որ նախկինում գործնականում հնարավոր էր համարվում այլ պետությունների քաղաքացիների ներգրավումը զինվորական ծառայության: Այսպես, ԱԴՀ մասնակից որոշ պետություններ մինչև սեփական զինվորական կադրերի ձևավորումը թույլատրում էին իրենց զինված ուժերը համալրել Ռուսաստանի Դաշնության քաղաքացի համարվող զինծառայողներով¹²⁷:

¹²⁶ ՀՀ կառավարության 2014 թվականի հունիսի 31-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 9-ի թիվ 10-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 777-Ն որոշումը, ՀՀ ՊՆ 2014.08.27/46, 31.07.2014

¹²⁷ Постановление Межпарламентской Ассамблеи государств-участников Содружества Независимых государств о временном (до 2000 года) разрешении военнослужащим, имеющим иное

ՀՀ Սահմանադրության ունում 2005 թվականի նոյեմբերի 27-ին փոփոխության ներկայացրած փոփոխությունները կատարելուց հետո արդիական հարց դարձավ երկքաղաքացիության ինստիտուտի ներդրումը և դրան առնչվող բազմաթիվ հարցերի կարգավորումը: Սահմանադրությամբ ամրագրվեց, որ երկքաղաքացիության ունեցող անձանց իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով¹²⁸: Երկքաղաքացիության ունեցող քաղաքացիները չեն կարող երկքաղաքացիության պատճառաբանմամբ հրաժարվել ՀՀ քաղաքացիությանից բխող պարտականություններից և այդ հիմունքով չեն կարող սահմանափակվել վերջիններիս իրավունքները¹²⁹: Հետևաբար, երկքաղաքացիության ունեցող ՀՀ քաղաքացիները պետք է կատարեն հայրենիքի պաշտպանությանը մասնակցելու իրենց սահմանադրական պարտականությունը՝ ինչպես պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու, այնպես էլ կամավոր հիմունքներով պայմանագրային զինվորական ծառայության անցնելով: Սակայն, երկքաղաքացիության ինստիտուտը Հայաստանի Հանրապետության ունում նշված նպատակով կիրառելիս անհրաժեշտ է նկատառել մի շարք գործոններ. երկրի աշխարհաքաղաքական դիրքը, պատերազմական և գրեթե մշտական լարվածության վիճակը, այն պետության ունեցողի հավանական ցանկը, որոնց հետ կիրականացվի երկքաղաքացիության կապը և սրանցով պայմանավորված բազմաթիվ խնդիրների իրականացումը:

ՀՀ օրենսդրության վերլուծության ունից երևում է, որ զինծառայողներն ունեն հատուկ կարգավիճակ. այն է՝ նրանց առանձնացված իրավունքների, ազատության ունեցողի, պարտականությունների և պատասխանատվության ամբողջությանը: Չինծառայողների հատուկ կարգավիճակի մասին են նշում նաև արտասահմանյան մասնագետներ: Այսպես. ընդգծելով այդ հատուկ կարգավիճակը՝ գերմանացի Կ.Հեսսեն նշում է, որ այն արտացոլում է պետության և անձի փոխհարաբերությանը՝ պայմանավորված

гражданство, продолжать военную службу в государствах-участниках Содружества Независимых Государств от 23 мая 1993г.

¹²⁸ ՀՀ Սահմանադրության 2005 թվականի փոփոխության 30.1-րդ հոդվածը (ՀՀ ՊՏ 2005 (հատ. թող.), 05.12.2005)

¹²⁹ «Զինապարտության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ ՊՏ 1998/26, 16.10.1998, 3.1 հոդվածը

պետության մեջ քաղաքացու սովորական իրավունքների և պարտականությունների սահմաններ անցնող հատուկ իրավասության (իրավունքներով և պարտականություններով), մասնավորապես՝ այդպիսին են պետության և պաշտոնատար անձանց (զինծառայողների), զինվորների և ռազմաուսումնական հաստատությունների կուրսանտների փոխադրությունները (հարաբերություններ, որ ընդհանուր առմամբ, անհրաժեշտ են հասարակության կենսագործունեության համար): Կ.Յեսսեն նշում է նաև, որ այդ «հատուկ հարաբերությունները», ինչպես և զինծառայողների իրավունքների որոշ սահմանափակումները, պետք է կարգավորվեն առանձին հատուկ ակտերով՝ հիմնվելով, իհարկե, սահմանադրական նորմերի վրա¹³⁰:

Ռուսական մասնագիտական գրականության մեջ հատուկ կարգավիճակի գոյության վերաբերյալ արտահայտվել են տարբեր տեսակետներ: Ա.Դոբրովոլսկին գրում է. պետության մեջ զինծառայողների իրավաքաղաքական դրությունը մի շարք հարաբերություններում տարբերվում է այլ քաղաքացիների զինվորական ծառայության հատուկ պայմաններից և ազդեցությունից: Այն է՝ բանակի՝ որպես զինված պայքարի համար նախատեսված կազմակերպության հատուկ քաղաքական-իրավական բնույթը, վերջինիս բաղկացուցիչ տարրերի փոխադրությունները՝ պայմանավորելով կառույցի ներքին համախմբվածության և միասնական ոգու անհրաժեշտությունը, զինվորական ծառայության՝ որպես պետական ծառայության հատուկ տեսակի էությունը բովանդակությունը¹³¹:

Խորհրդային շրջանի մի շարք վերլուծաբաններ¹³² համարում էին, որ զինծառայողների կարգավիճակի մասին հարցի նույնիսկ առանձնացված ներկայացնելն անհիմն է: Իրենց այդ տեսակետը վերջիններս հիմնավորում էին հիմնվելով զինծառայողների՝ որպես պետության քաղաքացիների լիիրավության թեզիսի վրա: Նախկինում գործող «Համընդհանուր զինապարտության մասին» ԽՍՀՄ օրենքում

¹³⁰ Хессе К., Основы конституционного права ФРГ, Перевод с немецкого, Под ред. Сидорова Н.А. (Вступ. ст.), Пер.: Сидорова Е.А.: М. 1981, стр. 168-169

¹³¹ Добровольский А.М., Особенности положения военнослужащих в области публичного права. СПб. 1913, стр. 3

¹³² Романов П.И., Общие права и обязанности военнослужащих вооруженных сил СССР. М. 1965, стр. 25

ամրագրված էր, որ զինծառայողները և վարժական հավաքների անցնող զինապարտներն օգտվում են քաղաքացիների բոլոր սոցիալ-տնտեսական, քաղաքական և անձնական իրավունքներից ու ազատություններից, ինչպես նաև կրում են համապատասխան բոլոր պարտականությունները, որոնք նախատեսված էին ԽՍՀՄ Սահմանադրությամբ¹³³:

Փաստորեն, ըստ այդ տեսակետի՝ բացառվում էր նույնիսկ զինծառայողների քաղաքական-իրավական ինքնուրույն կարգավիճակի գոյություն մասին հարցի օրինաչափությունն ու անհրաժեշտությունը: Խոսքը կարող էր լինել միայն զինծառայողների սահմանադրական իրավունքների ու պարտականությունների՝ ռազմական օրենսդրության նորմերում կոնկրետացման մասին:

Այս հարցի մասին այլ կարծիք է արտահայտել Ն.Արտամոնովը, ով համարում էր, որ իսկապես առկա է զինծառայողների հատուկ իրավաքաղաքական կարգավիճակ և համապատասխանաբար անհրաժեշտ է տարբերակել զինծառայողների ընդհանուր քաղաքացիական (ներառյալ նաև սահմանադրական) և զինվորական ծառայության բնույթից բխող իրավունքները, ազատությունները, պարտականություններն ու պատասխանատվությունը¹³⁴:

Այս համատեքստում, նպատակահարմար է ավելի մանրամասն ուսումնասիրել զինծառայողների քաղաքական-իրավական կարգավիճակի հասկացությունը և վերջինիս հարաբերակցությունը մարդու և քաղաքացու սահմանադրաիրավական կարգավիճակի հետ: Անձի և քաղաքացու սահմանադրաիրավական կարգավիճակի բովանդակությունն են կազմում Սահմանադրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված իրավունքները, ազատությունները և պարտականությունները: Միաժամանակ, նշված սահմանադրաիրավական կարգավիճակի հասկացությունը չի կարող արտացոլել առանձին կատեգորիաների անձանց իրավունքների, ազատությունների ու պարտականությունների առանձնահատկությունները, ինչը և առաջացնում է «հատուկ քաղաքական-իրավական կարգավիճակ»

¹³³ Закон СССР «О всеобщей воинской обязанности», от 12 октября 1967 г. (Ведомости Верховного Совета СССР, 1967 г., № 42), http://soldat.ru/doc/law/law_war/war1967.html

¹³⁴ Артамонов Н.В., Правовой статус советских военнослужащих и его обеспечение. М. 1984, стр

հասկացողությամբ զիտականորեն սահմանելու անհրաժեշտությունը: Դրա բովանդակությունն են կազմում ընդհանուր իրավունքների և պարտականությունների կոնկրետացումն ու լրացումը՝ մարդու քաղաքական, սոցիալական, տնտեսական, ծառայողական և այլ դրության առանձնահատկությունների նկատմամբ: Այդ առանձնացված և լրացուցիչ իրավունքներն ու պարտականությունները նախատեսվում են ընթացիկ օրենսդրական ակտերով՝ բնականաբար, հիմնվելով սահմանադրական նորմերի վրա:

ՀՀ պաշտպանական բարեփոխումների շրջանակում օրենսդրության փոփոխությունների հիմնական նպատակը քաղաքացիական վերահսկողության և պաշտպանության պլանավորման ու կառավարման ժողովրդավարական հիմնարար սկզբունքների վրա հիմնված, արդիական ռազմական պահանջներին համապատասխանող, ճկուն և ժամանակակից պաշտպանության համակարգի ստեղծումն է¹³⁵: Անշուշտ, այդ համակարգի ու նշված արժեքների հիմնական կրողն ու պատասխանատուն զինված ուժերում ծառայողուն անցնող զինծառայողն է:

Չինվորական ծառայողությունը, պետական հատուկ նշանակության նպատակների իրականացմանը միտված և օրենսդրական ակտերով կանոնակարգվող, պետական ծառայության տարատեսակ է, հետևաբար, դրա գործունեությունը պետական բնույթ ունի: «Չինվորական ծառայողությունն անցնելու մասին» ՀՀ գործող օրենքում հենց այդ հիմունքով է ձևակերպված զինծառայողի սահմանումը. «զինծառայող են համարվում զինված ուժերում և այլ զորքերում պետական ծառայողուն անցնող քաղաքացիներն ու ռազմաուսումնական հաստատությունների կուրսանտները»¹³⁶: Հետևաբար, զինծառայողներին բնորոշ են պետական ծառայողներին վերաբերող բոլոր հատկանիշները: Չինծառայողների փոխհարաբերությունները խարսխվում են պետական ծառայությանը բնորոշ իշխանական հարաբերությունների և ենթակայության հիմքի վրա, իսկ նրանց

¹³⁵ Նազարյան Ա.Ս., ՀՀ օրենսդրության փոփոխություններն ու լրացումները ՀՀ պաշտպանության երկրորդ ռազմավարական վերանայման համատեքստում // ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2015, հմ. 3 (85), էջ 51

¹³⁶ «Չինվորական ծառայողությունն անցնելու մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2002/26, 19.07.2002, 1-ին հոդվածը

իրավաքաղաքական կարգավիճակը, ծառայության անցնելու կարգը որոշվում է պետության կողմից:

«2ինծառայող» հասկացության հատկանիշները վերլուծելիս հարկավոր է ընդգծել, որ գինծառայողը ֆիզիկական անձ է (18 տարին լրացած), ՀՀ քաղաքացի, որը գինվորական ծառայություն է անցնում պայմանագրային հիմունքներով կամ գորակոչի միջոցով: Որպես պետությանն իրենց հավատարմության նշան՝ գինծառայողները հանդիսավորությունից զինվորական երդում են տալիս, որից հետո միայն նրանց շնորհվում են գինվորական կոչումներ: Փաստորեն, գինծառայողներն ինքնին ներկայացնում են սուբյեկտների առանձին խումբ և պետության պաշտպանական ոլորտում իրականացնում են օրենսդրորեն ամրագրված գործառույթներ և այդ ոլորտին հատուկ մեթոդներով լուծում խնդիրներ՝ գործելով պետական այն մարմինների ու կազմակերպությունների կազմում, որոնցում նախատեսված է գինվորական ծառայություն:

Հայաստանի պաշտպանության ոլորտում իրականացվող կազմակերպական-իրավական բարեփոխումների համատեքստում արժևորվում է նաև ընդհանրապես գինծառայողների իրավագիտակցության մակարդի բարձրացման հարցը: Պաշտպանական բարեփոխումների ժամանակ պետք է հատուկ ուշադրություն դարձնել գինված ուժերի անձնակազմի իրավագիտակցությանը և բարոյահոգեբանական վիճակին, գիտական ու գործնական վերլուծության ենթարկել գինվորական ծառայությանն ու գինված ուժերին բնորոշ գործոնները, ուսումնասիրել հնարավոր հակաիրավական վարքագծի դրսևորմանը միտված պայմանները (դրանց առաջացման պատճառները), որոնք անձի մեջ ձևավորում են օրենքի պահանջները չկատարելու, չենթարկվելու, իրավակարգը խախտելու, ուրիշների իրավունքները ոտնահարելու և այլ նմանատիպ իրավախախտ ցանկություններ¹³⁷: Հայ գինծառառողը պետք է իր առանձնացված դերակատարությամբ ու քաղաքական-իրավական վարքագծով օրինակ հանդիսանա հասարակության մյուս խմբերին, ինչպես նաև ապագա սերնդի հայրենասիրական ու օրինապաշտ դաստիարակման համար:

¹³⁷ Սեդրակյան Ս.Գ., Պաշտպանական բարեփոխումները իրավաբանական ապահովումը բանակաշինության համատեքստում // ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2-3 (56-57), 2008, էջ 56

ԳԼՈՒԽ 3. ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԻ ԿԱՏԱՐԵԼ ԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

3.1. Միջազգային ու տարածաշրջանային արդի ռազմաքաղաքական զարգացումները և Հայաստանի Հանրապետության անվտանգային միջավայրը

Վերջին ժամանակաշրջանում միջազգային անվտանգության ճարտարապետությունը շարունակում է լուրջ փոփոխություններ կենթարկվել՝ բախվելով տարատեսակ բնույթի նորանոր մարտահրավերների: Դրանց շարքում կարելի է առանձնացնել համաշխարհային շուկայում նավթի գների կտրուկ անկումը, Արևմուտքի կողմից Իրանի նկատմամբ սահմանված պատժամիջոցների մեծ մասի չեղարկումը, Արևմուտք-ՌԴ հարաբերությունների շարունակական վատթարացումը, Մերձավոր Արևելքում (Սիրիայում) ռազմավարական իրավիճակի փոփոխությունը, ինչպես նաև դեպի ԵՄ փախստականների հոսքի ավելացումը: Ընդհանուր առմամբ, վերոնշյալ մարտահրավերներն ունեն ինչպես քաղաքական ու տնտեսական, այնպես էլ ռազմական բնագավառներում մրցակցությունն ու հակասությունները խորացնելու միտում: Նման պայմաններում ռազմական (հատկապես՝ արտաքին բաղադրիչով) քաղաքականության հետևողական զարգացող համակարգի առկայությունը Հայաստանի Հանրապետության համար օրակարգային նշանակություն է ձեռք բերում:

Միանշանակ կարելի է համաձայնել Հայաստանի գիտահետազոտական շրջանակներում կիրառության մեջ դրված՝ ռազմական քաղաքականության բնորոշման հետ, այն է՝ պետության և հաստատությունների քաղաքականությունը, որն անմիջապես կապված է ռազմական կազմակերպվածքի (կազմավորման) ստեղծման, զինված բռնության միջոցների պատրաստման ու քաղաքական նպատակներով

կիրառման հետ¹³⁸: Համակարգային առումով ռազմական քաղաքականությանը ներառում է դրաստիկ եկտները, նպատակները, օբյեկտները, ռազմաքաղաքական նպատակներին հասնելու միջոցները և այն պայմանները, որոնցում իրագործվում է ռազմաքաղաքական գործունեությունը: Այս համատեքստում հարկ է առանձնացնել, որ ռազմաքաղաքական իրադրությունը, որպես այդպիսին չհանդիսանալով ռազմական քաղաքականության կառուցվածքային բաղադրիչ, այդուհանդերձ անմիջականորեն ազդում է վերջինիս իրականացման գործընթացի և ուղղությունների կանխորոշման վրա¹³⁹:

Հայաստանում իրագործվող սահմանադրական բարեփոխումները, փոփոխվող տնտեսական հնարավորությունները, նյութական, ժողովրդագրական և այլ պաշարների առկա մակարդակները պահանջում են պետության կողմից որդեգրել ռազմական քաղաքականության նոր սկզբունքներ ու մեթոդներ, հետևողականորեն կիրառել ու կատարել ազդեցիկ դրանք: Ռազմաքաղաքական հարաբերությունների համակարգում, ելնելով ազգային անվտանգության երաշխավորման ընդունված սկզբունքներից ու հիմնական մոտեցումներից, առանձնացվում են ներքին և արտաքին (միջազգային) ուղղությունները: Ներքին ռազմաքաղաքական հարաբերությունները բնորոշում են քաղաքականության սոցիալ-իրավական էությունը, իսկ միջազգային հարաբերությունները պայմանավորում են զինված միջոցներով քաղաքական նպատակներին հասնելու այս կամ այն ձևի ու մեթոդի կիրառելիության կոնկրետ սահմանները:

Հարավկովկասյան տարածաշրջանում ռազմաքաղաքական գործընթացները շարունակում են բնորոշվել անվտանգության միջավայրի փոփոխման միտումներով և չլուծված զինված հակամարտությունների առկայությամբ: Իրավիճակն էլ ավելի է բարդացրել ռուս-թուրքական հարաբերությունների քաղաքական սրումը և ՌԴ-Արևմուտք հակասությունների շարունակական

¹³⁸ Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն մեծ բառարան, Եր., ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվան ԱՌՀԻ, 2015, էջ 518

¹³⁹ Տես, օրինակ, Քոթանջյան Յ.Ս., Ռազմական քաղաքականություն (ընդհանուր դրույթներ) // Քոթանջյան Յ.Ս., Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները, Երևան, ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ, 2010, էջ 503

խորացումը, ինչը լրացուցիչ լարվածություն է բերում Հարավային Կովկաս՝ պայմանավորված ուժային կենտրոններին ու դաշինքներին այսպես կոչված «հավատարիմ մնալու» ուղեգծի հետ: Հարավային Կովկասը, ունենալով ներքին անկայունության խնդիրներ, փաստացիորեն հանդիսանում է նաև այն «պատվարը», որն արտաքին բարձր անվտանգային ռիսկերի պարագայում ոչ միայն կփորձի դիմադրվել հարավից եկող սպառնալիքներին, այլև խոչընդոտ կհանդիսանա այդ սպառնալիքների անցմանը դեպի ՌԴ-ի հարավային սահմաններ¹⁴⁰: Բացի այդ, Իրան-Արևմուտք հարաբերությունների կարգավորումը մեծացրել է նաև տարածաշրջանում Իրանի քաղաքականության ճկունության հնարավորությունները՝ հանգեցնելով նոր վերադասավորումների կանխատեսման:

Կարելի է առանձնացնել նաև Մերձավոր Արևելքում (Սիրիայում) ծավալվող զարգացումները: Ներկայումս Սիրիան համաշխարհային ուժային կենտրոնների համար դարձել է կենտրոնական ռազմադաշտ: 2015թ. սկզբից Իսլամական պետությունը (ԻՊ) Սիրիայում սկսեց գիջել տարածքներ (բացառություն էր Պալմիրայի նվաճումն ու արևմտյան ուղղությամբ որոշակի առաջխաղացումը): Իսլամականների առաջին խոշոր պարտությունը սկսվեց քրդական Քոբանիից, որն ազատագրվեց քրդական ուժերի կողմից տարվա սկզբին: Քրդերը զարգացրին հաջողությունն ու ընդլայնեցին իրենց կողմից վերահսկվող տարածքները Սիրիայում: Արևմուտքում Եփրատը դարձավ Իսլամական պետության և քրդական տարածքների միջև բաժանարար գիծը, իսկ հարավում և արևելքում այդ գիծն անցնում էր Սիրիայի ալ-Ռակկա և ալ-Հասաքա նահանգների որոշ հատվածներով¹⁴¹: Այդ փոփոխությունները լուրջ սպառնալիք ստեղծեցին Սիրիայի և Իրաքի միջազգայնորեն ճանաչված սահմանների պահպանման, ինչպես նաև Մերձավոր Արևելքում քրիստոնեական համայնքների անվտանգության համար: ԻՊ-ի առաջնորդներն ստանալով անմիջական \$ինանսական և ռազմատեխնիկական աջակցություն Պարսից ծոցի արաբական որոշ

¹⁴⁰ Ղևոնդյան Ա., Հարավային Կովկասը անվտանգության փորձաքարերի նոր շրջան է մտնում, 08.01.2016թ., <http://www.ankakh.com/article/30937/hv-kvovkase-anvtanguthyan-pvordzaqaryeri-nvor-shrdjan-e-mtnum>

¹⁴¹ Գրիգորյան Ս., Սիրիական ճգնաժամ, ամփոփելով 2015 թվականը, <http://www.panorama.am/am/news/2015/12/29/Սիրիական-ճգնաժամ/1506622>

պետության ունեներից և թուրքիայից, կարողանում են հմտորեն օգտվել ինչ պես համաշխարհային տերության ունեների, այնպես էլ տարածաշրջանի պետության ունեների միջև առկա հակասության ունեներից:

Գաղտնիք չէ, որ ԻՊ-ի համար թիվ մեկ տարանցիկ երկիրը թուրքիան է, ընդ որում՝ ոչ միայն էներգակիրների, այլև կենդանի ուժի և սպառազինության տարանցման համար: ԻՊ-ի գրանցած հաջողության ունեները լրջագույն վտանգի տակ դրեցին Բաշար Ալ Ասադի իշխանությանը՝ երկիրը կանգնեցնելով մասնատման վտանգի առջև: Պատերազմում բեկում մտավ, երբ Սիրիայի կառավարությանը պաշտոնապես օգնության խնդրանքով 2015թ. սեպտեմբերին դիմեց Ռուսաստանի Դաշնությանը, իսկ նույն տարվա հոկտեմբերից մինչև 2016թ. մարտ ամիսները ՌԴ ՉՈւ օդատիեզերական ուժերի կողմից Սիրիայում անցկացված օպերացիայի արդյունքում ԻՊ խմբավորումները բավականին լուրջ կորուստներ կրեցին կենդանի ուժի, ենթակառուցվածքների և ռազմական տեխնիկայի առումով¹⁴²: Ռուսաստանի՝ Սիրիա մուտք գործելը հնարավորություն տվեց սիրիական բանակին կարճատև դադար վերցնելու՝ ուժերի վերախմբավորման և հակազորոհի անցնելու համար: Արդյունքում սիրիական կառավարական ուժերին հաջողվեց ահաբեկիչներից հետ գրավել մի շարք ռազմավարական շրջաններ՝ լուրջ կորուստներ պատճառելով վերջիններին:

Անդրադառնալով Սիրիական ճգնաժամին՝ չի կարելի չհիշատակել փաստացի հայ համայնքի կորուստը այդ երկրում: Մինչև պատերազմի սկսելը Սիրիայի հայ համայնքը համարվում էր Մերձավոր Արևելքի ազդեցիկ համայնքներից մեկը, որն ուներ ավելի քան 80.000 ներկայացուցիչ: Պատերազմի հետևանքով վերջին տարիներին Չայաստանում Սիրիայից ապաստանել են շուրջ 17.000 հայրենակիցներ¹⁴³:

Ավելին՝ Սիրիական ճգնաժամի հետևանքով ԵՄ երկրները կանգնել են նորագույն պատմության մեջ փախստականների ամենամեծ ներհոսքի

¹⁴² Шурьгин В., Сирия – эпицентр конфликта, <http://www.izborsk-club.ru/content/articles/7559/>

¹⁴³ 17.000 սիրիահայեր ապաստան են գտել Չայաստանում. ինչպե՞ս օգնել նրանց (հարցազրույց Արմենիա» ՏՎԳ-ն ներկայացնում է բացառիկ հարցազրույց «ՀԱԼԷՊ» ՀԲՀԿ հիմնադիր նախագահ Անի Բալխյանի հետ), <http://armedia.am/arm/news/31724/17000-siriahayer-apastan-en-gtel-hayastanum-inchpes-ognel-nranc-harcazruyc.html>

խնդրի առջև: Արդեն իսկ միայն Գերմանիայի տարածքում են գտնվում 1 միլիոնից ավելի փախստականներ¹⁴⁴, ինչը հանգեցրել է ոչ միայն լուրջ ֆինանսատնտեսական և քաղաքական հակասությունների եմանդամ երկրների միջև, այլև ազգայնական ծայրահեղականության դրսևորումների եմ առանցքային երկրներում, օրինակ՝ Գերմանիայում, Ֆրանսիայում: Ընդ որում, որպես փախստականների ներհոսքի հիմնական տարանցման ուղի կրկին հանդես է գալիս Թուրքիան:

Արևմուտքը՝ ի դեմս ԱՄՆ-ի, և Ռուսաստանը Սիրիայում ունեն տրամագծորեն հակառակ հետաքրքրություններ և շահեր: Մասնավորապես, Արևմուտքը Ռուսաստանին մեղադրում է սիրիական ընդդիմության ուժերին հարվածելու և Ասադին ամբողջությամբ սատարելու մեջ, ինչին ի պատասխան Ռուսաստանը հայտարարում է, որ Սիրիայում է գտնվում երկրի լեգիտիմ իշխանությունների խնդրանքով և պայքարում է միայն ահաբեկչական խմբավորումների դեմ: Այնուամենայնիվ երկու կողմերն էլ հստակորեն գիտակցում են, որ առանց փոխհամաձայնության և համակարգված գործողությունների՝ հնարավոր չէ լուծել առկա ճգնաժամը: Ժնևում տեղի ունեցող պարբերական բանակցային գործընթացը, հրադարարի ռեժիմի փոխհամաձայնեցումը և պահպանումը, ՌԴ ուժերի մասնակի դուրսբերումը և Արևմուտքի արձագանքը վկայում են, որ ակնհայտորեն տեղի է ունենում տեսակետների մերձեցում:

Սիրիական և Ուկրաինական ճգնաժամերով պայմանավորված Արևմուտք-ՌԴ դիմակայության նոր փուլը ստիպել է կողմերին կոշտացնել միմյանց նկատմամբ կիրառվող հռետորաբանությունը: Ընդ որում, դիմակայության շրջանակներում կարևոր հանգամանք է շարունակում մնալ մեծամասամբ Լեհաստանի և Մերձբալթյան երկրների մտավախությունը՝ իրենց տեսակետից Ռուսաստանի «զավթողամոլական» քաղաքականության հաջորդ գոհերը դառնալու հեռանկարի կապակցությամբ:

Եթե 2014թ. ՆԱՏՕ-ից շարունակաբար հնչեցվում էին անթաքույց կոշտ հայտարարություններ և գնահատականներ Ռուսաստանի կողմից

¹⁴⁴ Միգրացիոն ճգնաժամը բևեռացնում է եվրոպական հասարակությանը, 25.03.2016թ., <http://galatv.am/hy/news/142883/>

Ղրիմի միացման և Դոնբասի տարածաշրջանում անմիջական ռազմական միջամտության վերաբերյալ, ապա 2015-2016թթ. Դաշինքի կողմից հնչող սուր հռետորաբանությունը զգալիորեն նվազեց: Ավելին, արևմտյան միջառք հեղինակավոր վերլուծաբաններ սկսեցին ընդունել, որ Ղրիմի հարցը կարելի է փակված համարել: Այնուամենայնիվ, ՅՆՍԻՍԻ-ն անստիճանական Դաշինքը չսահմանափակվեց և ոչ հայտարարություններով, այլ բազմապատկեց տարատեսակ գորավարժությունների ու գորախաղերի անցկացումը Ռուսաստանի սահմանների երկայնքով: Մասնավորապես, կտրուկ ավելացվեց ամերիկյան զինծառայողների քանակը մերձբալթյան հանրապետություններում, իսկ սևծովյան ավազանում Դաշինքի համատեղ ուժերի կողմից խաղարկվող ռազմական գործողությունների տարատեսակ սցենարներն արդեն կրում են պարբերական բնույթ¹⁴⁵:

Այսպիսով, կարելի է փաստել, որ ՆԱՏՕ-ի ջանքերը շարունակում են կենտրոնանալ կազմակերպության անդամների և անդամակցության նկրտումներով գործընկերների պաշտպանության վրա՝ երկրորդ անգամ մղելով խաղաղության աջակցության գործողությունները՝ առնվազն եվրանոս անստիճանական և հարակից տարածաշրջաններում:

Պետք է նշել, որ Ռուսաստանը նույնպես շարունակում է ուժի ցուցադրման քաղաքականության իրագործումը: Մասնավորապես, ակտիվացրել է իր ռազմավարական ավիացիայի թռիչքները եվրանոս անստիճանական տարածաշրջանի երկնքում, իսկ արևմտյան, կենտրոնական և հարավային ռազմական օկրուգներում, ինչպես նաև ՅՆՍԻՍԻ-ին և Սևծովյան նավատորմերի մասնակցությամբ պարբերաբար անց են կացվում այսպես կոչված «Սևեֆ», այսինքն՝ հանկարծակի ու առանց նախազգուշացման գորավարժություններ:

Ներկայիս ռազմաքաղաքական դիմակայության մեջ իրենց ուրույն տեղն են գրավում Ռուսաստանի դեմ Արևմուտքի կողմից կիրառվող ֆինանսական և տնտեսական պատժամիջոցները, որոնք էական վնաս են հասցրել ՌԴ տնտեսությանը՝ ստիպելով վերջինիս լրջորեն վերանայել միջառք ուղորտների, այդ թվում՝ զինված ուժերի ֆինանսավորումը: Բացի Ռուսաստանից, Արևմուտքի կողմից

¹⁴⁵ ՆԱՏՕ-ի 6000-ոց նոր զորակազմ՝ Ռուսաստանին սահմանակից 6 երկրներում, 10.02.2016թ., <http://galatv.am/hy/inozlmn/6000-6/>

սահմանված պատժամիջոցները շարունակում են զգալի բացասական ազդեցությունն թողնել նաև ամբողջ եվրասիական տնտեսական տարածության վրա¹⁴⁶, որի մասն է կազմում Հայաստանը: Իրավիճակը բարդացնում է նաև նավթի համաշխարհային գների անկումը: Ավելին՝ ներկայումս ավելի շատ է խոսվում նավթային դարաշրջանի մոտալուծ ավարտի մասին, որին փոխարինման է գալիս տեղեկատվական տեխնոլոգիաների և նորարարական մոտեցումների վրա հիմնված տնտեսական մոդելը: Կարելի է հետևություն անել, որ հենց սա է պատճառը, որ վերոնշյալ գործընթացը լրջորեն հարվածել է նավթագազային աղբյուրից օգտվող երկրներին (ՌԴ, Սաուդյան Արաբիա, Քուվեյթ, Վենեսուելա, Ադրբեջան), որոնք արդեն իսկ փորձում են ելքեր գտնել ստեղծված ծանր իրավիճակից:

Ինչ վերաբերում է ԱՄՆ-ի որդեգրած գործելաոճին, ապա եթե ուկրաինական ճգնաժամի սկզբնական փուլում նասահմանափակվում էր միայն ՌԴ նկատմամբ պատժամիջոցների կիրառմամբ և Ռուսաստանի «հավակնոտությանը» դիմագրավելու պատրաստակամության մասին հայտարարություններով, ապա սիրիական ճգնաժամի ընթացքում կոշտացրեց իր դիրքորոշումը՝ ավելի ակտիվ գործելով Ռուսաստանի դեմ իրականացվող գլոբալ դիմակայության շրջանակներում:

Այնուամենայնիվ, խոսելով Ռուսաստան-Արևմուտք դիմակայության մասին, որքան էլ կողմերը միմյանց մեղադրեն Սառը պատերազմի ժամանակաշրջանի գործելաոճի մեջ, դրանք հեռու են Սառը պատերազմի ժամանակաշրջանի բնորոշ տարրերից: Սակայն կարող ենք փաստել, որ Ռուսաստանն իր գործողություններով շարունակում է լուրջ փոփոխություններ մտցնել ԱՄՆ-ի և իր հանգուցային դաշնակիցների ռազմավարական հաշվարկներում: Նշված իրադրությունների ու փաստերի համադրումը հնարավորություն է տալիս եզրահանգելու, որ ՀՀ ռազմավարական դաշնակցի ու կարևորագույն գործընկերոջ միջև ստեղծված հակամարտությունը ունի կողմերից որևէ մեկի անվիճելի առավելություն ավարտվելու լուրջ հեռանկարներ:

¹⁴⁶ Լրացուցիչ տես Աнтивоенные санкции — ограничительные меры со стороны ЕС, США и стран-сателлитов Запада, направленные против России и её граждан, http://ruxpert.ru/Антивоенные_санкции

Ստեղծված պայմաններում բարդացել է Հայաստանի արտաքին ու ռազմական քաղաքականության հավասարակշռումն ու ժայիսն այս երկու կենտրոնների միջև: Սակայն, այս մարտահրավերը իր հետքերել է նաև երկու ազդեցության կենտրոնների տեսանկյունից Հայաստանի նշանակության բարձրացման և այդպիսով՝ անվտանգության շահերն առաջ մղելու բարենպաստ հնարավորություն, որն անկասկած պետք է օգտագործվի ՀՀ ռազմաքաղաքական դեկավարության կողմից:

Միջազգային ու տարածաշրջանային վերոնշյալ ռազմաքաղաքական զարգացումների և Հայաստանի անվտանգության միջավայրի վրա դրանց ազդեցությունը գնահատելու, ինչպես նաև դիտարկվող սպառնալիքներն ու մարտահրավերները ըմբռնելու, դիմագրավման մտահղացում մշակելու և գործի դնելու նպատակով մշակվեց ու շարունակում է իրականացվել պաշտպանության ռազմավարական վերանայման գործընթացը: Դրա առանձին փուլերի ընթացքում գնահատվեցին անվտանգության միջավայրն ու առկա սպառնալիքները, իրագործվեցին զինված ուժերի զարգացմանը վերաբերող մի շարք հայեցակարգային-ռազմավարական մակարդակի ծրագրային միջոցառումներ, որոնք համախմբված տարբերակով գնահատելի է որպես «զինված դիմակայությունը զսպելու» նոր հայեցակարգ՝ արտացոլելով պաշտպանության նախարարության մոտեցումները տարածաշրջանում ռազմաքաղաքական իրավիճակի և երկրի անվտանգության ապահովմանն ուղղված գործառնությունների կատարման նկատմամբ¹⁴⁷: ՀՀ պաշտպանական բարեփոխումների շրջանակներում Պաշտպանության ռազմավարական վերանայման գործընթացի իրականացման վերլուծությանը ավելի մանրամասն կներկայացնենք հանջորդ ենթազվիտում:

Հայաստանի արտաքին ռազմաքաղաքական միջավայրի փոփոխությունների ու դրանց ազդեցությամբ պաշտպանական բարեփոխումների շրջանակներում հասունացող հարցերի վերլուծության համատեքստում հարկ ենք համարում համառոտ անդրադառնալ նաև Հարավկովկասյան տարածաշրջանի անվտանգային,

¹⁴⁷ ՀՀ Նախագահ Ս.Սարգսյանի հանդիպումը ՀՀ պաշտպանության նախարարության վարչական համալիրում՝ կապված ՀՀ ՁՈւ դեկավար կազմի օպերատիվ հավաքների մեկնարկի հետ, 21.03.2016թ., <http://www.mil.am/hy/news/3924>

հատկապես ռազմական անվտանգության սպառնալիքների ու վտանգերի վերլուծությանն ու գնահատմանը, ինչը էականորեն պայմանավորում է նաև ՀՀ արտաքին ռազմական քաղաքականության բևեռների ու գործելակերպի հնարավոր փոփոխությունները:

Այսպես, նախևառաջ, վերջին տարիները նշանավորվեցին Իրանի Իսլամական Հանրապետության և Արևմուտքի միջև հարաբերությունների բարելավմամբ և միջազգային պատժամիջոցների մեծ մասի չեղարկմամբ: Պատժամիջոցների վերացումից հետո Իրանն արագորեն ձեռնամուխ եղավ տնտեսական ոլորտում կորսված դիրքերը հետ բերելուն: Իրանը Արևմուտքի կողմից դիտարկվում է որպես դեպի Եվրոպա էներգակիրների մատակարարման այլընտրանքային աղբյուր: Մերձավոր Արևելքում և, մասնավորապես՝ Իսլամական պետության դեմ պայքարում նույնպես ԱՄՆ-ի և Իրանի շահերը որոշակիորեն համընկնում են և դա է պատճառը, որ ԱՄՆ-ն չի հակազդում Իրանի բացահայտ և ակտիվ ներգրավվածությանն այդ հարցում: Այս ամենը վկայում է, որ մոտ ապագայում Մերձավոր Արևելքում գնալով աճելու է Իրանի դերն ու ազդեցությունը, նաև Հարավային Կովկասում: Տարածաշրջանում ԱՄՆ-ի առանցքային դաշնակից Իսրայելը՝ չկարողանալով տապալել ԱՄՆ-Իրան մերձեցումը, ամեն կերպ փորձում է վարկաբեկել Իրանի հետ համաձայնությունը՝ վերջինս ներկայացնելով որպես Արևմուտքի վարած քաղաքականության ամենավտանգավոր արկածախնդրություն:

Միանշանակ, Արևմուտքի հետ Իրանի հարաբերությունների կարգավորումը բխում է ՀՀ ազգային անվտանգության շահերից: Առհասարակ, Իրանի հետ հարաբերությունները, անկախ այդ երկրում գոյություն ունեցող վարչակարգից և իշխանության ձևերից, պայմանավորված են Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող մի շարք գործոններով՝ փոխադարձ տնտեսական շահերով, երկուստեք աշխարհաքաղաքական դիրքի առանձնահատկություններով, Իրանի տարածաշրջանային հեղինակությամբ, տարածաշրջանային մի շարք խնդիրների նկատմամբ ընդհանուր մոտեցումներով և պատմամշակութային ընդհանրություններով:

Աշխարհաքաղաքական առումով Իրանը Հարավային Կովկասում օբյեկտիվորեն իրականացնում է թուրքական էքսպանսիան զսպող քաղաքականություն և կառուցողական հավասարակշռված մոտեցում ունի Արցախյան հիմնահարցի նկատմամբ¹⁴⁸։ Իրանի տարածաշրջանային շահերին հակասում է թուրք-ադրբեջանական դաշինքի ձևավորումը, որը նպատակ ունի թուլացնել Իրանի դերը Հարավային Կովկասում և Մեծ Միջին Արևելքում։ Իրանի համար, աշխարհաքաղաքական այս խճանկարում, Հայաստանը տարածաշրջանում դիտարկվում է որպես վստահելի ու կանխատեսելի գործընկեր։

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Իրանի նկատմամբ միջազգային պատժամիջոցների վերացման գործընթացն արդեն սկսված է, Հայաստանը պետք է առավել ակտիվ աշխատի այդ երկրի հետ հարաբերությունները մի շարք բնագավառներում, այդ թվում նաև ռազմական ոլորտում, զարգացնել ու համար։

Ինչ վերաբերվում է Թուրքիայի տարածաշրջանային դերին, ապա վերջին տարիներին ռուս-թուրքական փոխհարաբերությունների անընդհատ ջերմացումն ընդհատվեց Թուրքիայի կողմից ռուսական ռազմական ինքնաթիռի խոցումից հետո¹⁴⁹։ Կարելի է փաստել, որ ԽՍՀՄ փլուզումից հետո երկու երկրների հարաբերությունների սրման պատճառը Ռուսաստանի ակտիվացումն էր Սիրիայում և ողջ Մերձավոր Արևելքի տարածաշրջանում, որը բնականաբար հակասում էր Թուրքիայի ազգային շահերին, և ինքնաթիռի խոցումը միայն պատրվակ էր։ Ռուսաստանի կոշտ արձագանքից հետո Թուրքիան դիմեց ՆԱՏՕ-ին՝ ստուգելու Դաշինքի տրամադրությունները¹⁵⁰։ Հյուսիսատլանտյան Դաշինքը հատուկ հայտարարությամբ սատարեց իր դաշնակցին, որով ըստ էության ցույց տվեց, որ չնայած առկա անհամաձայնություններին՝ Դաշինքը կանգնած է իր անդամի կողքին։ Այստեղ հարկ է ընդգծել, որ նման մոտեցումը պետք է ուսանելի լինի

¹⁴⁸ ՀՀ արտաքին անվտանգության ռազմավարության արտաքին անվտանգության ապահովման տարածաշրջանային երկկողմ ձևաչափը, ՀՀ նախագահի հրամանագիրը «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին», ՀՀ ՊՏ 2007.02.15/11, 07.02.2007

¹⁴⁹ Турция сбита российский военный самолет. Как это было, 24.11.2015, http://medialeaks.ru/features/2411yut_su

¹⁵⁰ Պողոսյան Թ., Թուրքիային պետք էր «խառնել քարտերը, որտեղ Արևմուտք-Ռուսաստան հարաբերությունները մերձենում էին», 25.11.2015թ., <http://www.azatutyun.am/content/article/27385731.html>

նաև ՀԱՊԿ-ի պարագայում, որտեղ բավականին թույլ է դառնակցային ոգին ու միմյանց սատարելու պատրաստակամությունը:

Ներքին կյանքում թուրքիայի իշխանությունների ուշադրությունը շարունակում է սևեռված մնալ աշխարհիկ և կրոնական թևերի միջև առկա հակասություններին: Թուրքական իշխանական վերնախավի մտավախությունները, որ քրդական գինյալ պայքարը միջնաժամկետ հեռանկարում կրկին կարող է գլուխ բարձրացնել, գործնականում որոշակիորեն իրականանում են, որոնց ապացույցն են վերջին շրջանում միմյանց հաջորդող ծավալուն ահաբեկչական գործողությունները: Թուրքիան հստակորեն գիտակցում է, որ քրդերի հաջողությունները Իսլամական Պետության դեմ ճակատում անխուսափելիորեն բերելու են վերջիններիս էլ ավելի ակտիվացմանը թուրքիայի տարածքում, ինչը կարող է վերածվել լայնածավալ գինված հակամարտության ու համաքրդական ապստամբության:

Ընդհանուր առմամբ, վերջին տարիներին Միջին Արևելքում ընթացող զարգացումները հստակորեն ցույց են տալիս, որ քրդական անկախ պետության ստեղծումն արդեն ժամանակի հարց է¹⁵¹: Այս հանգամանքը բնականաբար չի կարող անտարբեր թողնել թուրքիային¹⁵²: Պատահական չէ, որ ամերիկյան, ռուսական ու իսրայելական հատուկ ծառայությունները սկսել կամ վերսկսել են ակտիվորեն աշխատել տարատեսակ քրդական խմբավորումների հետ: Ընդհանուր առմամբ, թե Արևմուտքը, և թե Ռուսաստանը բավականին հմտորեն խաղարկում են քրդական գործոնը՝ Անկարայի վրա ճնշումներ բանեցնելու համար: Հատկանշական է, որ մոտ ապագայում քրդական հարցը մնալու է տարածաշրջանային քաղաքականության օրակարգի կարևորագույն բաղադրիչներից մեկը: Հայտնի պատճառներով Հայաստանը նույնպես պետք է ուշադրություն ամբ հետևի այս հարցի հետ կապված բոլոր զարգացումներին:

¹⁵¹ Բարգանի Մասունդ, «Եկել է քրդական անկախ պետությունն ստեղծելու ժամանակը», 23.01.2016թ., <http://www.ankakh.com/article/31990/masud-barzani/yekyel-e-qrdakan-ankakh-pyetuthyun-styeghtsyelu-jamanake/>

¹⁵² Լրացուցիչ տես Հովսեփյան Լ., Թուրքիայի՝ քրդական հիմնախնդրի կարգավորման նոր «մաստեր պլանը», 05.02.2016թ., <http://www.aysor.am/am/news/2016/02/05/Lևոն-Հովսեփյան/1046147>

Թուրքիայի կողմից բավականին ագրեսիվ և հակասական արտաքին և ներքին քաղաքականությունը լուրջ դժգոհություններ է առաջացնում նաև Վաշինգտոնում: Ամերիկա-թուրքական հարաբերություններում առկա են լուրջ հակասություններ՝ պայմանավորված թուրքական քաղաքականությամբ Մերձավոր Արևելքի, Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի նկատմամբ: Ակնհայտ է, որ ԱՄՆ-ի դիրքորոշումը իր կարևորագույն դաշնակիցներից մեկի նկատմամբ ենթարկվել է փոփոխության: Իր հերթին Թուրքիան նույնպես սուր քննադատության է ենթարկում Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի վարած քաղաքականությունը՝ վերջինիս մեղադրելով քաղաքական ուղեգծի անհետևողականության և քուրդ անջատողականներին աջակցելու մեջ:

Սակայն պետք է նշել, որ ինչպես Թուրքիայի համար ՆԱՏՕ-ն ունի բավականին լուրջ անվտանգային պատվարի նշանակություն (հաշվի առնելով նաև ռուս-թուրքական հարաբերությունների վերջին զարգացումները), այնպես էլ ՆԱՏՕ-ի և, մասնավորապես՝ ԱՄՆ-ի համար Թուրքիան դեռևս տարածաշրջանում կարևորագույն դաշնակից է, որը շարունակում է իրականացնել Դաշինքի հարավային դեսպանի դեր¹⁵³: Թուրքիայի ՆԱՏՕ-ից դուրս գալը լրջագույն ազդեցություն կթողնի նաև Դաշինքի քաղաքականության և ընդհանուր մոտեցումների վրա, որն անխուսափելիորեն կբերի վերջիններիս փոփոխության: Թուրքիան շարունակում է հստակորեն գիտակցել, որ ներկայիս ռազմաքաղաքական բարդ իրավիճակում առանց ՆԱՏՕ-ի նման թիկունքի, տարածաշրջանում բախվելու է Ռուսաստանի և Իրանի տարատեսակ շահերին, ինչը կարող է լուրջ հարված հասցնել Թուրքիային՝ սպառնալով վերջինիս տարածքային ամբողջականությանը:

Անդրադառնալով Վրաստանին, պետք է նշել, որ այդ երկիրը կարևորվում է որպես տարածաշրջանում Հայաստանի հետ բարձր մակարդակի հարաբերություններ ունեցող պետություն, և տարբեր ոլորտներում համագործակցության զարգացումը բխում է երկուստեք ռազմավարական շահերից:

¹⁵³ Թուրքիան մեծ կարևորություն է ներկայացնում ԱՄՆ-ի համար, 26.01.2016թ., <http://armedia.am/arm/news/29142/turqian-mets-karevorutyun-e-nerkayacnum-amn-i-hamar.html>

Տարածաշրջանային անվտանգության համատեքստում, Հայաստանի համար խիստ կարևոր է Վրաստանի հետ կառուցողական հարաբերությունների պահպանումը: Վրացիները, գտնվելով շահեկան դիրքերում, հաճախ վարում են ՀՀ շահերի «անտեսման» քաղաքականություն՝ հստակ համագործակցության ծրագրեր ունենալով ադրբեջանա-թուրքական տանդեմի հետ: Ձգտելով թուլացնել հայկական գործունը Վրաստանում՝ այդ երկիրը գնալով ավելի է հայտնվում թուրքական ազդող ճնշման տակ՝ շատ անգամների գործում չլինելով հակազդել նման գործընթացներին: Ուստի ՀՀ ռազմական անվտանգության երաշխավորման համար խիստ անհրաժեշտ է նաև հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունների օրակարգում ներառել ու քննարկման առարկա դարձնել Վրաստանի հետ բարդիրացիական կապերի, ներառյալ ռազմաքաղաքական հարցերի, հետևողական զարգացումն ու ամրապնդումը:

Նախորդող տարիներին Վրաստանը շարունակեց Եվրախնտեգրման գործընթացը, Եվրամիության հետ ստորագրեց Ասոցիացման Համաձայնագիրը¹⁵⁴ և համաձայնությունն ստացավ սկսելու Շենգենյան գոտու երկրների իր քաղաքացիների համար առանց վիզաների ռեժիմի հաստատմանն ուղղված քայլերը: Գլոբալ առումով, պաշտոնական թիվ իսին Արևելքի և Արևմուտքի միջև իրականացնում է բավականին հավասարակշռված քաղաքականություն: Ռուսաստանն իր հերթին Վրաստանի հետ վարում է նախկին կապերի վերականգնմանն ուղղված քաղաքականություն: Վրաստանը նաև բավականին զուսպ է գործում ու կրահնական ճգնաժամի արդյունքում առաջ եկած Արևմուտք-ՌԴ հակասությունների ֆոնին: Վրաստանը շարունակում է Եվրամիությանն ու ՆԱՏՕ-ին անդամագրվելու իր քաղաքականությունը, միաժամանակ ունենալով իր այս ուղեգիծը խաթարելու հարցում Ռուսաստանին ևս մեկ պատրվակ չտալու նպատակ: Ինչպես և նախկինում, Եվրանտլանտյան համայնքը Վրաստանին շարունակում է դիտարկել որպես Հարավային Կովկասում իր արժեհամակարգի կրման «առաջամարտիկ»: Չնայած ՆԱՏՕ-ին Վրաստանի արագացված անդամագրումը թվում է քիչ հավանական,

¹⁵⁴ Ուկրաինան, Վրաստանն ու Մոլդովան ստորագրել են ասոցացման մասին համաձայնագիրը Եվրամիության հետ, 27.06.2014թ., <http://www.panarmenian.net/arm/news/180268/>

այնուամենայնիվ Վրաստանը դանդաղ, բայց հետևողական կերպով շարժվում է այդ ուղղությամբ:

Ադրբեջանի մասով ՀՀ անվտանգային միջավայրին ու ռազմաքաղաքական իրավիճակին անդրադառնալ ու ցառաջ հարկ է հակիրճ ընդգծել, որ յուրաքանչյուր պետությունն որպեսզի կարողանա ապահովել երկրի ռազմական անվտանգությունը, պետք է սպառնալիքներկայացնող երկրի նկատմամբ ստեղծի ռազմական հզորության հավասարակշռություն: Ռազմական ծրագրեր մշակելիս ելակետային է այն սկզբունքը, որ զինված ուժերի հզորության նվազագույն չափը պետք է ապահովի հավասարակշռությունը հավանական հակառակորդի հզորության նկատմամբ: Եթե այդ հավասարակշռությունը խախտվում է հոգուտ հակառակորդի, ապա թե՛ մարտավարական, թե՛ ռազմավարական առումով առաջադրված խնդիրներին հասնելու հարցը դառնում է անլուծելի:

«Ռազմական հզորության հավասարակշռություն» հասկացության մեջ կարելի է ներառել հետևյալ տարրերը.

- քանակական տարրը՝ զենքի, մարտական տեխնիկայի, զինված ուժերի անձնակազմի քանակը,

- տեխնոլոգիական տարրը՝ զենքի ու մարտական տեխնիկայի որակական հատկանիշները,

- «մարդկային գործոնը»՝ մարտական գործողություններ ալանավորելու, որոշումներ ընդունելու հրամանատարության կարողությունը, կառավարման համակարգը, անձնակազմի մարտական պատրաստվածության որակը, զինծառայողների բարոյահոգեբանական վիճակը,

- ժողովրդագրական և տնտեսական տարրերը՝ երկրի ազգային կազմը, մարդկային պաշարները, տնտեսական կարողություններն ու պաշարները:¹⁵⁵

Այս տարրերն էլ հիմնականում որոշում են զինված ուժերի մարտական կարողություններն ու դերակատարությունը ռազմական անվտանգության ապահովման համակարգում: Դրանք համեմատելով

¹⁵⁵ Кудашкин А.В., Проблемы законности применения Вооруженных Сил Российской Федерации в современных условиях // Российский военно-правовой сборник 14: проблемы укрепления законности в военной организации государства, М., 2010, стр. 27-28

հավանական հակառակորդի համապատասխան ցուցանիշների հետ՝ ստանում ենք երկու երկրների ռազմական կարողությունների հարաբերակցությունը: Սակայն, առանձին դեպքերում ռազմատնտեսական ցուցանիշների պարզ համեմատությունը չի բացահայտում ուժերի իրական հարաբերակցությունը: Դրա դասական օրինակ կարող է ծառայել Արցախյան հերոսամարտը, երբ մարդկային ու նյութական պաշարներով բազմակի անգամ գերազանցող, արտաքին զգալի ռազմական աջակցություն ստացող երկիրը, «մարդկային գործոնի» սխալ կիրառման արդյունքում, ջախջախիչ պարտություն է կրում լիակատար շրջափակման և տնտեսական կատվածահար վիճակում գտնվող փոքր հանրապետությունից:

Ադրբեջանի մասին վերլուծություն կատարելիս, պետք է նշել, որ թեև Թուրքիայի և Իսրայելի օրհնությունամբ Ադրբեջանը շարունակում է համաշխարհային ուժային կենտրոնների նկատմամբ վարվող «հավասարակշռված» արտաքին քաղաքականությունը, սակայն արդեն ներկայիս համաշխարհային և տարածաշրջանային զարգացումները ստիպում են այդ երկրին կողմնորոշվել ու արտաքին քաղաքական առաջնահերթությունների հարցում: Արևմտյան հանրությունը շարունակում է աչք փակել Ադրբեջանի կողմից ԼՂ հակամարտության գոտում հրահրվող սադրանքների վրա, սակայն սաստկացրել է քննադատությունը երկրում մարդու իրավունքների կոպտագույն խախտումների հարցում:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցում Ադրբեջանը շարունակում է ապավինել «ուժի ցուցադրման» քաղաքականության և հնարավոր ուժային հանգուցալուծման հնարավորությանը: 1994թ. հրադարարի կնքումից ի վեր առաջին անգամ Ադրբեջանը շփման գոտում սկսել է կիրառել ծանր հրետանի և տանկեր¹⁵⁶: Նմանատիպ գործել առճը անկասկած լուրջ վտանգի տակ է դնում բանակցային գործընթացը և կարող է անդառնալի հետևանքներ ունենալ ողջ տարածաշրջանի անվտանգության համար:

Նավթի համաշխարհային գների կտրուկ անկումը արդեն իսկ ստիպել է Ադրբեջանին լրջորեն վերանայել մի շարք լայնամասշտաբ

¹⁵⁶ ԼՂՀ ՊԲ հրամանատար Մնացականյան Լ., Ադրբեջանն իրավիճակը տանում է դեպի պատերազմ, 21.12.2015թ., <http://www.verelq.am/hy/node/5292>

ծրագրերի հետ կապված բյուջետային ծախսերը, այդ թվում նաև սպառազինության ու ռազմական տեխնիկայի ձեռքբերումների ոլորտում: 2015-2016թթ. ընդհանուր ռազմական ու ռազմարդյունաբերական ծախսերը կրճատվել են մոտ 40 տոկոսով¹⁵⁷:

Այս ամենով հանդերձ, Հայաստանի ռազմաքաղաքական դեկլարությունը չպետք է թերագնահատի միջնաժամկետ հեռանկարում քանակը որակի վերածելու հակառակորդի ջանքերը: Այս ուղղությամբ Ադրբեջանը մի շարք երկրների կողմից ստանում է թե խորհրդատվական և թե ռազմատեխնիկական աջակցություն: Չպետք է նաև մոռանալ, որ Ռուսաստանը ռազմատեխնիկական համագործակցության ծավալներով եղել և շարունակում է մնալ Ադրբեջանի թիվ մեկ գործընկերը:

Հայաստանի համար որպես մտահոգության հիմնական աղբյուր, լրջագույն սպառնալիք է շարունակում մնալ նաև Թուրքիա-Ադրբեջան ռազմավարական դաշինքը¹⁵⁸: ԱՄՆ-ն և Եվրամիությունը շարունակում են հայ-թուրքական հարաբերությունները կարգավորելու հարցում Թուրքիային հղել քաղաքական ազդակներ, սակայն Թուրքիան նախկինի պես շարունակում է հարցի կարգավորումը կապել Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հետ:

Ինչպես արդեն նշվեց, Ղարաբաղյան խնդրի կարգավորման հեռանկարների առումով հատկապես վերջին շրջանում ոչ մի փոփոխություն տեղի չի ունեցել. Հայաստանը ստիպված է խիստ հակադարձել ադրբեջանական սադրանքներին և ագրեսիվ գործողություններին, ինչի հետևանքով հաջողվում է զսպել և կայունացնել իրավիճակը: Այս առումով մտահոգիչ է Արևմուտքի ու Ռուսաստանի հարաբերությունների սրումը, որն ի վերջո կարող է բացասաբար անդրադառնալ նաև Ղարաբաղյան հարցի կարգավորմանն ուղղված ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում իրականացվող գործընթացի վրա:

¹⁵⁷ Բարսեղյան Ա., Ադրբեջանի իշխանությունները կրճատում են ռազմական ծախսերը. Ադրբեջանը 2016թ. փետրվարին (ներքին իրավիճակ), <http://nt.am/am/news/218192/>

¹⁵⁸ Էվոյան Լ., «Ադրբեջանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջեվ ռազմավարական գործընկերության ու փոխադարձ օգնության մասին պայմանագիրը» թուրք-ադրբեջանական երկկողմ հարաբերությունների որակապես նոր փուլի սկիզբ, 19.05.2013թ., <http://akunq.net/am/?p=31181>

ՀՀ անվտանգության միջավայրի ու արտաքին ռազմաքաղաքական իրավիճակի գնահատման արդյունքում հնարավոր է առանձնացնել հետևյալ հիմնական (անմիջական ռազմական բնույթի) սպառնալիքները.

1. Ընթացիկ զինված դիմակայությանը հարևանի հետ, որն արտահայտվում է կայունացման մեխանիզմների և պարտավորեցնող զինադարձի բացակայությամբ, Ադրբեյջանի կողմից ՀՀ պետական սահմանին և ղարաբաղա-ադրբեյջանական գործերի շփման գծում սադրիչ գործողությունների անսանձ իրականացմամբ, այդ համատեքստում օգտագործվող հնարքների և զինատեսակների ընդարձակմամբ:

2. Չինված դիմակայության վերաճում լայնածավալ ռազմական գործողությունների, ինչը կարող է տեղի ունենալ և կանխամտածված, և ինքնաբուխ կերպով՝ տեղային մարտերի աստիճանական թեժացման միջոցով: Նման զարգացման ապացույց հանդիսացան 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմական գործողությունները:

Հայաստանի Հանրապետության առջև ծառացող տվյալ խնդիրների բարդությունն ու համազգային ծավալները պահանջում են պետական, ներառյալ արտաքին, քաղաքականության մասշտաբով իշխանության կառուցակարգի բոլոր մարմինների ջանքերի միավորում, գործողությունների համաձայնեցում ու հստակ համակարգում: Հակառակորդ պետության կողմից սպառազինությունների անվերահսկելի կուտակումները զգալիորեն խախտել են զինված դիմակայության ուժային հավասակշռությունը՝ քանակական առումով: Նման անվտանգային դիլեման լուծելու համար Հայաստանը պետք է ձեռնարկի որակական լուծումներ՝ հակառակ կողմի քանակական առավելությունը չեզոքացնելու համար:

Ռազմական անվտանգության երաշխավորման գործիքարանում կարևոր դեր է հատկացվում ռազմաքաղաքական դիվանագիտությանը, որի առաջնահերթ խնդիրն է ստեղծել արտաքին բարենպաստ պայմաններ առկա ռեսուրսներով երկրի պաշտպանությունն ապահովելու համար՝ ունենալով հնարավորին շատ դաշնակիցներ և քիչ հավանական հակառակորդներ¹⁵⁹: Հնարավոր ռազմական սպառնալիքներն ու վտանգները կանխելու գործում կարևոր նշանակություն է ստանում

¹⁵⁹ Фатеев К.В. Правовое регулирование обеспечения военной безопасности Российской Федерации. Дисс.докт. юрид наук. М., 2005, стр. 39-40

երկկողմանի և բազմակողմանի դաշնակցային փոխգործակցությանը: Ուստի, ՀՀ ռազմական քաղաքականության կարևոր խնդիրներից է երկրի շահերին համապատասխանող արտաքին միջավայրի ձևավորումը, ինչպես նաև միջազգային կայունության ևն ապահովող տարածաշրջանային ու ժերի հաշվեկշռի գնահատումը:

Տնտեսական հնարավորությունների սուղ պայմաններում, երբ անհնար է ստեղծել բոլոր սպառնալիքներին ու վտանգներին կատարյալ համարժեք ռազմական ներուժ, կարևոր է դառնում նաև հնարավորությունների այնպիսի հաշվեկշռի ստեղծումը, որն ի վիճակի կլինի բացառել կամ հետաձգել Հայաստանի դեմ ագրեսիայի սկսումը կամ ճնշումներ գործադրելը, ինչը ռազմաքաղաքական ոլորտի դիվանագիտության և համագործակցության առաջնային խնդիրն է: Ռազմական ուժը պետք է օգտագործվի միայն այն դեպքում, երբ ճգնաժամի լուծման բոլոր խաղաղ միջոցները սպառվել են: Բացի այդ, ուժի կիրառմանը ռազմական քաղաքականության գույքահեռ պետք է նախորդեն հանգամանալից քաղաքական, բարոյահոգեբանական և քարոզչական նախապատրաստական միջոցառումներ:

3.2. Պաշտպանության ռազմավարական վերանայումը որպես պաշտպանական բարեփոխումների հայեցակարգային բաղադրիչ

Արդեն քննարկվեց, որ Հարավային Կովկասի տարածաշրջանը աչքի է ընկնում սառեցված հակամարտության ու ներքին առկայության թեժանալ ու վերահաս սպառնալիքներով: Անվտանգության և կայունության համար խնդրահարույց է այն կարևոր հանգամանքը, որ տարածաշրջանի երկրները որդեգրել են տրամագծորեն տարբեր անվտանգության ու պաշտպանական ռազմավարություններ և դաշինքներին ու ուժային կենտրոններին հարել ու քաղաքականություններ: Տարածաշրջանային անվտանգությանը բոլորովին չի նպաստում նաև գլոբալ առումով շահագրգիռ պետությունների ու միջազգային կազմակերպությունների շահերի տարամիտումը:

ՀՀ ռազմական դոկտրինում որպես անվտանգության սպառնալիքների գնահատում նշվում է, որ ռազմական անվտանգության սպառնալիքները երկրի պաշտպանունակության վրա բացասաբար ազդող, նրա ինքնիշխան գոյության և կայուն զարգացման համար վտանգներ հարուցող պայմանների, գործոնների և գործողությունների համախումբ են և ունեն արտաքին ու ներքին բնույթ¹⁶⁰: Հայաստանի համար մտահոգության հիմնական աղբյուրը Թուրքիա-Ադրբեջան ռազմավարական դաշինքն է, որով անհանդուրժող և ոչ կառուցողական քաղաքականություն է իրականացվում Հայաստանի ազգային անվտանգության շահերի նկատմամբ: Թուրքիան անվերահսկելի ռազմական օժանդակություն է ցուցաբերում Ադրբեջանին՝ հատկապես նախնական ուղղությամբ, ինչն արտահայտվում է ոչ միայն սպառնալիքային ու ռազմական տեխնիկայի հատկացումներով, այլև համապատասխան հրահանգիչների և «կենդանի ուժի» քողարկված երկարաժամկետ տեղակայումներով: Ադրբեջանի կողմից դրսևորվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության նկատմամբ ամփիջական ռազմական սպառնալիք, որի ուղիղ վկայություններից են այդ երկրի գերռազմականացումը, վարվող հայատյաց քաղաքականությունը, ինչպես նաև հակամարտության բանակցային գործընթացում որդեգրած մերժողական դիրքորոշումը: Չնայած միջազգային հանրության և հատկապես ԵԱՀԿ Մինսկի խմբի շարունակական ջանքերին, Հայաստանի կառուցողական դիրքորոշմանը՝ Ադրբեջանը հակված է դեպի հակամարտության ուժային լուծման տարբերակը: Պատերազմ սկսելու Ադրբեջանի վճռականությունը տեսանելի է ոչ միայն քաղաքական հայտարարությունների, այլև ռազմական ուժորոշում գործնական քայլերի լույսի ներքո:

Ադրբեջանը ձեռք է բերում մեծ քանակի հարձակողական, հատկապես հեռահար խոցման սպառնալիքային, հարձակողական բնույթի են ադրբեջանական զինված ուժերի պատրաստության և կիրառման պլանները: Ուժերի շփման գծում դիվերսիոն-հետախուզական խմբերի գործողությունները կրում են դիտավորյալ

¹⁶⁰ ՀՀ նախագահի հրամանագիրը «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը հաստատելու մասին», ՀՀ ՊՏ 2008/1, 25.12.2007, 2-րդ կետ

ու պլանավորված բնույթ և նպատակ են հետապնդում շոշափել հայ կապան ուժերի պաշտպանության ամրությունը: Պակաս ուշագրավ չէ Ադրբեջանի կողմից վարվող տեղեկատվական պատերազմը, որի շրջանակներում պետական մակարդակով և բոլոր հարթակներում առաջ է մղվում հակահայ կապան քարոզչությունը՝ փաստերի խեղաթյուրմամբ հայ կապան կողմին ներկայացնելով որպես ագրեսիվ կողմ և տարածաշրջանային կայունության, համագործակցության ու զարգացման խոչընդոտ:

Ներկայումս Ադրբեջանի համար թերևս ամենաէական զսպող հանգամանքը հայ կապան գինված ուժերի մարտունակության աստիճանն է, որը թույլ է տալիս հակամարտող ուժերի շփման գծում ադրբեջանական կողմի բոլոր սադրանքներն արժանացնել համարժեք պատասխանի: ՀՀ գինված ուժերի ընթացիկ և հեռանկարային զարգացման պլաններն ուղղված են բանակի մարտական կարողությունների զգալի ավելացմանը, որի շնորհիվ վերջինս ցանկացած պահի պատրաստ է լինելու արժանի հակահարված տալ հակառակորդին:

Ռազմաքաղաքական գործունեությունն անմիջականորեն և ուղղակի կապված է պաշտպանական համակարգի նպատակներին հասնելու համար բոլոր անհրաժեշտ միջոցների նախապատրաստման ու կիրառման հետ: Տվյալ տեսակի գործունեության մեջ ռազմական բաղադրիչի առկայությունն այն բնութագրում է գինված միջոցների կիրառման տեսակետից, իսկ քաղաքական բնույթը բացահայտում է ռազմական քաղաքականության նպատակային ուղղությունը: Հայաստանի Հանրապետության ռազմական քաղաքականության ամբողջ համակարգը հիմնականում ձևավորվում, գործարկվում ու զարգացվում է պաշտպանական-անվտանգային համակարգում ազգային շահերին համապատասխանող դերակատարություն ունենալու նկատառումով:

Պաշտպանական կարողությունների հետևողական զարգացումը Հայաստանի տրամաբանված ընտրությունն է, որը բխում է պետության և ժողովրդի անվտանգության, ինչպես նաև խաղաղության պահպանման, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև խաղաղության պարտադրման նպատակներից: Պաշտպանական բարեփոխումների շրջանակում

հիմնական նպատակ է դրվել ունենալ մարտունակ, արդյունավետ և ժամանակակից զինված ուժեր: Նշյալ որակների ապահովումը թելադրված է տարածաշրջանում ռազմաքաղաքական իրավիճակի և արված ության մեղմացման միջոցառումներին հատկացվող ֆինանսական սահմանափակ ռեսուրսներն առավել արդյունավետ օգտագործելու անհրաժեշտությամբ: Տվյալ նպատակներին հասնելու համար Հայաստանի Հանրապետության ունեւում իրականացվում է մի գործընթաց, որը կոչվում է Պաշտպանության ռազմավարական վերանայում: Վերանայումն առաջին հերթին նպատակաւղղված է ազգային անվտանգությանը սպառնացող առկա և հավանական ռազմաքաղաքական ռիսկերի ու սպառնալիքների բացահայտմանը՝ հիմքում ունենալով անցյալի սխալները և ձևավորելով հեռանկարային նպատակները¹⁶¹:

Իսկզբանե այդ վերագնահատման գործընթացը կոչվեց Ռազմական անվտանգության համակարգի (պաշտպանության) ռազմավարական վերանայում, որի շրջանակներում առաջադրվեց հետևյալ հարցերին պատասխաններ գտնելու հիմնական նպատակը.

1) որն է Հայաստանի Հանրապետության անվտանգային միջավայրը ներկա և տեսանելի հեռանկարում (կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ),

2) որոնք են զինված ուժերի դերն ու պարտավորությունները Հայաստանի ազգային անվտանգության ապահովման գործում,

3) ինչ առաքելություններ պետք է կարողանան իրականացնել զինված ուժերը՝ իրենց նախանշված դերի ու պարտականությունների կատարման համար,

4) ինչ ռազմական կարողություններ և ռեսուրսներ են անհրաժեշտ այդ առաքելությունների իրականացման համար,

5) ինչ կարելի է կազմակերպել, ինչպես համալրել ու զինել զինված ուժերը՝ այդ ռազմական կարողությունները և իրաժեք ապահովելու համար¹⁶²:

¹⁶¹ ՀՀ պաշտպանության նախարար Ս.Օհանյանի ուղերձը ՀՀ պաշտպանության ռազմավարական վերանայման վերաբերյալ, <http://www.mil.am/media/2015/07/830.pdf>

¹⁶² Օհանյան Ս.Ս., Հայաստանի Հանրապետության պաշտպանական բարեփոխումները. երևոթող փուլ // ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվան ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2008, հ.մ. 2-3 (56-57), էջ 14

Վերանայ ու մը նախատեսում է ազգային պաշտպանական համակարգի և դրա բաղադրիչների մանրակրկիտ վերլուծության, որի նպատակը այդ համակարգի կարողությունների պարզումն է և դրանց համապատասխանեցումը բացահայտված ռիսկերի ու սպառնալիքների դիմակայմանը: Հիմնվելով վերլուծության արդյունքների վրա՝ Վերանայման գործընթացի շրջանակներում իրականացվում են ՀՀ զինված ուժերի զարգացմանը նպատակաուղղված որոշակի ուղեցույցների և ռազմավարական պլանների մշակման աշխատանքներ: Վերանայ ու մը նախատեսում է ինչպես կարճաժամկետ, այնպես էլ միջնաժամկետ զարգացում: Վերլուծության համատեքստում ուշադրության են արժանի նաև մասնագետների կողմից ներկայացվող առաջարկությունները, մասնավորապես այն, որ Վերանայման գործընթացում ռազմավարական վերլուծության և դրա հիման վրա արվող կանխատեսումներ կատարելիս արդյունավետ կլինի օգտագործել նորամուծական հետազոտական մեթոդներ («PESTLE» վերլուծությանը, «SWOT» և «DECISION TREES» մեթոդները)¹⁶³: «PESTLE» (political, economic, social, technological, environmental) մեթոդը հնարավորություն է տալիս դասակարգել ու պետության վրա ազդող ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործոնները: «SWOT» (strengths, weaknesses, opportunities, threats) մեթոդը թույլ է տալիս պետության ուժեղ և թույլ կողմերի, ինչպես նաև արտաքին միջավայրից բխող հնարավորությունների և սպառնալիքների ճկուն գնահատմամբ գտնել ու պետության առջև ծառացած խնդիրների լուծման տարբերակներ: «DECISION TREES» («Որոշումների ծառ») մեթոդի նպատակն է արդյունավետ քաղաքական ուղեգծի ընտրության ապահովումը, որի միջոցով վերլուծվում են այլընտանքային որոշումները: Մասնագետների կողմից Պաշտպանության ռազմավարական վերանայման մեթոդաբանության վերլուծության շրջանակներում ներկայացվում են նաև սցենարային պլանավորման, խաղերի տեսության և

¹⁶³ Զոթանջյան Յ.Ս., ՀՀ ռազմավարական պաշտպանական-անվտանգային գնահատումների և փաստաթղթերի մշակումը որպես Պաշտպանության ռազմավարական վերանայման տեսամեթոդաբանական և գիտափորձաքննական հիմք // ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվան ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2015, հմ. 3 (85), էջ 16

«կարմիրներին թիմակազմման» մեթոդների կիրարկման ու արդյունավետության վերաբերյալ գնահատականներ¹⁶⁴:

Փաստորեն, ՀՀ Պաշտպանության նազմավարական վերանայումը երկրի պաշտպանական համակարգի և դրա գործունեության նազմավարության վերանայմանն ուղղված միջոցառումների ամբողջությունն է, որի նպատակն է գնահատել երկրի պաշտպանական համակարգը առկա և երկարաժամկետ հեռանկարում ակնկալվող սպառնալիքներին և մարտահրավերներին դիմակայելու կարողությունների տեսակետից՝ այդ առումով բացահայտելով համակարգի համապատասխանելիությունը (նաև ոչ համապատասխանելիությունը): Այն նպատակաուղղված է բոլոր մակարդակներում քաղված դասերի վերլուծության և թերությունների շտկման միջոցով երկրի պաշտպանության հետևողական զարգացման ապահովմանը՝ երաշխավորելով հոսսալի պաշտպանության կարողությունը:

Հոսսալի պաշտպանական կարողությունը Հայաստանի անվտանգության միջավայրի իրատեսական գնահատմամբ առկա և հնարավոր սպառնալիքներին ու վտանգներին հակազդելու, դրանց չեզոքացմանն ուղղված նազմական գործողություններ վարելու գիտելիք ուժերի կարողությունների ամբողջությունն է¹⁶⁵: Որպես այդպիսին՝ Պաշտպանության նազմավարական վերանայումն հնարավորություն է տալիս մշակելու պաշտպանական համակարգի զարգացման և կատարելագործման հնարավորությունները: Տվյալ գործընթացի գնահատման արդյունքները հիմք են հանդիսանում պաշտպանության ոլորտի հեռանկարային զարգացման ծրագրերի մշակման, հետևաբար, պաշտպանական բարեփոխումների արդյունավետությունն ունենալու համար: Պաշտպանության նազմավարական վերանայումն իրականացվում է անվտանգության

¹⁶⁴ Պողոսյան Բ.Պ., Ավետիսյան Մ.Ա., Պաշտպանության նազմավարական վերանայման գործընթացում որոշ նորամուծական հետազոտական մեթոդների կիրառման մասին // ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվան ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» նազմագիտական հանդես, 2015, հմ. 3 (85), էջ 72-74

¹⁶⁵ ՀՀ նախագահի հրամանագիրը «Հայաստանի Հանրապետության նազմական դոկտրինը հաստատելու մասին», ՀՀ ՊՏ 2008/1, 25.12.2007, 18-րդ կետ

միջավայրի վերլուծության և սպառնալիքների կարճաժամկետ ու երկարաժամկետ ժամանակաշրջանների գնահատման միջոցով:

Պաշտպանության նազմավարական վերանայումը հնարավորություն է տալիս հնարավորինս ճշգրիտ, հիմնավորված և նպատակաուղղված իրականացնել սպառնալիքների չեզոքացման աշխատանքների պլանավորումը, համապատասխան կարողությունների ստեղծումը, զարգացումը և ֆինանսավորումը: Այն զգալիորեն բարձրացնում է պետության պաշտպանունակությունը, ապահովում է անհրաժեշտ ճկունություն տարբեր ճգնաժամային իրավիճակներին համարժեք արձագանքելու համար և նվազեցնում է անակնկալ ճգնաժամային իրադրությունների ստեղծման հավանականությունը: Պաշտպանության նազմավարական վերանայման իրականացումը նախատեսված է Հայաստանի նազմական դոկտրինով, ինչպես նաև ՀՀ-ՆԱՏՕ Անհատական գործընկերության գործողությունների ծրագրով: Պաշտպանական նազմավարական վերանայման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում նախաձեռնվել է և անցկացվում է սկսած 2008 թվականից¹⁶⁶:

Պաշտպանական պլանավորումը՝ թե՛ նազմավարական և թե՛ օպերատիվ բաղադրիչներով, ենթադրում է զգալի ռիսկեր՝ կապված նաև անորոշության հետ: Եվ որքան հեռու են դիտարկվում ապագայի կողմնորոշումները, փորձելով կանխագուշակել հակառակորդի քայլերը, այնքան մեծանում է վտանգը, որ գուցե ինչ-որ քայլ ճիշտ է հաշվարկվել, որից ելնելով էլ առաջին հայացքից հաղթական նազմավարությունը կարող է հանգեցնել նյութական կորուստների և պարտության: Այստեղ կարևոր է ոչ միայն գործողությունների, այլ նաև որոշումների կայացման արագությունը՝ տեմպը: Պետք է որոշումների կայացման գործընթացում մշտապես առաջ անցնել հակառակորդից՝ ստիպելով նրան արձագանքել, և ոչ թե՛ գործել:

Ռիսկը կարելի է բնութագրել որպես առկա սպառնալիքի և դրան դիմագրավելու համար անհրաժեշտ կարողությունների միջև անհամապատասխանություն: Ռիսկն անհնար է ի սպառ վերացնել, անհրաժեշտ է կարողանալ կառավարել այն: Ռիսկի կառավարման համար

¹⁶⁶ ՀՀ Պաշտպանության նազմավարական վերանայում, <http://www.mil.am/hy/68/230/266>

պետք է նախնառաջ պարզել, թե դրա իրականացման դեպքում ինչ պիսի իրավիճակ կստեղծվի: Պետք է նաև հասկանալ, թե այդ իրավիճակը ինչպիսի արդյունքներ կբերի, որից հետո գնահատել այդ ռիսկի առաջացման հավանականությունը, և վերջապես վերլուծել, թե այդ ռիսկը ինչպիսի հետևանքներ կունենա անվտանգության երաշխավորվածության մակարդակի վրա:

Վերանայման գործընթացում համակողմանիորեն հաշվի են առնվել զինված ուժերի զարգացմանը ներկայացվող ժամանակակից պահանջները, տարածաշրջանում անվտանգության միջազգային համակարգերի հետ (ՀԱԴԿ, ԵԱՀԿ, ՆԱՏՕ) համագործակցության գերակայությունները, ինչին մեծապես նպաստել են նաև Հայաստանի Հանրապետության գործընկեր երկրների աջակցությունն ու փորձագիտական օժանդակությունը¹⁶⁷: Այս համատեքստում պետք է ընդգծել, որ Պաշտպանության ռազմավարական վերանայման գործընթացում ՀՀ ՊՆ Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի (որը կերպափոխվել է Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի) կողմից տեսամեթոդաբանական և գիտակիրառական փորձի ներբեռնման լայնածավալ ու բազմաբովանդակ աշխատանքներ են տարվել ու շարունակվում են ներկայումս՝ նաև արտասահմանյան փորձառու մասնագետների ներուժի օգտագործմամբ: Այս ռազմավարական «կալիբրի» հաստատության կողմից կատարվել են Ադրբեյջանի (2007թ. և 2013թ.), Վրաստանի (2008թ. և 2014թ.), Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, ինչպես նաև Հայաստանի պաշտպանական-արդյունաբերական համալիրի և ռազմական կրթության համակարգի ռազմավարական վերագնահատումներ¹⁶⁸:

Որքան մանրակրկիտ ուսումնասիրվեն անվտանգության միջավայրը և այնտեղից բխող սպառնալիքները, այնքան հնարավոր կլինի ավելի կանխատեսել հակառակորդի ապագա քայլերը՝ ունակ լինելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության գործում

¹⁶⁷ ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի նախկին քարտուղար Ա.Բաղդասարյանի ուղերձը, <http://www.mil.am/media/2015/07/834.pdf>

¹⁶⁸ Քոթանջյան Հ.Ս., ՀՀ ռազմավարական պաշտպանական-անվտանգային գնահատումների և փաստաթղթերի մշակումը որպես Պաշտպանության ռազմավարական վերանայման տեսամեթոդաբանական և գիտափորձաքննական հիմք // ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվան ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2015, հմ. 3 (85), էջ 15

առկա ուժերին և միջոցներին հաղորդել սպառնալիքներին դիմագրավման և դրանց հետ կապված ռիսկերի նվազեցման համար անհրաժեշտ կեցվածք: Հայաստանի ֆինանսատնտեսական և ժողովրդագրական պայմանները, Լեռնային Ղարաբաղի հակամարտության՝ առկա դրության կամ Ստատուս քվոյի պահպանումը, այնպես էլ ռազմական գործողությունների վերսկսումը պետության համար զգալի ռիսկեր են պարունակում:

Ռազմական կարողությունների ապահովման գործում առանձնացված կարևորություն ունի ռազմավարական պլանավորման գործընթացը: Ընդհանուր առմամբ, ռազմավարական պլանավորման ամբողջականությունը ապահովում է այնպիսի գործընթացների սերտ փոխկապվածությունամբ, ինչպիսիք են՝ գերակա (գլխավոր) ռազմավարության որոշումը, այդ ռազմավարության իրացման համար անհրաժեշտ ծրագրերի ու պլանների մշակումը, ընթացիկ որոշումների ընդունման և իրագործման միջոցով նախատեսված միջոցառումների իրականացումը¹⁶⁹: Ռազմավարական պլանավորումը ենթադրում է նաև կազմակերպչական, կառուցվածքային պլանավորում և մշակում, մատնանշված խնդիրներին համահունչ համապատասխան ծրագրերի մշակում և դրանց վերլուծություն: Ընդհանրապես, Պաշտպանության ռազմավարական վերանայման շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարության կառուցվածքը ենթարկվել է բարեփոխումների, որոնց շրջանակներում շարունակվում են պլանավորումը, կազմակերպումը, կառավարումը և վերահսկողությունը հետևյալ ոլորտներում.

1. պաշտպանական քաղաքականության ձևավորում և պլանավորում,
2. միջազգային պաշտպանական համագործակցություն,
3. ռազմական կրթություն,
4. անձնակազմի կառավարում,
5. նյութատեխնիկական ապահովում, համալրում, ձեռքբերում և արդիականացում,
6. ֆինանսական միջոցների կառավարում,

¹⁶⁹ Խաչատուրով Յու.Գ., Ռազմավարական պլանավորման համակարգի զարգացման հարցի շուրջ // ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվան ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2015, հ.մ. 3 (85), էջ 24

7. ռազմական արդյունաբերություն,

8. հասարակայնության հետկապեր և տեղեկատվական ապահովում¹⁷⁰:

Պաշտպանության ռազմավարական վերանայումը Հայաստանի Հանրապետությունում սկիզբ առավ և ընթանում է փուլային բաժանումներով: Առաջին ՊՌՎ-ն կատարվեց 2008-2010թթ.¹⁷¹ արդյունքում ընդունելով ՀՀ զինված ուժերի 2011–2015թթ. զարգացման միջնաժամկետ ծրագիրը, իսկ 2011թ. մայիս ամսին հրապարակվեց հանրային զեկույց՝ ՊՌՎ արդյունքների վերաբերյալ¹⁷²: ՀՀ նախագահի 2013թ. դեկտեմբերի 5-ի կարգադրությամբ պաշտոնապես մեկնարկեց Պաշտպանության ռազմավարական վերանայման երկրորդ միջգերատեսչական գործընթացը¹⁷³:

Պաշտպանական վերափոխումների ուղորտում՝ Հայաստանի շուրջ ձևավորված անվտանգության միջավայրից բխող ռազմական բնույթի սպառնալիքների չեզոքացմանն ունակ զինված ուժերի պլանային զարգացումն ապահովելու համար մշակվել է ՀՀ զինված ուժերի 2016–2020թթ. զարգացման պլանը, ինչպես նաև խելամիտ կերպով պլանավորվել են անհրաժեշտ ֆինանսական ու նյութական ռեսուրսները¹⁷⁴: Չարգացման պլանի նպատակն է ապահովել Հայաստանի զինված ուժերի երկարաժամկետ և կայուն զարգացումը՝ հոսսալի պաշտպանական կարողության, վերակառուցման և արդիականացման ու ռազմական ներգրավման միջոցով՝ երկրի դեմ ուղղված առկա և հավանական ռազմական սպառնալիքների կանխման, կասեցման ու չեզոքացման համարժեք կարողությունների և ռեսուրսների ստեղծմամբ ու արդյունավետ կիրառմամբ: Չարգացման պլանի խնդիրն է զինված ուժերի պատրաստականության, ինչպես նաև կառուցվածքի, կազմի ու թվաքանակի, սպառազինության և ռազմական տեխնիկայի

¹⁷⁰ ՀՀ պաշտպանության ռազմավարական վերանայում 2011-2015թթ., հանրային օգտագործման համար, <http://www.mil.am/media/2015/07/832.pdf>

¹⁷¹ Տոնոյան Դ.Է., ՀՀ պաշտպանության ռազմավարական վերանայման սզկբունքներն ու մեթոդները // ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվան ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2015, հմ. 3 (85), էջ 31

¹⁷² ՀՀ նախագահի 2013թ. դեկտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության Պաշտպանության ռազմավարական վերանայման գործընթացը համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի ստեղծելու մասին» թիվ ՆԿ-218-Ն կարգադրությունը, ՀՀ ՊՏ 2013/66, 05.12.2013

¹⁷³ Օհանյան Ս.Մ., ՀՀ Պաշտպանության ռազմավարական վերանայման էությունը և նպատակները // ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվան ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2015, հմ. 3 (85), էջ 24

քանակական ու որակական համապատասխանեցումը առկա խնդիրների կատարմանը՝ հաշվի առնելով ժողովրդագրական, ռազմատեխնիկական հնարավորությունները և պայմանները:

Չհնված ուժերի զարգացման պլանի հիմնական էությունը հանգում է ռազմական (մարտական) գործողությունների վարման ձևերի ու եղանակների փոփոխությանը՝ «խելամիտ պաշտպանության» ձևավորմամբ: Այս նոր մոտեցումը ենթադրում է ուժային և ոչ ուժային զսպման համակարգի օգտագործում, իսկ զսպման ձախողման դեպքում՝ զբաղեցրած դիրքերի համառ պաշտպանության համատեղում ռազմական գործողությունները հակառակորդի տարածք տեղափոխելու հետ: Տվյալ խնդիրը պետք է հանձնարարվի փոքր ուժերով մեծ խնդիրների կատարմանն ունակ ստորաբաժանումներին (ուժեղացնելով գումարտակ, վաշտ/մարտկոց օղակը), որոնք, ղեկավարվելով «Հրամանատրում առաջադրանքի միջոցով» սկզբունքով, ի գործ կլինեն վարել ապակենտրոնացված ու տարատեղված մարտական գործողություններ:

Նման հիմքային փաստաթղթի մշակման արդիականությունը նախ պայմանավորված է աշխարհում տեղի ունեցող քաղաքական, ռազմաքաղաքական, ռազմատնտեսական ու ռազմական գործընթացներով, պատերազմի բնույթի փոփոխմամբ, դրա վարման նոր եղանակների առաջացմամբ, որոնք հայկական զինված ուժերին որակական ու քանակական նոր չափանիշներ են առաջադրում: Մյուս կողմից, վերջին տարիներին Ադրբեյջանի՝ տարածաշրջանում ուժերի հաշվեկշիռն իր օգտին խախտելու նպատակով իր ռազմական ներուժի շարունակական մեծացումը պահանջում է, որ Հայաստանի զինված ուժերի կարողությունները (այդ թվում՝ անհամաչափ), մարտական պատրաստականությունը, տեխնիկական ու տեխնոլոգիական հագեցվածությունը գտնվեն բավարարման արդյակի վրա:

Ռազմավարական վերանայման իրականացված թվով 5 փուլերը ներառել են Հայաստանի առջև ծառացած ներկա ու ապագա ռազմական սպառնալիքների բացահայտումն ու գնահատումը, իրավիճակի զարգացման սցենարների մշակումն ու խաղարկումը, զինված ուժերի խնդիրների հստակեցումը, անհրաժեշտ ռազմական կարողությունների

ալլ անավորումը և այս ամենով հանդերձ՝ ռազմական ագրեսիան անդրադարձնելու և ունակ դինամիկ զորային կառույցի ձևավորումը: Այդ փուլերի ամփոփ նկարագիրը վկայում է, որ իրականում Պաշտպանության ռազմավարական վերանայման գործընթացը ներառում է ինչպես պաշտպանական քաղաքականության մշակումը, այնպես էլ ռազմական ռազմավարության ձևավորումը և ավարտվում է երկրի պաշտպանության ալլ անավորմամբ¹⁷⁴:

Ռազմավարական վերանայման առանձին փուլերին ակտիվ ներգրավվել են Յայաստանի Յանրապետության գիտակրթական շրջանակները, խորհրդակցություններ են անցկացվել Յայաստանի դաշնակից ու գործընկեր պետությունների, միջազգային կազմակերպությունների հետ, օգտագործվել են վերջիններիս փորձագիտական ու խորհրդատվական օժանդակությունը: ՊՌՎ գործընթացում կիրառվել են ռազմաքաղաքական նկատառումների համախմբեր, որոնք օգտագործվեցին պաշտպանական առաջնահերթությունները սահմանելու համար: Այդ առաջնահերթություններն այնուհետև մեծ նշանակություն ունեցան զինված ուժերի առաքելությունները, խնդիրները և պատրաստականությունը սահմանելու համար:

Անցած տարիների փորձը վկայում է, որ Պաշտպանության ռազմավարական վերանայումը թեև չի հանգեցրել զորային կառույցի մեծ փոփոխությունների, սակայն զգալի արդյունքներ են գրանցվել զինված ուժերի կառավարման, օպերատիվ և վարչական ընթացակարգերի, անձնակազմի կառավարման համակարգի ինքնազնադատման առումով և դրանց արդյունքում ընդունել սպառազինությունն ու ռազմական տեխնիկան, ենթակառույցները օպտիմալացնելու մասին որոշումներ: Կապի և ԱԿՅ ոլորտում միջազգային համագործակցությունն ու ղղորդվել է պաշտպանված կապի ցանցերի ստեղծմանը, զորավարժությունների միջոցով փոխգործունակության ամրապնդմանը և կիբեռանվտանգության զարգացմանը: Բուժապահովման ոլորտում առաջնահերթություն է եղել ԻՄԵԴՍ

¹⁷⁴ Այվազյան Լ.Գ., Պաշտպանության ռազմավարական վերանայումը՝ որպես պաշտպանության ալլ անավորման կարևոր քաղաքական // ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվան ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2015, հմ. 3 (85), էջ 57-58

դաշտային հոսափտալը ամբողջական օպերատիվ կիրառելիության հասցնելը, զինված ուժերում մարտական բուժօգնության կարողությունների զարգացումը, սանհրահանգիչների ու բուժականների վերապատրաստումը: Միջազգային ռազմատեխնիկական համագործակցության (առաջին հերթին՝ ՌԴ-ի հետ) շրջանակներում շարունակվել է ՀՀ Սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման պետական ծրագրի իրականացումը, որի շնորհիվ պաշտպանական կառույցը համալրվել է արդիական արտադրատեսակներով:

Հետևողականորեն կատարելագործվում է նաև առաջնագծում մարտական հերթապահության գործընթացը: Մասնավորապես, ինժեներական կահավորման և տեխնիկական միջոցների ներդրման արդյունքում բարելավվել են մարտական հերթապահության կազմակերպման պայմանները: Վաղօրոք հայտնաբերման, ազդարարման, դիտարկման ու թիրախորոշման նոր համակարգերի և ընթացակարգերի, պայթյունային ու ոչ պայթյունային ինժեներական արգելափակոցների, ամրաշինական կառույցների և ծածուկ տեղաշարժի ճանապարհների (ուղիների, կաճանների) գործարկման արդյունքում բարձրացել է մարտական հերթապահություն իրականացնող անձնակազմի պաշտպանվածության մակարդակը: Այս ամենով հանդերձ երաշխավորվել է հակառակորդի կողմից դիվերսիոն-հետախուզական խմբերի գործողությունների կանխարգելումը, շփման գծում հրադարարի ռեժիմի պարտադրումը, հայկական կողմի դիրքերի և բնակավայրերի անվտանգության ապահովումը¹⁷⁵:

Հայաստանի ռազմական անվտանգության ապահովման համակարգում մեծ դեր է հատկացվում հետախուզությանը: Հանդիսանալով ճգնաժամերի և բախումների նախագգուշացման ու կարգավորման կարևոր գործիք՝ այն կոչված է ժամանակին բացահայտել

¹⁷⁵ Վերջին տարիների ընթացքում խիստակտիվացել է ինտերբեջանական կողմի դիվերսիոն-հետախուզական գործողությունները, մասնավորապես, Արցախյան գործերի շփման գծում այդպիսի գործողություններ /երկկողմանի մարդկային կորուստներով/ արձանագրվել են 2016թ. մարտի 11-ին, 2015թ. դեկտեմբերի 19-ին, հոկտեմբերի 10-ին, օգոստոսի 12-ին, ապրիլի 25-ին, ապրիլի 21-ին, ապրիլի 3-ին, ապրիլի 2-ին, մարտի 21-ին, մարտի 19-ին, մարտի 4-ին, մարտի 2-ին, հունվարի 12-ին, հունվարի 11-ին և այլն: ՀՀ և ԼՂՀ զինված ուժերի առաջապահ ստորաբաժանումների կողմից ժամանակին բացահայտվել և վնասագերծվել են հակառակորդի նմանատիպ բոլոր գործողությունները:

և երկրի բարձրագույն ռազմաքաղաքական ղեկավարությանը ապահովել ազգային անվտանգության սպառնալիքների վերաբերյալ հավաստի և ճշգրտված տվյալներով¹⁷⁶: Դրա համար անհրաժեշտ է ոչ միայն տեխնիկական միջոցների և մասնագետների առկայություն, հետախուզական տարբեր ծառայությունների ու ստորաբաժանումների սերտ համագործակցություն, այլև քաղաքական և ռազմական ղեկավարության կողմից մշտական ուշադրության ցուցաբերում հետախուզության ու դրա խնդիրների նկատմամբ:

Ռազմական քաղաքականության և անվտանգության հուսալի համակարգի ապահովումը բարդ ու համարժեք նյութական մեծ միջոցներ պահանջող գործընթաց է: Պաշտպանությանը հատկացվող միջոցները պետք է ամբողջությամբ ապահովեն բանակի մարտական ու զորահավաքային պատրաստությունը, պահեստային ուժերի ու պաշարների ստեղծումը: Հայաստանի տնտեսական կարողությունները այդքան էլ թույլ չեն տալիս իրականացնել պաշտպանության բնագավառի արմատական, անհրաժեշտ ծավալների վերազինում և վերակառուցում: Իր տնտեսական ցուցանիշներով Հայաստանը զգալիորեն զիջում է տարածաշրջանի երկրներին ու հավանական հակառակորդներին: Իսկ առանց համապատասխան ֆինանսական հատկացումների անհնար է բանակի լիակատար վերազինումն ու ուժերի հաշվեկշռի պահպանումը: Սակայն բանակի վերազինումը և վերակառուցումը չի կարելի հետաձգել մինչև լավ ժամանակները՝ տնտեսական վերածնունդը: Ռազմական հավասարակշռությունը հոգուտիրեն խախտող հակառակորդը, անմիջապես օգտագործելով պահը, կդիմի վճռական գործողությունների: Ավելին, եթե ֆինանսական առումով անհրաժեշտի ու բավարարի միջև տարբերություն է առաջանում, ապա նման իրավիճակը անմիջականորեն անդրադառնում է պետության թե արտաքին, թե ռազմական քաղաքականության վրա, որի պայմաններում քաղաքականության նպատակները

¹⁷⁶ Общая теория национальной безопасности / Под общ. ред. Прохожева А.А., М., 2005, стр. 51-54

համապատասխանեցվում են դրանց իրականացման համար անհրաժեշտ միջինացված չափագծին¹⁷⁷:

Երկրի պաշտպանությանը, գինված ուժերին հատկացվող միջոցները պետք է ոչ միայն ապահովեն բանակի կենսագործունեությանը, այլ նպաստեն վերջինիս կատարելագործմանն ու որակական զարգացմանը: Իհարկե, խոսքը այստեղ բնավ էլ չի գնում այն մասին, որ ընդօրինակվի այս կամ այն երկրում կիրառվող կարգը: Պարզապես, ծառացած խնդիրները լուծելիս, նմանատիպ իրավիճակներում գտնվող երկրները կարող են ձեռնարկել քայլեր, որոնք պետք է համապատասխանեն տվյալ երկրի կոնկրետ պայմաններին ու առանձնահատկություններին, օժանդակեն գինված ուժերի մարտական հզորության բարձրացմանը: Ժամանակակից, առաջնակարգ բանակ ունեցող երկրների փորձը ցույց է տալիս, որ առանձնակազմի պահպանման համար ծախսերը չեն գերազանցում ռազմական ուժերի բյուջեի 30%-ը: Այդքան էլ ծախսվում է մարտական պատրաստության և օպերատիվ-տնտեսական գործունեության վրա: Իսկ ծախսերի 35-40%-ը գնում է սպառազինության գնման և գիտահետազոտական ու փորձարարական աշխատանքի վրա¹⁷⁸: Հավանաբար ռազմական ծախսերի նման կառուցվածքին՝ որոշակի ճշգրտումներով, պետք է ձգտի նաև Հայաստանի Հանրապետությունը:

Պաշտպանության ռազմավարական վերանայման ընթացքում նախաձեռնվել են նաև բարեփոխումներ ռազմարդյունաբերական համալիրում՝ մշակելով համապատասխան հայեցակարգային փաստաթղթեր: Դրանք անդրադառնում են երկու հիմնական ենթաուղորտների. 1. հանրային և մասնավոր ընկերությունների կոնսորցիումի ստեղծում և 2. քաղաքացիական օգտագործման արտադրանքի արտադրության խրախուսում՝ ռազմական արդյունաբերությանն օժանդակելու համար ֆինանսների կուտակման նպատակով: Ներկայացվում են նաև հարկման, օտարման մեխանիզմներին և վարկավորմանն օժանդակելու և վերաբերող օրենսդրական

¹⁷⁷ Ղևոնդյան Ա., Ազգային շահերի հիմնահարցը Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման առաջնային միջավայրում, Եր., 2011, էջ 88

¹⁷⁸ Останков В.И., Военная безопасность России в начале 21-ого столетия, М., Издательский дом ВЕЧЕ, 2007, стр. 226-227

փոփոխություններ: Առաջնահերթ ֆինանսավորվելու են երկու
ուղղություններ՝ նոր տեխնոլոգիաների ներկրումը և
քաղաքացիական նշանակություն արտադրանքը¹⁷⁹:

Մարտական պատրաստության ոլորտում անձնակազմը և
ստորաբաժանումները վերապատրաստվել են դասական, ոչ դասական և
խաղաղապահ մարտական գործողությունների պլանավորման,
կազմակերպման ու ղեկավարման, ինչպես նաև հումանիտար
ականագերծման, ինքնաշեն պայթուցիկ սարքերի դեմ պայքարի և
հատուկ նշանակություն զորքերի գործողությունների հարցերում:

Անձնակազմի կառավարման ոլորտում հիմնական
ուշադրությունը հատկացվել է անձնակազմի հավաքագրման,
պաշտոնական ու կոչումային առաջխաղացման, որակավորման ու
ատեստավորման, ծառայության մեջ պահելու, սոցիալական ապահովման,
զորացրման ու թողնակավորման ընթացակարգերի բարելավմանը, ինչպես
նաև պրոֆեսիոնալ սերժանտների ավելի բարձրաստիճան օղակի
կազմավորմանը: Ուսումնասիրվել է այլ երկրների փորձը և մշակվել
են պահեստագորայինների պատրաստության նոր մոտեցումներ՝ նրանց
պատրաստության համար հատկացվել իք ռեսուրսների հիման վրա:

Ռազմական համակարգի կատարելագործման նպատակն է ամբողջ
պաշտպանական համակարգի նոր որակական հատկանիշների ձևավորումը
և երկրի անվտանգության երաշխավորված ապահովումը, իսկ կրթական
համակարգի բարեփոխումը ծառայում է մարդկանց կրթական մակարդակի
բարձրացման, ներդաշնակորեն զարգացած, սոցիալական ակտիվ,
ստեղծագործ անձնավորության (զինծառայողի) ձևավորման
նպատակներին¹⁸⁰: Ռազմական կրթության ոլորտում ջանքերը
կենտրոնացվել են ինչպես անձնակազմի՝ արտերկրում ուսանելու,
այնպես էլ առաջնահերթ կարգով սեփական կրթական համակարգի
զարգացման վրա՝ հրամանատարաշտաբային և սպայական կարգերի
որակավորման բարձրացման դասընթացների կատարելագործման,

¹⁷⁹ Լրացուցիչ տես «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ օրենքը, ՀՀ
ՊՏ 2015/23, 22.04.2015

¹⁸⁰ Օհանյան Ս.Մ., Ռազմական կրթության համակարգի զարգացումը՝ որպես ՀՀ
պաշտպանական համակարգի արդյունավետության մեծացման գործոն // ՀՀ ՊՆ
Դ.Կանայանի անվան ԱՌՀԻ-ի «Հայ կական բանակ» ռազմագիտական հանդես, 2012, հմ. 3 (73),
Էջ 9

Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի ստեղծման (ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվան ԱՌՀԻ-ի կերպավորումամբ) և հեռավար ուսուցման հնարավորություններին ձևավորման ուղղությամբ: 2012թ. մարտի 7-ի թիվ 9 արձանագրությամբ ՀՀ կառավարությունը հաստատել է ՀՀ ռազմակրթական հայեցակարգը և սպայական/ենթասպայական կազմերի ճանապարհային քարտեզը: Հայեցակարգը օգտագործվում է որպես համընդհանուր ուղեցույց՝ ամբողջ կրթական համակարգի, ներառյալ՝ զինված ուժերի տարբեր զորատեսակների ուսումնական ծրագրերի վերանայման, ինչպես նաև նախորոշված չափորոշիչների կատարման աստիճանը ստուգելու և գնահատման մեխանիզմ մշակելու համար¹⁸¹:

Միջգերատեսչական ձևաչափով կրթական ծրագրերի իրականացմամբ պաշտպանական-անվտանգային համակարգի ղեկավար կադրերի պատրաստումը և պետության ռազմաքաղաքական ղեկավարության համար պաշտպանական անվտանգային ոլորտում հետազոտություններին իրականացումը՝ գնահատումների և առաջարկություններին ներկայացմամբ, էական նշանակություն ունեն պետության անվտանգության ապահովմանն ուղղված համապետական քաղաքականության արդյունավետության մակարդակի բարձրացման տեսանկյունից: Այս խնդրի լուծմանն է միտված ՀՀ ՊՆ Ազգային ռազմավարական հետազոտություններին ինստիտուտի (ԱՌՀԻ) հիման վրա ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի ստեղծման ծրագիրը¹⁸²: Համալսարանի ստեղծման ծրագրի առաջին փուլը ՀՀ ՊՆ կազմում Ազգային ռազմավարական հետազոտություններին ինստիտուտի ստեղծումն էր: Այն ըստ էության Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի հետազոտական բաղադրիչն է, ինչպես նաև դրամավոր հենքը և կազմակերպական առանցքը: ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանը պաշտոնապես բացվել է 2016թ. հունվարի 28-ին՝ Հայոց բանակի կազմավորման 24-ամյակի օրը, որի

¹⁸¹ ՀՀ կառավարության 2012 թվականի մարտի 7-ի նիստում ՀՀ ռազմական կրթության հայեցակարգը, սպայական կազմի պատրաստության փուլերի ճանապարհային քարտեզը և հայեցակարգի ապահովման միջոցառումների ծրագիրը հավանության արժանացան և հաստատվեցին ՀՀ կառավարության թիվ 9 արձանագրային որոշմամբ:

¹⁸² ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի «Պաշտպանական ազգային հետազոտական համալսարան» պետական հիմնարկ ստեղծելու մասին» թիվ 1536-Ն որոշումը, ՀՀ ՊՏ 2016/3, 18.01.2016

հանդիսավոր արարողությանը մասնակցել են ՀՀ նախագահ, զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար Սերժ Սարգսյանը, ՀՀ և ԼՂՀ պաշտպանության նախարարները, ՀՀ զինված ուժերի բարձրագույն ղեկավար կազմը, գերատեսչության ղեկավարներ, ինչպես նաև Հայաստանում հավատարմագրված դեսպաններ, օտարերկրյա բարձրաստիճանի իշխաններ, գիտության և կրթության ոլորտի ներկայացուցիչներ¹⁸³։ Այստեղ տեղին է նշել նաև ոլորտի մասնագետներից Վ.Մարգարյանի և Ա.Աթանեսյանի արդարացի դիտարկումը, որ, իսկապես, որ ՀՀ պաշտպանական կրթության համակարգը, լինելով ՀՀ ընդհանուր կրթական համակարգի մաս, նույնպես հիմնվում է Բոլոնիայի գործընթացի վրա, սակայն արդի շրջանում չկան պաշտպանական-անվտանգային ոլորտում ռազմավարական որոշումներ կայացնող կադրերի պատրաստմամբ զբաղվող, գիտակրթական ծրագրեր իրականացնող հաստատություններ¹⁸⁴։

ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում այդպիսի համալսարանական կառույցի նախագիծը մշակվել է քաղաքական գիտության ոլորտի դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդական, գեներալ-լեյտենանտ Հայկ Քոթանջյանի՝ ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանում ակադեմիական ստաժավորման ընթացքում՝ 2003-2004թթ. հետազոտական ծրագրի շրջանակներում, և պաշտպանվել նրա ակադեմիական խորհրդում¹⁸⁵։ Ընդ որում, Համալսարանի նախագիծը՝ որպես «խելացի ուժի» միասնական հայամտերիկյան կիրառմանը միտված քայլ, մշակվել է ԱՄՆ-ի ՊԱՀ-ի գիտության գծով նախկին առաջին պրոռեկտոր, ՆԱՏՕ-ի Գործընկերության հանուն խաղաղության Կոնսորցիումի

¹⁸³ Բացվեց Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանը, 28.01.2016թ., <http://armef.com/hy/news/meng/bacvec-pashtpanakan-azgayin-hetazotakan-hamalsarany/>

¹⁸⁴ Մարգարյան Վ.Հ., Աթանեսյան Ա.Վ., Ռազմավարական պաշտպանական-անվտանգային կրթության ազգային ինստիտուտը՝ որպես ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի գիտակրթական բաղադրիչ // ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի աշխատանքային տետրեր, 2015, հմ. 3 (35), էջ 41

¹⁸⁵ Լրացուցիչ տես Քոթանջյան Հ.Ս., Հայաստանի պաշտպանության գիտակրթական համակարգի բարձրագույն բաղադրատարրը. Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի փուլային կերպավորումը Պաշտպանական ազգային համալսարանի // ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2010, հմ. 1 (63), էջ 9-18

պաշտպանական կրթությունն զարգացման ծրագրի հայկական հատվածի ամերիկյան համանախագահ դոկտոր Ջեյմս Քիզլի ակադեմիական խորհրդատվությունն են երոզվում:

2004-2014թթ. Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի նախագիծը լրամշակվել ու փորձաքննվել է ՀՀ և ԱՄՆ-ի առաջատար գիտակրթական ու պետական հաստատություններում, մասնավորապես՝ ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանի Ռազմավարական կիրառական ուսուցման կենտրոնում, Տեխնոլոգիաների և ազգային անվտանգության քաղաքականության կենտրոնում, Միջազգային անվտանգային հարաբերությունների քոլեջում, Հարվարդի համալսարանում, Դիվանագիտության և իրավունքի Ֆլետչերի դպրոցում, ՀՀ կրթության և գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեում, ՀՀ Մասնագիտական կրթության ու օրակի ապահովման ազգային կենտրոնում¹⁸⁶:

ՀՀ պաշտպանության կազմակերպման ոլորտում առաջընթաց է արձանագրվել նաև քաղաքացիական վերահսկողությունն ու ժեղացնել ու հասարակության հետ համագործակցել ու հարցերում: 2015 թվականի և անցած տարիների ընթացքում պաշտպանության համակարգում ջանքերի կենտրոնացման գլխավոր ուղղություններից էր արդարության սկզբունքների, բարեվարքության ամրապնդմանը և կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված աշխատանքը: Հիմնվելով նախորդ տարիների ձեռքբերումների վրա՝ այս գործունեությունը պլանային հիմքերի վրա դրվեց նույնանուն ծրագրով ամրագրված միջոցառումների իրականացմամբ, պաշտպանության նախարարության մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնի ու պաշտպանության նախարարի համապատասխան օգնականի հաստիքի ստեղծումով¹⁸⁷: Այս ամենի արդյունքում հաջողվել է ձևավորել պաշտոնական դիրքը

¹⁸⁶ Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ օրինակով ստեղծվում է Պաշտպանական ազգային հետազոտական համալսարան, 22.12.2015թ., <https://armenpress.am/arm/news/830522/hh-um-amn-orinakov-stextsvum-e-pashtpanakan-azgayin-hetazotakan.html>

¹⁸⁷ ՀՀ պաշտպանության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոն ստեղծելու և կենտրոնի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 1091 հրամանը

չարաշահելը, կաշառք տալն ու վերցնելը ամոթալի և անպատվաբեր դարձնող առավել գիտակցական մթնոլորտ:

ՀՀ պաշտպանական գերատեսչության համակարգում ներդրվել են «Զինվորական առաջնորդություն, զինվորական կոլեկտիվի արդյունավետ կառավարման հիմնախնդիրներ» և «Զինված ուժերում անձնակազմի՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունները» խորագրերով ձեռնարկները: ՀՀ ՁՈւ բոլոր ստորաբաժանումներում և ռազմաուսումնական հաստատություններում պարբերաբար անցկացվում են այդ ձեռնարկների դրույթների ուսուցման դասախոսություններ: ՀՀ ՊՆ ներկայացուցիչների գործունե մասնակցությամբ հրատարակվել է «Բարեվարքի ամրապնդումը և կոռուպցիայի նվազեցումը պաշտպանական ոլորտում» միջազգային լավագույն փորձի օրինակների ժողովածուն, որն առաքվել է հանրապետության բոլոր ռազմակրթական հաստատություններ և զորամասեր: Բազմաթիվ հանրակրթական դպրոցներում նախազորակոչային տարիքի երիտասարդների համար իրականացվում է «Ռազմահոգեբանական և սոցիալ-իրավական պատրաստության ծրագիր», որի նպատակն է ապագա զինակոչիկներին ուսուցանել սթրեսի կառավարման, կոնֆլիկտների հաղթահարման, սոցիալական միջավայրի փոփոխության հետ համակերպվելու հարցերը, ինչպես նաև ծանոթացնել զինվորական ծառայության ընթացքում իրենց իրավունքների և պարտականությունների շրջանակներին:

Բացի վերոնշյալից, Պաշտպանության ռազմավարական վերանայման գործընթացում տեղ են գտել նաև հասարակության իրազեկման միջոցառումներ: Կարևոր քայլ է կատարվել հասարակական կազմակերպություններին ընդառաջ և հասարակության հանդեպ թափանցիկության ապահովման ուղղությամբ: ՀՀ պաշտպանության նախարարին կից գործող՝ Հասարակական խորհուրդն անցած տարիների ընթացքում իր հերթին ամրապնդել է նախարարության և

պաշտպանությունն առնչվող հարցերով մասնագիտացված հասարակական կազմակերպությունների հետ կապը¹⁸⁸:

Բանակ-հասարակությունն գործակցության համատեքստում արժևորվում է նաև այն կարևոր հանգամանքը, որ ռազմական անվտանգության ապահովման համակարգի տարրերը կկատարեն իրենց առջև կանգնած բոլոր խնդիրները, եթե միասնական լինի հասարակության վերաբերմունքը գինված ուժերի և երկրի պաշտպանության խնդիրների նկատմամբ, ապահովվի համազգային հարգանքը գինվորականի նկատմամբ, միասնաբար լուծվեն հայրենասիրական դաստիարակության ոլորտում առկա խնդիրները, Հայրենիքի պաշտպանությունը դիտվի որպես պետության և յուրաքանչյուր հայի սրբազան պարտականությունը: Անվտանգության և պաշտպանության հարցերի վերաբերյալ երկրում պետք է հաստատվի ազգային միասնականություն, համաձայնություն: Առանց նման համաձայնության ու համազգային ջանքերի Հայաստանի անվտանգությունը լիարժեք երաշխավորող ռազմական կազմավորման համակարգ ունենալը կդառնա անիրական՝ կասկածի տակ դնելով նույնիսկ Հայոց պետականության հեռանկարը:

Հանրային օգտագործման համար ներկայացված ՀՀ պաշտպանության ռազմավարական վերանայման 2011-2015թթ. ամփոփման մեջ արդարացիորեն և հիմնավորված եզրահանգում է ներկայացվում, որ նկատի ունենալով Հայաստանի շուրջ ձևավորվող ռազմաքաղաքական միտումները, ինչպես նաև գինված ուժերի բարեփոխման օբյեկտիվ անհրաժեշտությունը, ՀՀ պաշտպանական գերատեսչությունը Պաշտպանության ռազմավարական վերանայման գործընթացը դիտարկում է իր հիմնական առաջնահերթություններին մեկը, որով կապահովվի տվյալ գործընթացի շարունակականությունն ու ՊՌՎ արդյունքների լիարժեք իրագործումը: Պաշտպանության ռազմավարական վերանայումը հնարավորություն է ընձեռնել ստեղծելու այնպիսի պաշտպանական համակարգ, որն ունակ կլինի

¹⁸⁸ ՀՀ պաշտպանության նախարարի 2009 թվականի օգոստոսի 7-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհրդի նոր կանոնադրությունը, հասարակական խորհրդի անդամների և նախագահի ընտրությունների արդյունքները հաստատելու մասին» թիվ 862 հրամանը

արդյո՞ւն նավետորեն դիմակայել ու առկա և ակնկալ վող անվտանգության ռիսկերին ու մարտահրավերներին¹⁸⁹:

Այսպիսով, կարելի է ամփոփել, որ ՀՀ Պաշտպանության ռազմավարության վերանայման գործընթացի շրջանակներում իրագործվել են բազմաթիվ ու բազմապիսի միջոցառումներ՝ ուղղված զինված ուժերի պատրաստականության մակարդակը, կառուցվածքը, սպառազինությունը և ռազմական տեխնիկան առկա խնդիրներին համապատասխանեցնել ուն՝ շեշտը դնելով որակական, այլ ոչ թեքանակական ցացանիշներին հասնելու վրա և ձգտելով զինված ուժերին հաղորդել «խելացի ուժերի» հատկանիշներ: Դրանով իսկ պետք է արձանագրել, որ պաշտպանական բարեփոխումների համատեքստում իրականացվել է նպատակադրված քաղաքականություն, այն է՝ Պաշտպանության ռազմավարական վերանայման միջոցով ապահովել առկա սպառնալիքների բացահայտման, դրանց դիմագրավման համար անհրաժեշտ ռազմավարության մշակման, պահանջվող կարողությունների պլանավորման, ծրագրավորման և բյուջետավորման աշխատանքների տրամաբանական կապը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ զինված ուժերում և, ընդհանրապես, երկրի ռազմական անվտանգության համակարգում ներկայումս ընթանում են հիմնարար ու ակտիվ բարեփոխումներ, որոնց առաջնահերթություններն են՝ զինված ուժերում գործող ռազմական չափանիշների (ստանդարտների) կատարելագործումը, անվտանգության ապահովման առաջատար համակարգերի և դաշնակից երկրների (ՀԱՊԿ) պաշտպանական համակարգերի ու զինված ուժերի հետ համատեղելիության,

¹⁸⁹ ՀՀ պաշտպանության ռազմավարական վերանայում 2011-2015թթ., հանրային օգտագործման համար, <http://www.mil.am/media/2015/07/832.pdf>

փոխգործակցության զարգացումն ազգային խնդիրներին ծառայեցնելը և միջազգային առաքելությանը ունենալու իրականացնելը:

Պաշտպանական արդի բարեփոխումներն իրականացվում են զինված ուժերի նյութատեխնիկական հնարավորությունների, կառավարման կարողությունների ու կազմակերպչական հմտությունների զարգացման ուղղությամբ, որոնք հիմնականում նպատակ են հետապնդում բարձրացնել զորքերի մարտունակությունն ու կատարելագործել երկրի պաշտպանունակությունը: Բարեփոխումների անհրաժեշտ նախապայմաններից է անձնակազմի քանաքանակական և որակական ցուցանիշների համամասնական ու փոխկապակցված զարգացումը, որին նպաստում է նաև պաշտպանության համակարգում հասարակական լայն շերտերի ընդգրկումը և զինծառայողների ինքնադրսևորման ու առաջխաղացման համար համապատասխան հնարավորությունների ստեղծումը:

1. Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական համակարգը բաղկացած է քաղաքական, տնտեսական, դիվանագիտական, ինչպես նաև ռազմական բաղադրիչներից, որոնք իրենց առանձին տարրերով սերտորեն փոխկապակցված են և շատ դեպքում փոխլրացնում են միմյանց: Հայաստանի Հանրապետությունը, պաշտպանական համակարգի (զինված ուժերի) կազմավորումից մինչև օրս, հակառակորդի քանակական առավելությանը հակադրում է որակական գերազանցությունը: Ապագայի տեսլականում պետք է ձգտել ողջ զինվորական և, ընդհանրապես, ռազմական անվտանգության ապահովման համակարգի այնպիսի որակական առավելության, որը հնարավորություն կընձեռի 21-րդ դարում ապահովել Հայաստանի ռազմական քաղաքականության և ռազմական անվտանգության ապահովման համակարգի գերազանցությունը տարածաշրջանում:

2. Հարավային Կովկասի տարածաշրջանում տիրող ռազմաքաղաքական իրավիճակը, Ադրբեյջանի կողմից հնչեցվող ռազմատենչ հայտարարություններից բացի՝ սպառազինության և ռազմական տեխնիկայի նոր քանակի ձեռքբերումները և կնքված պայմանագրերը, նաև հակառակորդի դիվերսիոն-հետախուզական խմբերի գործողությունների նոր մարտավարությունը ստիպում է մշտապես

իրականացնել թե խաղաղ պայմաններում, թե ռազմական գործողությունների վերսկսման դեպքում զինված ուժերի մարտունակության բարձրացման, ոլորտի կառավարման մարմինների և զորամիավորումների պատրաստվածության առավել բարձր մակարդակի ապահովմանն ուղղված զարգացման գործընթացներ (պաշտպանական բարեփոխումներ):

3. Հայաստանի Հանրապետության պաշտպանական բարեփոխումների գերխնդիրը հակառակորդի զինված ուժերի նկատմամբ ՀՀ զինված ուժերի մարտունակության գերազանցության ապահովումն է, զինված ուժերում այնպիսի չափանիշների ստեղծումը և ներդրումը, որոնք լիարժեքորեն կհամապատասխանեն Հայաստանի ազգային անվտանգության առանձնահատկություններին՝ ամբողջությամբ լուծելով ռազմական անվտանգության խնդիրները: Բարեփոխումների արդյունքում միաժամանակ ապահովվում են նաև փոխգործակցելիության անհրաժեշտ հնարավորություններ՝ Հայաստանի միջազգային վարկի և հեղինակության բարձրացմանը համարժեք համաշխարհային անվտանգության երաշխավորման չափաբաժին ստանձնելու համար:

